



<<Ջուր և առողջություն>> արձանագրություն: Հայաստանում
առողջության բարելավում նպատակային ցուցանիշների
սահմանման միջոցով՝ ջրի կայուն կառավարում, անվտանգ խմելու
ջրի մատչելիություն և պատշաճ ջրահեռացում ապահովելու
նպատակով

Տեխնիկական զեկույց, որը պարունակում է Հայաստանում <<Ջուր և
առողջություն>> արձանագրության ներքո նպատակների
սահմանման գործընթացի հետ կապված իրավական,
ինստիտուցիոնալ և նյութաիրավական ասպեկտների ելակետային
վերլուծությունը

Երևան
Մայիս 2014թ.

ԵՐԱՆՏԻՔԻ ԽՈՍՔ

Սույն զեկույցը պատրաստվել է Հայաստանի Հանրապետությունում «Ջուր և առողջություն» արձանագրության իրականացման վերաբերյալ ծրագրի շրջանակում, որը ֆինանսավորել է Ֆինլանդիայի կառավարությունն իր FinWaterWei ծրագրի միջոցով: Միավորված ազգերի կազմակերպության եվրոպական տնտեսական հանձնաժողովը (ՄԱԿ-ի ԵՏՀ), որպես հիմնական իրականացնող կազմակերպություն, օժանդակել է Հայաստանի Հանրապետությանը ծրագրի իրականացման գործում: «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ն համաձայնեցրել է ՀԿ-ների օժանդակությունը և ցուցաբերել կազմակերպչական աջակցություն: Ձեկույցը հիմնված է ավելի վաղ ազգային աշխատանքային խմբի պատրաստած և ծրագրի ղեկավար հանձնախմբի կողմից հաստատված տեխնիկական փաստաթղթի վրա:

Սույն զեկույցի պատրաստմանն օժանդակել են հետևյալ փորձագետները՝
Վոլոդյա Նարինյան (ՀՀ բնապահպանության նախարարություն), ծրագրի համակարգող
Նունե Բակունց (ՀՀ առողջապահության նախարարություն) ծրագրի համակարգող
Էմմա Անախասյան («Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ)
Վիլիկ Սարգսյան (Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան, Հայաստան)
Տիգրան Օգանեզով (ջրային ռեսուրսների կառավարման փորձագետ, Հայաստան)
Սյուզանա Մելիքջանյան (առողջապահության հարցերով փորձագետ, Հայաստան)
Սամվել Մկրտչյան (ջրային ռեսուրսների հարցերով փորձագետ, Հայաստան)
Մեթյու Կահեյն (ՄԱԿ-ի ԵՏՀ առաջատար խորհրդատու)
Ալիշեր Սամաջանով (ՄԱԿ-ի ԵՏՀ, «Ջուր և առողջություն» արձանագրության քարտուղարություն)

Ծրագրի աշխատակազմը ցանկանում է շնորհակալություն հայտնել ԵՄ ջրային նախաձեռնության շրջանակում իրականացվող ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման և ջրամատակարարման ու ջրահեռացման հարցերով ազգային քաղաքականության երկխոսության ղեկավար հանձնախմբի անդամներին՝ զեկույցի վերջնականացման հարցում տրամադրած արժեքավոր մեկնաբանությունների և օժանդակության համար:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

| | |
|-----------|--|
| ԱԱՁ | Ախուրյան-Արաքս Ջրատ |
| ԱԻՆ | Արատակարգ իրավիճակների նախարարություն |
| ԱՀԿ | Առողջապահության համաշխարհային կազմակերպություն |
| ԱՄՆ | Ամերիկայի Միացյալ Նահանգներ |
| ԱՆ | Առողջապահության նախարարություն |
| ԱՊՏ | Առողջապահության պետական տեսչություն |
| ԱՎԾ | Ազգային վիճակագրական ծառայություն |
| ԲՊՏ | Բնապահպանական պետական տեսչություն |
| ԳՆ | Գյուղատնտեսության նախարարություն |
| ԵՄ | Եվրոպական Միություն |
| ԵՋ | Երևան Ջուր |
| ԷԲՌՆ | Էներգետիկայի և բնական ռեսուրսների նախարարություն |
| ԼՋԿ | Լոռի-ջրմուղկոյուղի |
| ԽՍՀՄ | Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն |
| ՀԶՆ | Հազարամյակի զարգացման նպատակներ |
| ՀԾԿՀ | Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով |
| ՀԿ | Հասարակական կազմակերպություն |
| ՀՄԿ | Հիդրոէկրաբանական մոնիտորինգի կենտրոն |
| ՀՀ | Հայաստանի Հանրապետություն |
| ՀՀՄՊԾ | Հայաստանի հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայություն |
| ՀԶԿ | Հայջրմուղկոյուղի |
| ՀՎԿԱԿ | Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն |
| ՀՓԾ | Հայաստանի փրկարարական ծառայություն |
| ՄԱԿ-ի ԵՏՀ | Միավորված ազգերի կազմակերպության եվրոպական տնտեսական հանձնաժողով |
| ՄԱՄՀ | Միավորված ազգերի կազմակերպության Մանկական հիմնադրամ |
| ՆԱ | Նոր Ակունք |
| ՇՄՆՄԿ | Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոնը |
| ՇԶԿ | Շիրակ-ջրմուղկոյուղի |
| ԶԱԽ | Զրի ազգային խորհուրդ |
| ԶՊԿ | Զրային պետական կադաստր |
| ԶՇԴ | Զրի շրջանակային դիրեկտիվ |
| ԶՌԿԳ | Զրային ռեսուրսների կառավարման գործակալություն |

| | |
|------|---|
| ՋՌՔԲ | Ջրային ռեսուրսների քաղաքականության բաժին |
| ՋՏԿԲ | Ջրավազանային տարածքային կառավարման բաժին |
| ՋՏՊԿ | Ջրային տնտեսության պետական կոմիտե |
| ՋՕԸ | Ջրօգտագործողների ընկերություններ |
| ՍԹԱ | Սահմանային թույլատրելի արտանետում |
| ՍՀՁ | Սևան-Հրազդանյան Ջրառ |
| ՎԷՎ | Վերականգնվող էներգիայի վարչություն |
| ՎԶԵԲ | Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ |
| ՎԼՀ | Վեճեր լուծող հանձնաժողով |
| ՏԿՆ | Տարածքային կառավարման նախարարություն |
| ՏՀԶԿ | Տնտեսական համագործակության և զարգացման կազմակերպություն |
| ՓԲԸ | Փակ բաժնետիրական ընկերություն |
| ՖՆ | Ֆինանսների նախարարություն |

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|-----|
| I. Ներածություն..... | 6 |
| II. Ելակետային իրավիճակի վերլուծություն..... | 8 |
| Ա. Մեթոդաբանություն..... | 8 |
| Բ. Օրենսդրական դաշտ | 12 |
| Գ. Ինստիտուցիոնալ շրջանակները | 44 |
| Դ. Մանրամասն վերլուծություն ըստ քսան թիրախային ոլորտների..... | 56 |
| III. Հավելվածներ..... | 162 |

I. Ներածություն

2012թ.-ի սեպտեմբերին Միավորված ազգերի կազմակերպության եվրոպական տնտեսական հանձնաժողովը (ՄԱԿ-ի ԵՏՀ) և Ֆինլանդիայի կառավարությունը ՄԱԿ-ի ԵՏՀ - FinWaterWei¹ ««Ջուր և առողջություն» արձանագրություն: Հայաստանում առողջության բարելավում՝ նպատակային ցուցանիշների սահմանման միջոցով՝ ջրի կայուն կառավարում, անվտանգ խմելու ջրի մատչելիություն և պատշաճ ջրահեռացում ապահովելու նպատակով»» ծրագրի շրջանակում ստորագրեցին համաձայնագիր՝ Հայաստանում «Ջուր և առողջություն» արձանագրության շրջանակում նպատակային ցուցանիշների սահմանման գործընթացին աջակցություն ցուցաբերելու նպատակով: Մույն ծրագիրը բխում էր ԵՄ ջրային նախաձեռնության շրջանակում իրականացվող ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման և ջրամատակարարման և ջրահեռացման հարցերով ազգային քաղաքականության երկխոսությունից (ԵՄՁՆ ԱՔԵ)՝ ՄԱԿ-ի ԵՏՀ-ի հետ՝ որպես Հայաստանում ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման ոլորտում առանցքային գործընկեր: Ծրագրի հիմնական նպատակներից մեկն ուղղված է Հայաստանի Հանրապետության կողմից «Ջուր և առողջություն» արձանագրության վավերացման գործընթացին օժանդակություն ցուցաբերելուն՝ արձանագրության հարցերի շուրջ քաղաքականության երկխոսության և որոշումների կայացման համար ֆորումի ապահովման միջոցով:

Ծրագիրն իրականացվել է Հայաստանի բնապահպանության և առողջապահության նախարարությունների հետ սերտ համագործակցությամբ և տարածքային կառավարման նախարարության մասնակցությամբ: <<Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի>> (ՀԿՀԱԱՇՄ) հասարակական կազմակերպությունը (ՀԿ) խորհրդատվական հանդիպումների միջոցով, նպատակների սահմանման գործընթացի բոլոր փուլերում պատասխանատու է եղել ՀԿ-ների համակարգման գործընթացի համար:

Ծրագիրն առաջնորդվել է Հայաստանում ԵՄՁՆ ԱՔԵ ղեկավար հանձնախմբի կանոնավոր հանդիպումներով, որոնք անցկացվել են ՀՀ բնապահպանության նախարարության ջրային ռեսուրսների կառավարման գործակալության (ՁՌԿԳ) պետի նախագահությամբ: Հանձնախմբի անդամների թվում են ջրային ռեսուրսների կառավարման, ջրամատակարարման և ջրահեռացման, այդ թվում, առողջապահական հարցերով զբաղվող Հայաստանի առանցքային մարմինների/կազմակերպությունների ներկայացուցիչները: Հանդիպումներին

¹ FinWaterWei-ը Ֆինլանդիայի ջրային հատվածի՝ Ընդլայնվող Եվրոպայի նախաձեռնության ներքո ԱԵԿԿԱ երկրներին աջակցության ծրագիրն է: FinWaterWEI ծրագիրը ղեկավարվում է Ֆինլանդիայի արտաքին գործերի նախարարության անունից՝ Ֆինլանդիայի շրջակա միջավայրի ինստիտուտի (SYKE) կողմից (<http://www.environment.fi/default.asp?contentid=405313&lan=EN>)

ներգրավված են եղել նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները: Ջրային ռեսուրսների կառավարման հարցերով զբաղվող դոնորների և միջազգային գործընկեր կազմակերպությունների տարբեր անկախ փորձագետներ և ներկայացուցիչներ նույնպես հրավիրված են եղել մասնակցելու այդ հանդիպումներին: Ծրագրի մեկնարկային հանդիպումը կայացել է 2012թ.-ի դեկտեմբերի 12-ին՝ որպես ղեկավար հանձնախմբի 9 - րդ հանդիպման մաս:

Այդ հանդիպումից հետո, ՄԱԿ-ի ԵՏՀ-ն և ազգային հիմնական շահագրգիռ կողմերը ստեղծեցին <<Ջուր և առողջություն>> արձանագրության հիմնական ոլորտներում գիտելիքներ և փորձ ունեցող ազգային խորհրդատուներից և ՀԿՀԱԱՇՄ ՀԿ ներկայացուցչից բաղկացած ծրագրի աշխատանքային խումբ: Աշխատանքային խմբին աջակցություն են ցուցաբերել ՄԱԿ-ի ԵՏՀ -ի կողմից նշանակված միջազգային խորհրդատուն և ՄԱԿ - ի ԵՏՀ անձնակազմի անդամներից մեկը: Աշխատանքային խումբը հավաքագրել է անհրաժեշտ տեղեկությունները և պատրաստել ելակետային վերլուծության և այլ փաստաթղթերի նախագծեր, որոնք այնուհետև քննարկվել են ղեկավար հանձնախմբի կողմից:

2014թ.-ի մայիսի դրությամբ, ազգային փորձագետներից և միջազգային խորհրդատուից բաղկացած աշխատանքային խումբն ավարտել էր ելակետային վերլուծության ուղղությամբ տարվող աշխատանքը և վերջնականացրել արձանագրության ներքո նախնական նպատակների և նպատակային ժամկետների սահմանումը: Սույն տեխնիկական զեկույցը հիմնված է <<Ջուր և առողջություն>> արձանագրության ներքո բոլոր քսան թիրախային ոլորտների հետ կապված իրավական, ինստիտուցիոնալ և նյութաիրավական ասպեկտների ելակետային վերլուծության վրա, որը պատրաստվել է աշխատանքային խմբի կողմից և ընդունվել ԵՄՁՆ ԱՔԵ ղեկավար հանձնախմբի 2013թ.-ի սեպտեմբերի 26-ին կայացած 10 - րդ հանդիպման կողմից:


II. Ելակետային իրավիճակի վերլուծություն

Ա. Մեթոդաբանություն

Ելակետային վերլուծությունը նպատակների սահմանման գործընթացում առաջին հիմնական տեխնիկական քայլն է և ներառում է առկա իրավական շրջանակների (ազգային և միջազգային) և Հայաստանում շրջակա միջավայրի և առողջության իրավիճակի վերլուծությունը, որը վերաբերում է արձանագրության ներքո նպատակների սահմանման բոլոր քսան ոլորտներին: Սույն ծրագրի շրջանակում նպատակների սահմանման մեթոդաբանությունը հիմնված է եղել <<Նպատակային ցուցանիշների սահմանման, ընթացքի գնահատման և հաշվետվությունների կազմման ուղեցույցի>> վրա, որը մշակվել է ՄԱԿ-ի ԵՏՀ-ի և Առողջապահության համաշխարհային կազմակերպության եվրոպական տարածաշրջանային գրասենյակի կողմից: Ստորև ներկայացվում են սույն մեթոդաբանության հիմնական տարրերը (տես գծապատկեր 1).

- Առանցքային շահագրգիռ կողմերի բացահայտում և համակարգման մեխանիզմի ստեղծում
- Ելակետային վերլուծություն, ներառյալ՝ առկա իրավական հիմքի, ջրային համակարգի ենթակառուցվածքների, շրջակա միջավայրի և առողջության վիճակի գնահատումը
- Խնդիրների բացահայտում և գերակայությունների սահմանում
- Նպատակային ծրագրերի, միջոցառումների ծրագրի և ցուցանիշների համաձայնեցում
- Պետական կառույցների և ՀԿ-ների հետ լայնածավալ խորհրդակցություն՝ առաջարկվող նպատակների, նպատակային ժամկետների և համապատասխան միջոցառումների ծրագրի վերաբերյալ
- Նպատակային ցուցանիշների և տպագիր նյութերի համաձայնեցում և տեղեկատվական հանդիպումներ բոլոր մասնակիցների հետ
- Միջոցառումների ծրագրի և ցուցանիշների համաձայնեցում

Գծապատկեր 1. Նպատակային ցուցանիշների սահմանման գործընթացի կառուցվածք



Ներկա տեխնիկական զեկույցը ներառում է ելակետային վերլուծության արդյունքները, որոնք ծառայում են որպես կարևոր քայլ՝ նպատակների սահմանման գործընթացի մյուս բոլոր տարրերի մշակման գործում:

Աշխատանքային խմբի փորձագետները ելակետային տեղեկատվությունը հավաքագրել են ըստ հետևյալ ձևանմուշի:

**ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԱՆՄՈՒՇ**

Ոլորտը ²

I. ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Ա. Ռազմավարություններ, իրավական / կարգավորիչ դաշտ և միջազգային պարտավորություններ

- *Ազգային ռազմավարությունները (անվանումը, ներկայացման/ընդունման ամսաթիվը*
- *Գլխավոր իրավական / կարգավորիչ ակտը(երը) առարկայական ոլորտում (անվանումը, ուժի մեջ մտնելու ամսաթիվը*
- *Գլխավոր կիրառելի միջազգային պարտավորությունները (բացառությամբ ՄԱԿ-ի ԵՏՀ-ի կոնվենցիաներով և արձանագրություններով սահմանված պարտավորությունների)³*

Բ. Ինստիտուցիոնալ շրջանակները

- *Կիրարկման և իրականացման համար պատասխանատու մարմիններ*
- *Մասնավոր հատվածի կազմակերպության (կազմակերպությունների) ներգրավում*
- *ՀԿ-ների և քաղաքացիական հասարակության ներգրավում*

Գ. Ֆինանսական շրջանակները

- *Գլխավոր համապատասխան ֆինանսական գործիքները*

**II. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ/ ԿԱՍ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ.
ՆԵՐԿԱՅԻՍ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ**

Ա. Մոնիթորինգային ծրագրեր և ցուցանիշներ

- *Տվյալների առկայությունը, դրանց ամբողջականությունը և արժանահավատությունը, տվյալներ տրամադրողները*

Բ. Առարկայական ոլորտին վերաբերող հիմնական խնդիրները

² Օրինակ, մատակարարվող խմելու ջրի որակը (հոդ.6, կետ 2 (ա))

³ Օրինակ, ԱՀԿ Խմելու ջրի որակի մասին ուղեցույցը, ԵՄ Ջրի շրջանակային դիրեկտիվը, ԵՄ Թափոնաջրերի մշակման մասին հրահանգը, ԵՄ Նիտրատների մասին հրահանգը

- Ազդեցությունը մարդու առողջության և/կամ շրջակա միջավայրի վրա (չափված և/կամ գնահատված)
- Հիմնախնդիրների պատճառները (օրինակ, հորերի ոչ պատշաճ պաշտպանություն, ջրի կառավարման ծրագրերի բացակայություն, ջրային անվտանգության ծրագրերի բացակայություն, կեղտաջրերի մաքրման անբավարար հզորություններ, ոչ պատշաճ ենթակառուցվածքներ)

III. ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԸՆԹԱՅԻՎ ԵՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

- Գործունեության գլխավոր նպատակը⁴, դրա արդյունքների գնահատումը և քաղված դասերը

IV. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

- Առարկայական ոլորտում իրավիճակի ընդհանուր գնահատականը
- Խնդիրների առաջնահերթության սահմանումը (դասակարգումը)
- Առաջարկություններ բարելավման համար (օրինակ, առաջխաղացման հնարավոր էլք)
- Առաջարկություններ այն հնարավոր նպատակների համար, որոնք կարող են սահմանվել սույն առարկայական ոլորտում

⁴ Սա կարող է ներառել նաև հետազոտությունը և կարողությունների ստեղծումը/զարգացումը

Բ. Օրենսդրական դաշտ

Ներկայումս հանրապետությունում մեծ ուշադրություն է դարձվում ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարմանը, զարգացմանը և օգտագործմանը: Այս ոլորտի կանոնակարգման նպատակով վերջին տարիներին երկրի օրենսդիր և գործադիր մարմինների կողմից ընդունվել են բազմաթիվ օրենքներ, օրենսդրական ակտեր, որոշումներ և այլն, որոնց հիման վրա իրականացվել են մի շարք բարեփոխումներ:

Ոլորտը կարգավորող հիմնական իրավական ակտերը

Հայաստանի հանրապետության սահմանադրությունը (ընդունված 1995թ.-ի հունիսի 5-ին) (Թիրախներ I - XX)

Ըստ սահմանադրության հոդված 33.2-ի <<Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում, պարտավոր է անձամբ և այլոց հետ համատեղ պահպանել և բարելավել շրջակա միջավայրը:

Պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում բնապահպանական տեղեկատվությունը թաքցնելու կամ դրա տրամադրումը մերժելու համար:

Հոդված 31.1. Պետությունը պաշտպանում է սպառողների շահերը, իրականացնում օրենքով նախատեսված միջոցառումներ՝ ապրանքների, ծառայությունների և աշխատանքների որակի վերահսկողության ուղղությամբ:

Հոդված 38. Յուրաքանչյուր ոք ունի օրենքով սահմանված եղանակներով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի անվճար հիմնական բժշկական ծառայություններ ստանալու իրավունք: Դրանց ցանկը և մատուցման կարգը սահմանվում են օրենքով:

ՀՀ հողային օրենսգիրք (ընդունված 2001թ.-ի մայիսի 2-ին) (Թիրախ I)

Հոդված 26. Ջրային հողերը

1. Ջրային հողեր են համարվում ջրային օբյեկտներով՝⁵ գետերով, բնական և արհեստական ջրամբարներով, լճերով զբաղեցված, ինչպես նաև ջրային օբյեկտների օգտագործման և պահպանության համար անհրաժեշտ հիդրոտեխնիկական, ջրատնտեսային և այլ օբյեկտների համար առանձնացված տարածքները:

2. Ջրային հողերը կարող են օգտագործվել բնակչության խմելու ջրի, կենցաղային, առողջարարական և այլ պահանջների, ինչպես նաև ջրատնտեսային, գյուղատնտեսական, բնապահպանական, արդյունաբերական, ձկնատնտեսային, էներգետիկ և այլ պետական ու համայնքային կարիքների բավարարումն ապահովող օբյեկտների շինարարության և շահագործման համար:

3. Հատուկ սանիտարական պաշտպանություն պահանջող բնական և արհեստական ջրային օբյեկտների պահպանության, ինչպես նաև արդյունաբերական, տրանսպորտային և այլ օբյեկտների բացասական ազդեցությունից բնակչությանը պաշտպանելու համար, օրենսդրությանը համապատասխան, սահմանվում են սանիտարական պահպանության գոտիներ, որոնցում սահմանվում են հողօգտագործման հատուկ սահմանափակումներ, որոնք ամրագրվում են հողաշինարարական և քաղաքաշինական փաստաթղթերում:

4. Ջրային հողերի օգտագործման կարգը սահմանվում է սույն օրենսգրքով և ջրային օրենսգրքով:

ՀՀ ջրային օրենսգիրք (ընդունված 2002թ.-ի հունիսի 4-ին) (Թիրախներ I-XX)

Օրենսգիրքը պարունակում է համապարփակ ավագանային կառավարման գաղափարը, խթանում է առաջարկի, այլ ոչ թե պահանջարկի վրա հիմնված ջրերի բաշխման հետ կապված որոշումները, պարտադրում է տեղեկատվության վրա հիմնված ջրօգտագործման թույլտվությունների տրամադրումը, հնարավորություն է ընձեռում ջրային ռեսուրսների կառավարման և ծախսաձածկման ընթացքում տնտեսական լծակների օգտագործման համար:

Ջրային օրենսգրքի խնդիրներն են՝

⁵ Ջրային օբյեկտներ – ըստ ՀՀ ջրային օրենսգրքի՝ ջրային ռեսուրսներ

1) ջրային ռեսուրսների կառավարման համապատասխան մեխանիզմների ստեղծումը,

2) ջրային ռեսուրսների պահպանումն ու պաշտպանությունը՝ ապահովելով աղտոտման նվազեցումը, ջրերի ստանդարտների ու ազգային ջրային պաշարի մակարդակի պահպանումը և վերահսկողության իրականացումը,

3) ջրերի վնասակար ներգործության կանխարգելումը,

4) ջրային ռեսուրսների հաշվառման ապահովումը,

5) բնակչությանն ու տնտեսությանը կարգավորվող սակագներով անհրաժեշտ քանակի և որակի ջրով ապահովումը,

6) ջրամատակարարման համակարգերի անվտանգ ու անխափան աշխատանքը և դրանց օգտագործման ու պահպանման բնականոն պայմանների ապահովումը և վերահսկողության իրականացումը,

7) ջրային համակարգերի կառավարման կազմակերպումը, պահպանումը և զարգացումը:

Հոդված 1. Օրենսգրքում օգտագործվող հիմնական հասկացությունները *սահմանային թույլատրելի կոնցենտրացիա*՝ վնասակար նյութի այն քանակը, որի առկայությունը վնասակար ազդեցություն չի թողնում մարդու առողջության վրա և չի առաջացնում անբարենպաստ հետևանքներ,

սանիտարական պահպանման գոտի՝ բնակչության՝ խմելու, առողջապահական, կոմունալ, կենցաղային սպասարկման, բուժիչ, կուրորտային և առողջարարական կարիքների պահանջների բավարարման նպատակով օգտագործվող ջրային ռեսուրսների պահպանման գոտի,

ջրաղբյուր՝ Հայաստանի Հանրապետության գետերի ջրերը, ստորերկրյա ջրերը, մակերեսային տեղական հոսքի ջրերը, որոնք հավաքվում են բնական կամ արհեստական ջրամբարներում, չորացման համակարգի ցամաքորդային (դրենաժային) ջրերը:

Օրենսգրքի *20-րդ հոդվածը* ներառում է հանրային մասնակցության դրույթները:

Պետական կառավարման լիազորված մարմինների կողմից հասարակայնության ծանուցման ենթակա են՝

1) ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների նախագիծը,

2) ջրի ազգային ծրագրի նախագիծը,

3) ջրավազանային կառավարման պլանների նախագծերը,,

4) ջրօգտագործման քննարկվող թույլտվությունները,

5) ջրային համակարգերին օգտագործման տրվելիք թույլտվությունները,

6) ջրերի ստանդարտների նախագծերը,

7) ջրերի սակագնային ռազմավարության նախագիծը:

Եթե ջրային ռեսուրսների որակը կամ ջրօգտագործումը վտանգ է սպառնում մարդկանց կյանքին կամ անվտանգությանը կամ, եթե աղտոտվում են ջրային ռեսուրսները, ապա այդ մասին տեղյակ յուրաքանչյուր անձ կարող է տվյալ իրավիճակի և դրա տեղանքի մասին ծանուցել Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնին: Ջրային ռեսուրսներն աղտոտողը պարտավոր է այդ մասին անհապաղ տեղյակ պահել Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնին: Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմինն այս մասին անհապաղ տեղյակ է պահում հասարակությանը՝ երաշխավորելով վտանգի տակ գտնվող անձանց ռիսկի աստիճանը և տեղեկացնում հնարավոր հետևանքների մասին:

Ջրային բնագավառում տեղեկատվություն ստանալու համար յուրաքանչյուր ոք իրավունք ունի դիմել համապատասխան մարմին և 30 օրվա ընթացքում ստանալ պատասխան, բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի: Ջրային բնագավառում տեղեկատվության տրամադրման կարգը հաստատում է կառավարությունը:

Հոդված 22. Ազատ ջրօգտագործումը

Ազատ ջրօգտագործում է համարվում՝

- 1) այնպիսի ջրօգտագործումը, որը նպատակաուղղված չէ շահույթ ստանալուն,
- 2) հանգստի, լողալու, ջրային մարզաձևերով (այդ թվում՝ առանց շարժիչների օգտագործման ջրային սպորտաձևերով) զբաղվելը,
- 3) կարթով ձկնորսությունը և սպորտային որսորդությունը,
- 4) տեղումների օգտագործումն անձանց սեփականություն հանդիսացող հողատարածքներում,
- 5) ջրի օգտագործումը հակահրդեհային նպատակներով,
- 6) էկոլոգիական նպատակներով սանիտարական էլքերի համար ջուր վերցնելը:

Եթե ազատ ջրօգտագործումը խախտում է կամ սպառնում է խախտել ջրերի ստանդարտները, ապա Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմինը պետք է կանոնակարգի այդ գործողությունը՝ կիրառելով սույն օրենսգրքով սահմանված ջրօգտագործման թույլտվություն տալու ընթացակարգը, ինչպես նաև ապահովի այլ կանխարգելող միջոցառումներ՝ ջրային ռեսուրսները պահպանելու համար:

Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմինը կառավարության սահմանած կարգով կարող է որոշակի ջրօգտագործողների ազատել ջրօգտագործման թույլտվություն ստանալու պահանջից՝

- 1) եթե այդպիսի ջրօգտագործումն էական չէ,

2) այնքան ժամանակով, մինչև այդպիսի գործունեությունը չի խախտում կամ չի սպառնում խախտել ջրերի ստանդարտները:

Հոդված 70. Խմելու ջրի ստանդարտները

Բնակչության՝ խմելու, առողջապահական, կոմունալ և կենցաղային սպասարկման կարիքների համար հատկացվող ջուրը պետք է համապատասխանի խմելու ջրի ստանդարտներին:

Խմելու ջրի մատակարարումն իրականացնող անձինք պետք է ապահովեն խմելու ջրի որակի համապատասխանությունը ստանդարտներին: Առողջապահության պետական լիազորված մարմինն, օրենսդրությամբ սահմանված կարգով, հսկողություն է սահմանում բնակչությանը մատակարարվող խմելու ջրի՝ ստանդարտներին համապատասխանության նկատմամբ:

Խմելու ջրի մատակարարման համակարգերը դասվում են կենսաապահովման կարևորագույն ջրային համակարգերի շարքին:

Խմելու ջրի ստանդարտների պահանջներին համապատասխանող ջրային ռեսուրսը կարող է օգտագործվել որպես բնակչության՝ խմելու, առողջապահական, կոմունալ և կենցաղային սպասարկման կարիքների համար ջրային աղբյուր, եթե կառավարության սահմանած կարգին համապատասխան հնարավոր է այդտեղ ապահովել սանիտարական գոտիներ և հատուկ պահպանման տեղամասեր:

Ջրամատակարարումից առաջ խմելու ջրի վերամշակում և ջրապատրաստում կարող է իրականացվել միայն կառավարության սահմանած կարգին համապատասխան մշակված ու հաստատված եղանակներով:

Չմաքրված կեղտաջրերով գյուղատնտեսական հողատեսքերի ոռոգումը սահմանափակվում է ՀՀ ջրային օրենսգրքի

հոդված 99-ի 9-րդ կետով.

<<ստորերկրյա ջրերի պահպանման գոտիներում սահմանափակվում կամ արգելվում են գործունեության որոշակի տեսակներ (ներառյալ՝ հողերի ոռոգումը կեղտաջրերով)՝ լուծիչներ կամ քիմիկատներ արտադրող, օգտագործող կամ պահող արդյունաբերական կամ առևտրային կազմակերպությունների գործունեությունը, տնտեսական գործունեության ընթացքում առաջացող հումքի, նյութերի, կիսաֆաբրիկատների, այլ արտադրանքների և մթերքների մնացորդների աղբանոցների տեղադրումը:

հոդված 101-ով.

<<Կեղտաջրերով գյուղատնտեսական հողատեսքերի ոռոգումը թույլատրվում է կառավարության սահմանած կարգով>>:

հոդված 103-ի վերջին պարբերությամբ.

<<Արգելվում է կեղտաջրերով ոռոգվող հողերն օգտագործման հանձնել և օգտագործել առանց ստորգետնյա ջրերի ռեժիմի դիտարկման համակարգի>>:

Հոդված 120. Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համակարգերի օգտագործման առանձնահատկությունները

Մինչև խմելու ջրի մասին օրենքի ընդունումը խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման բնագավառում՝

- խմելու ջրի ստանդարտին համապատասխանող ջրային ռեսուրսների օգտագործումը բնակչության՝ խմելու, կոմունալ և կենցաղային, առողջապահական կարիքների համար համարվում է առաջնային,
- խմելու, կոմունալ և կենցաղային ջրամատակարարման համակարգերը դասվում են կենսաապահովման կարևորագույն օբյեկտների շարքին,
- խմելու ջրի որակական չափանիշների նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ջրային օրենսգիրքը ջրային ոլորտի հասկացությունները և հարաբերությունները սահմանող և կարգավորող հիմնական իրավական փաստաթուղթն է: Ջրային օրենսգիրքը կարգավորում է ջրային ռեսուրսների և համակարգերի պահպանման, օգտագործման, բախշման հետ կապված խնդիրները, ինչպես նաև սահմանում է մասնավոր հատվածի ներգրավման սկզբունքներն ու ձևերը:

ՀՀ նոր ջրային օրենսգրքի կիրարկումն ապահովելու նպատակով 2002թ.-ից սկսած կառավարության կողմից արդեն հաստատվել է ավելի քան 120 նորմատիվ ակտ, որոնք վերաբերում են ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման ընթացակարգին, ջրավազանային կառավարմանը, որոշումներ կայացնելու գործընթացի թափանցիկությանը և հասարակության մասնակցությանը, տեղեկատվության մատչելիությանը, ջրային պետական կադաստրի (ՁՊԿ) ստեղծմանը, ջրային ռեսուրսների մոնիտորինգի ձևավորմանը, անդրասահմանային ջրային ռեսուրսների կառավարմանը և այլն:

«ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենք (ընդունված 1992թ.-ի նոյեմբերի 16-ին) (Թիրախ I, II)

Օրենքը սահմանում է բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման իրավական, տնտեսական և կազմակերպական հիմքերը, ինչպես նաև պետության կողմից նախատեսվող այն երաշխիքները, որոնք բացառում են մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար և վտանգավոր գործոնների ազդեցությունը և բարենպաստ պայմաններ ապահովում նրա և ապագա սերունդների կենսունակության համար:

«Հոդված 4. Սանիտարական կանոնները և հիգիենիկ նորմատիվները (քաղվածք)

Սանիտարական կանոնները և հիգիենիկ նորմատիվները (հետագայում՝ «սանիտարական կանոններ») սահմանում են բնակչության համար շրջակա միջավայրի անվտանգության և ոչ վնասակարության չափանիշների և մարդու կենսագործունեության համար բարենպաստ պայմանների ապահովման պահանջները:

Սանիտարական կանոնների կատարումը պարտադիր է բոլոր պետական մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների, ինչպես նաև պաշտոնատար անձանց և քաղաքացիների համար:

Ջրամատակարարման և ջրօգտագործման բնագավառին վերաբերող հիմնական պահանջները շարադրված են օրենքի 16-րդ հոդվածում.

«Հոդված 16. ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ընդհանուր պահանջները բնակչության ջրամատակարարման և ջրօգտագործման բնագավառում: Քաղաքների և այլ բնակավայրերի բնակիչներն ապահովվում են մարդու կենցաղային և ֆիզիոլոգիական կարիքների համար խմելու ջրի անհրաժեշտ քանակությամբ՝ հիգիենիկ նորմատիվների համաձայն:

Խմելու, կենցաղային, տնտեսական, արտադրական, տեխնիկական կարիքների համար օգտագործվող ջրի որակը պետք է համապատասխանի սանիտարական կանոններին:

Պետական մարմիններն իրականացնում են միջոցառումներ ջրամատակարարման համակարգի պահպանման, զարգացման և բնակչությանը բարձրորակ ջրով ապահովելու ուղղությամբ:

Կենտրոնացված և ոչ կենտրոնացված ջրամատակարարման, լողալու, սպորտով զբաղվելու և բնակչության հանգստի, բուժական նպատակներով օգտագործվող, ինչպես նաև բնակավայրերի սահմաններում գտնվող

ջրամբարների ջրի որակը պետք է համապատասխանի սանիտարական կանոններին:

Բնակչության ջրօգտագործման աղբյուրների աղտոտումը կանխելու և վերացնելու նպատակով, պատգամավորների տեղական խորհուրդների գործադիր կոմիտեների կողմից սահմանվում են սանիտարական պահպանման գոտիներ՝ հատուկ ռեժիմով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

Ջրի որակի սանիտարական կանոններին չհամապատասխանելու դեպքերում, Հայաստանի Հանրապետության պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության որոշմամբ, ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների և քաղաքացիների կողմից ջրի աղբյուրների օգտագործումը դադարեցվում է:

Հոդված 24. Պետական հիգիենիկ և հակահամաճարակային հսկողությունը

Պետական հիգիենիկ և հակահամաճարակային հսկողությունը սանիտարական խարգելիչ հիմնարկների և մարմինների գործունեությունն է հիվանդությունների կանխարգելման ուղղությամբ՝ Հայաստանի Հանրապետության սանիտարական օրենսդրության խախտումների հայտնաբերման, կանխարգելման միջոցով:

Պետական հիգիենիկ և հակահամաճարակային հսկողությունը ներառում է՝

- բնակչության առողջական վիճակի գննությունը, կանխատեսումը և գնահատումը՝ ըստ շրջակա միջավայրի վիճակի,
- վարակիչ, զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների ու թունավորումների առաջացման, ինչպես նաև տարածման պատճառների ու պայմանների հայտնաբերումը,
- բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման նպատակով անհրաժեշտ առաջարկությունների մշակումը,
- հսկողությունը ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների, քաղաքացիների կողմից սանիտարական կանոնների, հիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների իրականացման նկատմամբ,
- Հայաստանի Հանրապետության սանիտարական օրենսդրության խախտման դեպքում, պաշտոնատար անձանց և քաղաքացիների նկատմամբ համապատասխան միջոցների կիրառումը,
- վարակիչ, պրոֆեսիոնալ, զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների և թունավորումների պետական վիճակագրական հաշվառումը:

«Բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենք (ընդունված 1996թ.-ի մարտի 4-ին) (Թիրախ II)

Հոդված 11. Շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությամբ տառապող մարդու իրավունքը

Շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությամբ տառապող մարդն իրավունք ունի անվճար ստանալ պետության կողմից երաշխավորված կարգով բժշկական օգնություն և սպասարկում և բուժվել այդ նպատակի համար նախատեսված հատուկ մասնագիտացված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններում:

Շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

<<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին>> ՀՀ օրենք (ընդունված 1998թ.-ի փետրվարի 12-ին) (Թիրախ XVIII)

Սույն օրենքը սահմանում է արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության հիմքերն ու կազմակերպումը, այդ բնագավառում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների՝ անկախ կազմակերպական-իրավական տեսակից (այսուհետ՝ ձեռնարկություններ, հիմնարկներ, կազմակերպություններ), ինչպես նաև պաշտոնատար անձանց և քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները:

Օրենքը սահմանում է արտակարգ իրավիճակ և աղետի գոտի հասկացությունները.

արտակարգ իրավիճակ՝ որոշակի տարածքում կամ օբյեկտում խոշոր վթարի, վտանգավոր բնական երևույթի, տեխնածին, տարերային կամ էկոլոգիական (բնապահպանական) աղետի, համաճարակի, անասնահամաճարակի (էպիզոոտիա), բույսերի և գյուղատնտեսական մշակաբույսերի լայնորեն տարածված վարակիչ հիվանդության (էպիֆիտոտիա), զենքի տեսակների կիրառման հետևանքով ստեղծված իրավիճակ, որը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել մարդկային զոհերի, մարդկանց առողջությանն ու շրջակա միջավայրին՝ զգալի վնասի, խոշոր նյութական կորուստների և մարդկանց կենսագործունեության բնականոն պայմանների խախտման,

աղետի գոտի՝ արտակարգ իրավիճակների հետևանքով տուժած տարածք (բնակավայր, օբյեկտ) կամ տարածքի մի մաս:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք (ընդունված 2003թ.-ի սեպտեմբերի 23-ին) (Թիրախ XVIII և XX)

Տեղեկությունների մատչելիության և հրապարակայնության ապահովումն իրականացվում է ըստ սույն օրենքի հոդված 7-ի.

1. Տեղեկատվություն տնօրինողն օրենսդրությամբ սահմանված կարգով մշակում և հրապարակում է իր կողմից տեղեկություն տալու կարգը, որը փակցնում է իր գտնվելու վայրում՝ բոլորի համար տեսանելի տեղում:

2. Տեղեկատվություն տնօրինողն անհապաղ հրապարակում կամ այլ մատչելի ձևով հանրությանը տեղեկացնում է իր տնօրինության տակ գտնվող այն տեղեկությունը, որի հրապարակումը կարող է կանխել պետական և հասարակական անվտանգությունը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին և ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանը սպառնացող վտանգը

3. Եթե Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և (կամ) օրենքով այլ բան նախատեսված չէ, ապա տեղեկատվություն տնօրինողը տարին առնվազն մեկ անգամ հրապարակում է իր գործունեությանն առնչվող հետևյալ տեղեկությունները և դրանցում կատարված փոփոխությունները՝

- 1) հանրության համար իրականացվող (իրականացման ենթակա) աշխատանքները և ծառայությունները,
- 2) բյուջեն,
- 3) գրավոր հարցումների ձևերը և դրանք լրացնելու վերաբերյալ խորհրդատվական ցուցումները,
- 4) հաստիքացուցակները, ինչպես նաև պաշտոնատար անձանց անունները, ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները,
- 5) աշխատանքի ընդունման կարգը և թափուր աշխատատեղերը,
- 6) շրջակա միջավայրի վրա ներգործությունը,
- 7) հասարակական միջոցառումների ծրագրերը,
- 8) քաղաքացիների ընդունելության կարգը, օրը, ժամը և վայրը,
- 9) աշխատանքների և ծառայությունների բնագավառում գնագոյացման կարգը, գները (սակագները),
- 10) տնօրինվող տեղեկությունների ցանկը և դրանց տնօրինման կարգը,
- 11) ստացված հարցումների վերաբերյալ վիճակագրական և ամփոփ տվյալները, այդ թվում՝ մերժման հիմքերը,

- 12) սույն մասում սահմանված տեղեկությունների մշակման կամ ստացման աղբյուրները,
- 13) սույն մասում սահմանված տեղեկությունները պարզաբանելու իրավասություն ունեցող անձի տվյալները:

4. Սույն հոդվածի 3-րդ մասում նշված տեղեկություններում կատարված փոփոխությունները հրապարակվում են դրանք կատարվելուց հետո՝ 10-օրյա ժամկետում:

5. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում նշված տեղեկությունները հրապարակվում են հանրության համար մատչելի ձևով, տեղեկատվություն տնօրինողի ինտերնետային էջի առկայության դեպքում՝ նաև դրանով:

6. Հանրային նշանակության, ինչպես նաև բյուջեից հատկացում (ֆինանսավորում) ստացող կազմակերպությունները կարող են չհրապարակել սույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ, 4-րդ և 5-րդ կետերում սահմանված տեղեկությունները և դրանց փոփոխությունները:

Սույն օրենքի 9-րդ հոդվածով սահմանվում է նաև տեղեկատվության տրամադրման ժամկետները:

Հոդված 12.

Տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով՝

- 1) ապահովել տեղեկությունների մատչելիությունը և հրապարակայնությունը,
- 2) իրականացնել իր տնօրինության տակ գտնվող տեղեկությունների գրանցումը, դասակարգումը և պահպանումը,
- 3) տեղեկություններ փնտրող անձին տրամադրել հավաստի և իր տնօրինության տակ գտնվող ամբողջական տեղեկություն,
- 4) սահմանել իր կողմից բանավոր և (կամ) գրավոր տեղեկությունների տրամադրման կարգը,
- 5) նշանակել տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձին:

Օրենքի 13-րդ հոդվածի կետ 1-ում սահմանված է տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձը:

1. Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձը կարող է լինել տեղեկատվություն

տնօրինողի նշանակած պաշտոնատար անձը կամ տեղեկատվություն տնօրինողի ղեկավարը:

2. Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձն օրենսդրությամբ սահմանված կարգով՝

1) ապահովում է տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողի պարտականությունների իրականացումը,

2) տեղեկություն փնտրողին մատչելի ձևով բացատրում է տեղեկության տրամադրման կարգը, պայմանները և ձևերը, մշակում է ստացված հարցումների վիճակագրական և ամփոփ տվյալները:

«Ջրի ազգային քաղաքականության մասին» ՀՀ օրենք (ընդունված 2005թ.-ի մայիսի 3-ին) (Թիրախ XIX)

Օրենքը ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի ռազմավարական օգտագործման և պահպանության հեռանկարային զարգացման հայեցակարգ է: Սույն օրենքի նպատակն է ներկայում և ապագայում մարդու բարեկեցության, հանրապետության սոցիալ-տնտեսական համակարգի զարգացման, տնտեսա-էկոլոգիական կարիքները բավարարելու համար անհրաժեշտ քանակի և որակի ջրային ռեսուրսների մատչելիության ապահովումը:

Օրենքի խնդիրներն են. (ա) ապահովել ջրային ռեսուրսների մատչելիության գնահատման, ազգային ջրային պաշարի բնութագրման, ջրային ռեսուրսների առաջարկի և պահանջարկի ձևավորման գործընթացի իրականացումը, (բ) սահմանել ջրային ռեսուրսների օգտագործման գերակայությունները և (գ) ներդնել ջրավազանային կառավարման սկզբունքները, կազմել ջրավազանային կառավարման պլանները և նախապատրաստել Ջրի ազգային ծրագրի հիմքերը: Այսպիսով, 2005թ.-ից ջրային ռեսուրսների կառավարման ոլորտում կիրառվում է ջրավազանային կառավարումը:

«Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենք (ընդունված 2006թ.-ի նոյեմբերի 27-ին) (Թիրախներ III, V, VII, IX, X, XI, XII, XVI, XVIII և XIX)

ՀՀ «Ջրի ազգային ծրագրի մասին» օրենքը ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի հեռանկարային զարգացման հիմնական փաստաթուղթն է, որով իրականացվում են ջրային օրենսգրքով սահմանված խնդիրները:

<<Ջրի ազգային ծրագրի մասին>> օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը կարգավորում է ջրի ազգային ծրագրի սահմանման և իրականացման հետ կապված հարաբերությունները՝ ընդգրկելով ազգային ջրային պաշարի, ռազմավարական ջրային պաշարի, օգտագործելի ջրային ռեսուրսների գնահատականները, ջրերի նկատմամբ առաջարկը և պահանջարկը, ջրային բնագավառի պահպանման և զարգացման հիմնական խնդիրները և հեռանկարները:

Ջրի ազգային ծրագրի իրականացման միջոցառումները էլնում են ջրի սահմանափակ լինելու, մարդու կյանքի և առողջության, կենդանական և բուսական աշխարհի պահպանման համար հիմնական միջոցներից մեկը հանդիսանալու, դրա մատչելիության ապահովման նախապայմաններից:

Ջրի ազգային ծրագրի մասին օրենսդրությունը

Ջրի ազգային ծրագրի սահմանումը և իրականացումը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով, «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենքով, սույն օրենքով, իրավական այլ ակտերով և միջազգային պայմանագրերով:

Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

Օրենքի նպատակը

Օրենքի նպատակն է օգտագործելի ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով բնակչության և տնտեսության պահանջների բավարարման, շրջակա միջավայրի էկոլոգիական կայունության ապահովման, ռազմավարական ջրային պաշարի կազմավորման և օգտագործման, ազգային ջրային պաշարի պահպանության, Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի և <<Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին>> ՀՀ օրենքի խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների սահմանումը:

Օրենքի խնդիրները

Օրենքի խնդիրներն են՝

- 1) ջրօգտագործման վճարի առավելագույն և նվազագույն չափերի, ներառյալ՝ ջրային ռեսուրսների արդյունահանման, վերադարձման և բնապահպանական վճարների դրույքաչափերի սահմանումը,
- 2) ջրերի նկատմամբ առաջարկի և պահանջարկի գնահատումը,
- 3) ջրային ռեսուրսների ամբարման, բաշխման և օգտագործման ռազմավարության սահմանումը,

4) ջրային նորմերի մշակմանը, էկոլոգիական թողքերի մեծությունների և ջրերի անվերադարձ վերցման սահմանային թույլատրելի ծավալների ճշգրտմանը, հատուկ պահպանվող ավազանային տարածքների կամ դրանց որևէ մասի ցանկի, ջրային ավազաններում արտակարգ էկոլոգիական իրավիճակների և էկոլոգիական աղետների գոտիների մշակմանը, ջրակոհամակարգերի վրա վնասակար ազդեցությունների կանխմանն ու ջրային ռեսուրսների մոնիթորինգի բարելավման և աղտոտման կանխարգելմանն ուղղված միջոցառումների սահմանումը.

Ջրամատակարարման ոլորտի գերակա խնդիրներն են՝

- 1) խմելու ջրի համակարգերի կայուն շահագործման ապահովումը, կառավարման մեխանիզմների կատարելագործումը,
- 2) ջրամատակարարման ընկերությունների ֆինանսական կայունության ապահովումը,
- 3) հուսալի և անընդհատ ջրամատակարարման ապահովումը,
- 4) բնակչության համար ջրամատակարարման ծառայությունների մատչելիության բարձրացումը,
- 5) անապահով սպառողներին ջրային ծառայություններից օգտվելու հնարավորության ապահովումը,
- 6) ջրային համակարգերի շահագործման, ջրամատակարարման ծառայությունների մատուցման ոլորտում մասնավոր հատվածի ներգրավումը, համակարգերի մասնակցային կառավարման զարգացումը,
- 7) ջրամատակարարման ծառայություններ տրամադրող ընկերությունների գործունեության նկատմամբ մոնիթորինգի վերահսկողության իրականացումը,
- 8) խմելու ջրամատակարարման ծառայությունների որակի և կառավարման նկատմամբ հսկողության ապահովումը,
- 9) ջրօգտագործողների կողմից ջրամատակարարման մոնիթորինգի իրականացման բարելավումը, որն ուղղված է լինելու ջրային ռեսուրսները աղտոտումից պաշտպանելուն,
- 10) ջրի հաշվառման համակարգի ներդրումը,
- 11) ջրամատակարարման համակարգում ջրակորուստների նվազեցումը,
- 12) ջրամատակարարման ծառայությունների բարելավման նպատակով ներդրումների անհրաժեշտ ծավալների ներգրավումը,
- 13) ջրամատակարարման համակարգերի վերականգնման, կառուցման և շահագործման գործընթացում արդիական տեխնոլոգիաների կիրառումը:

Օրենքի 26-րդ հոդվածը սահմանում է ջրային ավազաններում արտակարգ էկոլոգիական իրավիճակների և էկոլոգիական աղետների գոտիները:

1. Արտակարգ էկոլոգիական իրավիճակի և էկոլոգիական աղետների գոտիները տարածքի տեղամասեր են, որտեղ բնական երևույթների, տնտեսական կամ այլ գործունեության հետևանքով շրջակա միջավայրում տեղի են ունեցել բացասական փոփոխություններ, որոնք սպառնում են բնակչության առողջությանը, բնական էկոհամակարգերի հավասարակշռվածությանը, բուսական և կենդանական աշխարհին: Արտակարգ էկոլոգիական իրավիճակի և էկոլոգիական աղետների գոտիների տարածքներում մարդկանց կյանքի, առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցություն ունեցող բնական ռեսուրսների օգտագործման հետ կապված տնտեսական գործունեության որոշակի տեսակները դադարեցվում կամ սահմանափակվում են, և միջոցներ են ձեռնարկվում բնական ռեսուրսների վերականգնման ու վերարտադրության ուղղությամբ:

2. Ջրային ավազաններում արտակարգ էկոլոգիական իրավիճակների և էկոլոգիական աղետների գոտիները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ ելնելով առաջացած իրավիճակի տևողությունից, կայունությունից, ռեսուրսի ինքնավերականգնման ունակությունից:

Ջրի ազգային ծրագրի խնդիրներն իրականացնելու համար սահմանվել են կարճաժամկետ (մինչև 2010թ.), միջնաժամկետ (2010-2015թթ.) և երկարաժամկետ (2015-2021թթ.) ծրագրեր:

ՀՀ կառավարության 2001թ. -ի դեկտեմբերի 27-ի թիվ 1286 «Շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների ցանկը հաստատելու մասին» որոշում (Թիրախ II)

Սույն որոշումը ներառում է ջրով փոխանցվող բոլոր տեսակների վարակիչ հիվանդությունները՝ աղիքային վարակիչ հիվանդություններ (բոլոր ձևերը), վիրուսային հեպատիտներ, տուլարեմիա և այլն: Բուժման ծավալները ներառվում են յուրաքանչյուր տարի հաստատվող պետական պատվերի չափանիշներում վարակիչ հիվանդությունների մասով:

ՀՀ կառավարության 2002 թ.-ի հունվարի 14-ի թիվ 26 որոշում (Թիրախ 1)

Որոշման համաձայն, սանիտարական պահպանման գոտիների օգտագործման սանիտարական սահմանափակումների և նորմերի պետական լիազորված մարմինը առողջապահության նախարարությունն է:

ՀՀ կառավարության 2003 թ.-ի մարտի 7-ի թիվ 218-Ն «Ջրօգտագործման թույլտվության օրինակելի ձևաթուղթը և ջրօգտագործման թույլտվության ձևերը հաստատելու մասին» որոշմամբ կոմունալ-կենցաղային, բուժիչ և առողջապահական նպատակներով ջրօգտագործման դեպքում, պարտադիր պահանջվում է համապատասխան փաստաթուղթ (եզրակացություն)՝ տրված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության կողմից:

ՀՀ կառավարության 2003 թ.-ի մայիսի 8-ի թիվ 756-Ն «Զբոսաշրջության, մարզական և ռեկրեացիոն կարիքների համար ջրային ռեսուրսների օգտագործման կարգը հաստատելու մասին» որոշում.

«2. Զբոսաշրջության, մարզական և ռեկրեացիոն կարիքների համար ջրային ռեսուրսներ օգտագործող անձինք, Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 22-րդ և 23-րդ հոդվածների համաձայն, համարվելով ազատ ջրօգտագործողներ, ջրօգտագործումն իրականացնում են սույն կարգի պահանջների համաձայն:

3. Զբոսաշրջության, մարզական և ռեկրեացիոն կարիքների համար ջրային ռեսուրսների օգտագործումն իրականացվում է մարդկանց կյանքի պահպանման կանոնների համաձայն՝ ելնելով Հայաստանի Հանրապետության համապատասխան լիազորված պետական մարմինների և, ըստ ջրային ռեսուրսների տարածքային պատկանելության, տեղական ինքնակառավարման մարմնի կողմից սահմանված պահանջներից, տեղերից ու ժամկետներից:

6. Զբոսաշրջության, մարզական և ռեկրեացիոն կարիքների համար սահմանված ջրային ռեսուրսների ու դրանց հարակից տարածքների օգտագործումը չպետք է հանգեցնի ջրային ռեսուրսների ջրերի ստանդարտների խախտմանը, ինչպես նաև սահմանափակի այդ տարածքներից օգտվող քաղաքացիների և այլ ջրօգտագործողների իրավունքները ջրային ռեսուրսների նկատմամբ:

7. Զբոսաշրջության, մարզական և ռեկրեացիոն կարիքների համար ջրային ռեսուրսներն ու դրանց հարակից տարածքներն օգտագործողները հասարակայնությանն ապահովում են իրենց գործունեության համար

նախատեսված ջրային ռեսուրսների որակական ցուցանիշների մասին տեղեկատվության տրամադրումը, ինչպես նաև դրա մատչելիությունը:

8. Զբոսաշրջության, մարզական և ռեկրեացիոն կարիքների համար բնության հատուկ պահպանվող տարածքներում գտնվող ջրային ռեսուրսների օգտագործումը թույլատրելի է, եթե այն չի հակասում այդ տարածքի համար սահմանված նորմերին, հակառակ դեպքում՝ ջրօգտագործողը պետք է սահմանված կարգով ստանա ջրօգտագործման թույլտվություն:

9. Զբոսաշրջության, մարզական և ռեկրեացիոն կարիքների համար ջրային ռեսուրսների օգտագործումը, որը խախտում կամ սպառնում է խախտել ջրերի ստանդարտները, կարող է իրականացվել միայն ջրօգտագործման թույլտվության առկայության դեպքում»:

ՀՀ կառավարության 2003 թ.-ի հունիսի 5-ի թիվ 816-Ն «Ազատ ջրօգտագործման կարգը հաստատելու մասին» որոշում.

1. Սույն կարգով կանոնակարգվում են ազատ ջրօգտագործմանն առնչվող իրավահարաբերությունները, բացառությամբ զբոսաշրջության, մարզական և ռեկրեացիոն կարիքների համար ջրային ռեսուրսների, անձի սեփականություն հանդիսացող հողամասում գրունտային ջրերի, հակահրդեհային նպատակներով ազատ ջրօգտագործմանն առնչվող իրավահարաբերությունները, որոնք կանոնակարգվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած առանձին կարգերով:

6. Նախարարությունը, հիմք ընդունելով մարդկանց առողջության համար ջրային ռեսուրսի վտանգավորության մասին առողջապահության բնագավառում լիազոր մարմնի ներկայացրած տեղեկատվությունը, կարող է սահմանափակել կամ կասեցնել ազատ ջրօգտագործումը՝ ըստ ջրային ռեսուրսի (ռեսուրսների) կամ դրա (դրանց) մասի (մասերի), եթե՝

ա) տվյալ տարածաշրջանում հայտնաբերվել են համաճարակի դեպքեր, և առկա է ջրի միջոցով փոխանցվող հիվանդությունների տարածման վտանգ,

բ) ջրային ռեսուրսն աղտոտված է այն չափով, որ կարող է վնաս հասցնել մարդկանց կյանքին և առողջությանը:

ՀՀ կառավարության 2003 թ.-ի օգոստոսի 28-ի թիվ 1228-Ն <<Զրահեռացման համակարգերի օգտագործման և հեռացվող ջրերի մաքրման կանոնները սահմանելու մասին>> որոշում (*Թիրախներ IV, VI, VIII, IX, X, XI, XII*)

Որոշմամբ սահմանվում են ջրահեռացման համակարգերի օգտագործման և հեռացվող ջրերի մաքրման կազմակերպումը, ջրահեռացման ցանցի շահագործման խնդիրներն ու տեխնիկական վիճակի նկատմամբ հսկողության մեխանիզմները, ջրահեռացման համակարգերի մաքրման կառուցվածքները, դրանց լաբորատոր-արտադրական և տեխնոլոգիական հսկողության մեխանիզմները, կեղտաջրերի մեխանիկական և կենսաբանական մաքրման կառուցվածքների, ինչպես նաև կեղտաջրերի նստվածքների մշակման կառուցվածքների տեսակները, շահագործման կարգը և դրանց նկատմամբ հսկողության մեխանիզմները:

Այսպիսով, սույն որոշման 109-րդ կետի համաձայն, ջրահեռացման համակարգերի մաքրման կառուցվածքները շահագործող անձնակազմի խնդիրներն են՝

- ա) կեղտաջրերի մաքրման, նստվածքների մշակման, վարակազերծման և մաքրման կայանից հեռացման ապահովումը՝ բավարարելով սանիտարական կանոնների և հիգիենիկ նորմատիվների պահանջները, ապահովելով ՍԹԱ-ները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության ու պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության պահանջների կատարումը,
- բ) տեխնիկական և գյուղատնտեսական ջրամատակարարման ու տնտեսական այլ նպատակներով օգտագործման համար նախատեսված կեղտաջրերի և նստվածքների մշակման ապահովումը,
- գ) կեղտաջրերի մաքրման և նստվածքների մշակման կառուցվածքների արդյունավետ ու անխափան աշխատանքի կազմակերպումը, կեղտաջրերի մաքրման և նստվածքների մշակման ինքնարժեքի իջեցումը, ռեազենտների, էլեկտրաէներգիայի ու սեփական կարիքների համար օգտագործվող ջրի խնայումը>>:

Ըստ 119-րդ կետի.

<<Մաքրման կառուցվածքների արտադրական ստորաբաժանումներ են տեխնոլոգիական արտադրամասերը (մեխանիկական մաքրման, կենսաբանական մաքրման, նստվածքների մշակման, վարակազերծման, քամելու ու ռոտոման դաշտերի) և լաբորատորիաները (քիմիական ու մանրէաբանական)>>:

Որոշման XXVI գլխում սահմանվում են կեղտաջրերի նստվածքների մշակման կառուցվածքների տեսակները և ձևերը, ինչպիսիք են

տղմահրապարակները, մեթանտենկերը, տղմախտացուցիչները, նստվածքի օղակյաց կայունացուցիչները, վակուում-քամիչները, ցենտրիֆուգերը և նստվածքի ջերմային չորացումը, դրանց շահագործման կանոնակարգը և պայմանները:

ՀՀ կառավարության 2003 թ. –ի նոյեմբերի 7-ի թիվ 47-Ն «Ձկնորսության և ձկնաբուծության մասին» ձև թիվ 1-ձուկ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» որոշում (Թիրախի XVI)

Որոշումը սահմանում է ձկնաբուծությամբ զբաղվող տնտեսվարողների համար պետական վիճակագրական հաշվետվության նշված ձևը լրացնելու կարգը և ժամկետները:

ՀՀ կառավարության 2004 թ.-ի հունվարի 22-ի թիվ 130-Ն «Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման կանոնների, ջրամատակարարման և ջրահեռացման պայմանագրերի օրինակելի ձևերը, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերին միացման տեխնիկական պայմանների սահմանման կարգը հաստատելու մասին» որոշում (Թիրախներ III - XII)

Նշված որոշմամբ և որոշման հավելվածով սահմանված «Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման» կանոններով սահմանվում են խմելու ջրի մատակարարման ու ջրահեռացման, մատակարարվող ջրի և հեռացվող կեղտաջրերի հաշվառման ու դրանց դիմաց վճարման, խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համակարգերին միացման տեխնիկական պայմանների սահմանման կարգերը և կանոններով կարգավորվող հարաբերությունների մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները:

ՀՀ կառավարության 2005 թ.ի հունվարի 20-ի Հ64-Ն «Ջրակոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ճևարման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների մասին» որոշում.

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատում է այդ չափորոշիչները՝ բացառությամբ բնակչության կողմից խմելու, առողջարարական նպատակներով օգտագործվող ջրային ռեսուրսների սանիտարական պահպանման գոտիների տարածքների սահմանման

չափորոշիչների, որոնք սահմանում է առողջապահության պետական լիազորված մարմինը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների փաստացի չափերն ու սահմանագծերը, ելնելով յուրաքանչյուր ջրային ռեսուրսի առանձնահատկություններից, սահմանվում են Ջրի ազգային ծրագրի շրջանակում դաշտային աշխատանքների իրականացման միջոցով:

3. Ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման տարածքների սահմանման չափորոշիչներն են՝

ա) տարածքներ, որոնք պահպանվում են ջրային ռեսուրսների կենսաբանական, հիդրոլոգիական և ռեկրեացիոն արժեքների պահպանության համար,

բ) տարածքներ, որտեղ ապահովվում են մակերևութային ու ստորերկրյա ջրերի այնպիսի որակ և քանակ, որոնք կարող են պահանջվել մարդու առողջության ու բարեկեցության համար, ներառյալ խմելու ջուրը և այն ջրերը, որոնք օգտագործվում են բուժական ու էկոլոգիական ամբողջականության նպատակներով,

գ) ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման տարածքները կարող են ընդգրկել գետի կամ լճի հատվածներ, գերխոնավ տարածքներ, լճակներ և լճեր, ինչպես նաև մերձակա տարածքներ, որոնք ենթակա են պահպանման՝ իրենց բնական վիճակով, որպես գործող առողջ էկոլոգիական համակարգեր և տարածքներ, որտեղ կարող է առաջանալ մարդու գործունեության կամ բնական շրջակա միջավայրի վերականգնման անհրաժեշտություն՝ ջրերի որակի և քանակի վրա հեղեղումների հետևանքով առաջացած աղտոտվածության, էրոզիոն և այլ բացասական ազդեցությունների նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով,

դ) ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման տարածքները սահմանվում են մինչև 90 մ շառավղով:

4. Հոսքի ձևավորման տարածքների սահմանման չափորոշիչներն են՝

ա) տարածքներ, որտեղ ապահովվում են մակերևութային և ստորերկրյա ջրերի այնպիսի որակ և քանակ, որոնք կարող են պահանջվել մարդու բարեկեցության, ինչպես նաև էկոլոգիական ամբողջականության նպատակներով,

բ) հոսքի ձևավորման տարածքներն ընդգրկում են գետի ակունքն ամբողջությամբ, ստորերկրյա ջրադրյուրների և բնադրյուրների ակունքներն ամբողջությամբ, ինչպես նաև մերձակա տարածքները, որոնք ենթակա են

պահպանման՝ իրենց բնական վիճակով, որպես գործող առողջ և էկոլոգիական համակարգեր,

գ) հոսքի ձևավորման տարածքները սահմանվում են մինչև 4000 մ շառավղով :

5. Ստորերկրյա ջրերի պահպանման տարածքների սահմանման չափորոշիչներն են՝

ա) տարածքներ, որտեղ ապահովվում են հիդրոերկրաբանական, հիդրոլոգիական, կլիմայական պայմանները և ջրատար հորիզոնների պահպանությունը՝ չխախտելով էկոլոգիական ամբողջականությունը,

բ) ստորերկրյա ջրերի պահպանման տարածքները կարող են ընդգրկել նաև համայնքային սահմանագծված ջրհավաքները,

գ) ստորերկրյա ջրերի պահպանման տարածքները սահմանվում են մինչև 150 մ շառավղով:

6. Ջրապահպան գոտիների տարածքների սահմանման չափորոշիչներն են՝

ա) տարածքներ, որտեղ ապահովվում են ջրային ռեսուրսների աղբոսման, աղտոտման, տղմակալման և հյուժման կանխարգելումը, ինչպես նաև ջրային ռեժիմի համար բարենպաստ պայմանները,

բ) ջրապահպան գոտիների տարածքներն ընդգրկում են ջրային ռեսուրսների պահպանության համար նախատեսված բոլոր տարածքները,

գ) ջրապահպան գոտիների տարածքները սահմանվում են մինչև 32 մ երկարությամբ շերտի տեսքով:

7. Էկոտոնի տարածքների սահմանման չափորոշիչներն են՝

ա) ջրամերձ և ափամերձ առավել խոցելի տարածքներ, որոնք պահպանվում են մարդու գործունեության հետևանքով դրանց խախտումների նկատմամբ խոցելիության պատճառով,

բ) էկոտոնի տարածքներն ընդգրկում են գետերի, լճերի, լճակների, բնական ջրագոյացումների խոցելի ջրամերձ և ափամերձ հատվածները,

գ) էկոտոնի տարածքները սահմանվում են մինչև 150 մ շառավղով:

8. Անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչներն են՝

ա) տարածքներ, որտեղ ապահովվում են ջրամատակարարման, ջրահեռացման, ինչպես նաև հիդրոտեխնիկական կառուցվածքների շահագործումը, վերականգնումը և պահպանումը,

բ) տարածքներն ընդգրկում են ջրամատակարարման, ջրահեռացման և հիդրոտեխնիկական կառուցվածքներին անմիջապես հարող տարածքները,

զ) անօտարելի գոտիների տարածքները սահմանվում են մինչև 10 մ երկարությամբ շերտի տեսքով:

ՀՀ կառավարության 25 հունվարի 2005 թ.-ի 25-ի թիվ 76-Ն «Ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության արտակարգ իրավիճակի ռեժիմներ սահմանելու կարգի, հրահանգների և բնակչությանը մատակարարվող խմելու ջրի նվազագույն չափաքանակների, ինչպես նաև ջրային համակարգի կառավարչի կրած վնասների փոխհատուցման կարգի մասին» որոշում (Թիրախ XIV, XVIII)

Ըստ որոշման 10-րդ կետի.

Աղետի գոտում ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության վերաբերյալ հրահանգները սահմանում է ՀՀ կառավարությունը՝ հիմնվելով արտակարգ իրավիճակների բնագավառում պետական լիազոր մարմնի և՝

ա) վտանգավոր բնական երևույթի կամ տարերային, կամ էկոլոգիական աղետի ժամանակ՝ ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության պետական լիազոր մարմնի, ջրային համակարգերի կառավարման պետական լիազոր մարմնի ու տեղական ինքնակառավարման մարմնի եզրակացությունների վրա,

բ) որոշակի տարածքում կամ օբյեկտում խոշոր վթարի կամ տեխնածին աղետի ժամանակ՝ ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության պետական լիազոր մարմնի ու տեղական ինքնակառավարման մարմնի եզրակացությունների վրա,

գ) համաճարակի ժամանակ՝ ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության պետական լիազոր մարմնի ու առողջապահության ոլորտի պետական լիազոր մարմնի եզրակացությունների վրա,

դ) անասնահամաճարակի, բույսերի և գյուղատնտեսական մշակաբույսերի լայնորեն տարածված վարակիչ հիվանդության ժամանակ՝ գյուղատնտեսության պետական լիազոր մարմնի, ջրային համակարգերի կառավարման պետական լիազոր մարմնի ու ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության պետական լիազոր մարմնի եզրակացությունների վրա,

ե) զենքի տեսակների կիրառման հետևանքով ստեղծված իրավիճակի ժամանակ, որը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել մարդկային զոհերի, մարդկանց առողջության, շրջակա միջավայրի կայուն վիճակի խախտմանն ու ջրամատակարարման անհնարիությանը՝ պաշտպանության, առողջապահության պետական լիազոր մարմինների, ջրային համակարգերի կառավարման մարմնի ու ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության պետական լիազոր մարմնի եզրակացությունների վրա:

Ըստ կետ 11-ի.

Եթե աղետի գոտում գտնվող ջրային ռեսուրսը համարվում է խմելու ջրի աղբյուր կամ օգտագործվում է ռեկրեացիոն նպատակով, ապա սույն Բաժնի 10-րդ կետում նշված բոլոր հրահանգների սահմանումը պետք է հիմնվի նաև առողջապահության ոլորտի պետական լիազոր մարմնի եզրակացության վրա:

ՀՀ կառավարության 2005 թ.-ի հուլիսի 28-ի թիվ 1147-Ն «Ջրերի ստանդարտների սահմանման կանոնակարգերի մասին» որոշում (Թիրախ I)

I. Ընդհանուր դրույթներ

4. Ջրերի ստանդարտները մշակում են՝

խմելու-տնտեսական և կուլտուր-կենցաղային (մարդկանց կարիքները բավարարելու) ջրի որակի ստանդարտները՝ առողջապահության ոլորտի պետական լիազոր մարմինը՝ հաշվի առնելով ջրային տնտեսության ոլորտի պետական լիազոր մարմնի առաջարկությունները:

II. Խմելու-տնտեսական և կուլտուր-կենցաղային (մարդկանց կարիքները բավարարելու) նպատակով օգտագործվող ջրերի ստանդարտների սահմանման կանոնակարգը

7. Խմելու-տնտեսական նպատակով օգտագործվող ջուրը պետք է համապատասխանի մարդկանց՝ անկախ տարիքից ու սեռից, առողջության, ներկա և ապագա սերունդների համար անվտանգ մանրէաբանական, ճառագայթային, օրգանոլեպտիկ, վնասակար նյութերի սանիտարական նորմաներով ու կանոններով սահմանված ցուցանիշներին ու Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 70-րդ հոդվածի դրույթներին:

8. Կուլտուր-կենցաղային նպատակով օգտագործվող ջրի ստանդարտները պետք է համապատասխանեն խմելու ջրի ստանդարտներին և ռեկրեացիոն բոլոր նպատակների (հանգստի, լողի, լողանալու, սպորտի, տուրիզմի և այլն) համար սահմանված չափանիշներին, և լինեն անվտանգ մարդկանց առողջության (ներկա և ապագա սերունդների) համար՝ մանրէաբանական, օրգանոլեպտիկ, վնասակար նյութերի սանիտարական նորմերի ու կանոնների առումով ու պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 70-րդ հոդվածի դրույթներին:

ՀՀ կառավարության 2011թ. հունվարի 27-ի թիվ 75-Ն «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշում (Թիրախներ IX, X, XI, XII, XIII, XVI, XVIII և XIX)

Համաձայն այդ որոշման՝ սահմանվում է ջրի որակի 5 դաս՝ «գերազանց», «լավ», «միջին», «անբավարար» և «վատ»: Որակի նորմերը սահմանվում են ընդհանուր առմամբ 117 պարամետրերի համար, որոնց բաշխվածությունը տրվում է ստորև ներկայացվող աղյուսակ 1-ում: Հարկ է նշել, որ որոշման 5 կարգից 3-ը (գերազանց, լավ և միջին) պիտանի են համարվում սաղմոնազգի և ծածանազգի ձկնատեսակների բուծման և պահպանման համար:

Աղյուսակ 1. Հայաստանում ջրի որակի նորմերի սահմանման համար օգտագործվող պարամետրերը

| Պարամետրերի խումբ | Պարամետրերի քանակը |
|--|--------------------|
| Թթվածնային ռեժիմ | 4 |
| Ջերմային ռեժիմ | 1 |
| Հանքայնացում | 5 |
| Սննդանյութեր | 9 |
| Թթվայնություն | 2 |
| Այլ ցուցանիշներ | 5 |
| Մետաղներ | 28 |
| ՋՇԴ առաջնային աղտոտիչներ (օրգանական միկրոաղտոտիչներ) | 33 |
| ՋՇԴ այլ հատուկ աղտոտիչներ | 9 |
| Միկրոկենսաբանական և կենսաբանական պարամետրեր | 12 |
| Ռադիոակտիվություն | 2 |
| Այլ հատուկ աղտոտիչներ | 7 |
| Ընդամենը | 117 |

Հիմնվելով մոնիտորինգի արդյունքների վրա՝ ջրային մարմինները դասակարգվում են մակերևութային ջրերի որակի հինգ դասերից որևէ մեկով: Այնուհետև այդ դասակարգումը հաշվի է առնվում ջրօգտագործման նպատակը սահմանելիս: Այսպես, ջրօգտագործումը, ըստ որակի դասի, սահմանվում է ստորև ներկայացվող աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Ջրօգտագործման նպատակի սահմանում՝ հիմնվելով ջրի որակի դասի վրա

| Նշանակություն/ ֆունկցիա | Կարգը՝ ըստ որակի նշանակության | Երրորդ փուլի | | | | |
|--|-------------------------------------|------------------|--------------|-----------------|----------|-------------|
| | | I կարգ, գերազանց | II կարգ, լավ | III կարգ, միջին | IV կարգ, | V կարգ, վատ |
| Ազգային ջրային պաշար | | √ ¹ | √ | √ | √ | √ |
| Ջրահոսքերի պահպանություն | | √ | √ | - ² | - | - |
| Էկոհամակարգերի գործունեություն, ձկների բուծում/պահպանում | Սաղմոնային ձկներ | √ | √ | - | - | - |
| | Կարպային ձկներ | √ | √ | √ | - | - |
| Ոռոգում ³ | | √ | √ | √ | √ | |
| Արդյունաբերական ջրօգտագործում | | √ | √ | √ | √ | √ |
| Էներգիայի արտադրություն | | √ | √ | √ | √ | √ |

¹) Կիրառվում է ²) Չի կիրառվում ³) Ոռոգման նպատակով կիրառվում է, եթե pH-ի արժեքը չի գերազանցում 8.5-ը, իսկ էլեկտրահաղորդականության արժեքը փոքր է 1000 մկՍիմ/սմ-ից:

Դասակարգումը հիմնվում է ավելի քան 100 ցուցանիշի վրա: Եթե մակերևութային ջրային մարմնի փորձագնման տարբեր ցուցանիշներ ցույց են տալիս որակի տարբեր դասեր, ապա դասակարգման ժամանակ վերցվում է վատագույնը, օրինակ՝ եթե որևէ ջրային մարմնի համար ցուցանիշներից մեկը ցույց է տալիս անբավարար (IV դաս) կարգավիճակ, իսկ մնացած բոլորը՝ ավելի «լավ» կարգավիճակ, ապա ջրային մարմինը դասակարգվում է որպես անբավարար կարգավիճակ (IV դաս) ունեցող:

Շատ ցուցանիշների համար օգտագործվում է ֆոնային կոնցենտրացիան: Նման դեպքերում կիրառվում են տարբեր ֆոնային կոնցենտրացիաներ՝ հիմնվելով տվյալ ջրավազանի բնութագրերի վրա: ՀՀ կառավարության «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշման մեկ այլ կարևոր ասպեկտ է այն, որ համաձայն որոշման՝ մակերևութային ջրի որակի նորմերը պետք է թարմացվեն ամեն վեց տարին մեկ՝ նոր տեղեկատվություն և գիտելիքներ ձեռք բերելուն զուգահեռ:

ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 3-ի արձանագրային նիստի «Ջրավազանային կառավարման մոդելային պլանի բովանդակությունը հաստատելու մասին» թիվ 4 որոշում (Թիրախ XIX)

Որոշումը հիմք հանդիսացավ ջրավազանային կառավարման վեց պլանի տեխնիկական բնութագրերի կազմման և պլանների մշակման համար:

Սակայն այս օրենսդրական բազան ամբողջությամբ չի կանոնակարգում սույն փաստաթղթում ուսումնասիրվող թիրախային ոլորտները:

ՀՀ կառավարության 2011 թ. -ի դեկտեմբերի 29-ի թիվ 1913-Ն «Հայաստանի Հանրապետությունում վարակիչ հիվանդությունների կանխարգելման և դրանց դեմ պայքարի 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ռազմավարական ծրագրի միջոցառումների ցանկը հաստատելու մասին» որոշում (Թիրախ II)

Ծրագրի նպատակը Հայաստանի Հանրապետությունում վարակիչ հիվանդությունների բեռի նվազեցումն է: Որպես համազգային նշանակություն ունեցող փաստաթուղթ, սույն ռազմավարական ծրագիրն այն գործիքն է, որը կնպաստի Հայաստանի Հանրապետության բնակչության առողջության պահպանմանը, վարակիչ հիվանդությունների առումով ձեռքբերումներն ամրապնդելուն, հիմնախնդիրները հնարավորինս լուծելուն՝ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և դրանց հետ պայքարի ճանապարհով և ապահովելու երկարաժամկետ առաջընթաց վարակիչ հիվանդությունների համաճարակաբանական հսկողության և արձագանքման ոլորտում՝ համագործակցելով ոլորտում գործադրվող այլ ծրագրերի հետ: Ծրագրի խնդիրներից են ինտեգրացված համաճարակաբանական հսկողության համակարգի ձևավորումը, արձագանքման կարողությունների, ախտորոշման լաբորատոր համակարգի և հիվանդություններով պայմանավորված արտակարգ իրավիճակներին արձագանքման կարողությունների զարգացումը:

ՀՀ կառավարության 2010 թ.-ի հունվարի 14 -ի թիվ 46-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 2012 թ.--ի հոկտեմբերի 10-ի թիվ 1285-Ն որոշմամբ հաստատվել է պատվաստումների ազգային նոր օրացույցը, որի համաձայն 2012 թվականի նոյեմբերից ներդրվել է ռոտավիրուսային վարակի դեմ պատվաստումը, որով ենթակա երեխաների օրացուցային ժամկետներում ընդգրկումը 2012թ. դեկտեմբերի 20-ի դրությամբ կազմել է 90%: (Թիրախ II)

ՀՀ առողջապահության նախարարի 2002 թ.- ի նոյեմբերի 29-ի թիվ 803 հրամանով հաստատված «Խմելու ջուր: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջրի որակին ներկայացվող պահանջներ: Որակի հսկողություն N2-III-Ա2-1 սանիտարական կանոններ և նորմեր» (գրանցված՝ 28 դեկտեմբերի 2002թ.), ինչով սահմանվում են խմելու ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջները, ինչպես նաև արտադրվող և բնակավայրերին ջրամատակարարման համակարգերով տրվող խմելու ջրի որակի հսկողության կանոնները: (Թիրախ I)

ՀՀ առողջապահության նախարարի 2002 թ.- ի դեկտեմբերի 25 –ի թիվ 876 հրամանով հաստատված «Խմելու տնտեսական նշանակության ջրմուղների և ջրամատակարարման աղբյուրների սանիտարական պահպանման գոտիներ N2-III-Ա2-2 սանիտարական կանոններ և նորմեր» (գրանցված՝ 28 դեկտեմբերի 2002թ.), ինչով սահմանվում են խմելու տնտեսական նշանակության ջրմուղների և ջրամատակարարման աղբյուրների սանիտարական պահպանման գոտիների կազմակերպմանը և շահագործմանը ներկայացվող սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային պահանջները: (Թիրախ I)

ՀՀ առողջապահության նախարարի 2006 թ. մայիսի 17-ի թիվ 534-Ն հրամանով հաստատված «Լողավազանների կառուցվածքին, շահագործմանը և ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2-III-2.2.4 սանիտարահամաճարակային կանոնները և նորմերը (Թիրախ I, II)

1.1 Սույն պետական սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի (այսուհետ՝ սանիտարական կանոններ) պահանջները տարածվում են ինչպես նոր կառուցվող, վերակառուցվող, այնպես էլ գործող սպորտային և առողջարարական նշանակության լողավազանների, այդ թվում՝ բացօթյա լողավազանների դպրոցական և նախադպրոցական կազմակերպությունների, առողջարարական հիմնարկների, բաղնիքային համալիրների (սաունաների) կազմում գործող լողավազանների վրա:

Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունները

Հայաստանի հանրապետությունը <<Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին>> 1998թ.-ի Օրհուսի կոնվենցիան վավերացրել է 2001թ.-ի մայիսի 14-ին:

Կոնվենցիայի նպատակը արձանագրված է հոդված 1-ում. <<Ներկա և ապագա սերունդների յուրաքանչյուր անդամի առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում ապրելու իրավունքի պաշտպանությանն օժանդակելու համար, սույն կոնվենցիայի դրույթներին համապատասխան, յուրաքանչյուր Կողմ երաշխավորում է շրջակա միջավայրին առնչվող հարցերով տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության իրավունքը>>:

Հայաստանի Հանրապետությունը 1992թ. ընդունված ՄԱԿ-ի ԵՏՀ-ի <<Անդրսահմանային ջրային հոսքերի և միջազգային լճերի պաշտպանության և օգտագործման մասին կոնվենցիային>> (Ջրային կոնվենցիա) կից <<**Ջուր և առողջություն**>> արձանագրությունը ստորագրել է 1999թ. հունիսի 17-ին, Լոնդոնում, սակայն դեռ չի վավերացրել:

Հասարակության մասնակցությունը և աջակցությունը արձանագրության թիրախների մշակման ու իրականացման հարցում ունի կենսական նշանակություն: Այն հաստատագրված է արձանագրության 5 - րդ հոդվածի <<ը>> ենթակետով, այն է. <<լրատվության մատչելիությունը և հասարակության մասնակցությունը ջրի և առողջության խնդիրների վերաբերյալ որոշումներ ընդունելու գործընթացին, ի թիվս այլ միջոցների, անհրաժեշտ են ընդունվող որոշումների որակը բարձրացնելու, դրանց իրականացմանը նպաստելու, համապատասխան հարցերով հասարակության իրազեկությունը բարձրացնելու նպատակով, պետք է հնարավորություն ընձեռնվի հասարակությանը՝ արտահայտելու իր անհանգստությունը և պետական մարմիններին՝ հավուր պատշաճի հաշվի առնելու այդ անհանգստությունը...>>: Արձանագրության 6-րդ, 7-րդ, 9 -րդ և 15-րդ հոդվածները նույնպես անդրադառնում են հանրային մասնակցությանը և տեղեկատվության հրատարակմանը:

Հայաստանի Հանրապետության մասնակցությունը միջազգային բնապահպանական համաձայնագրերին ներկայացված է հավելված 1-ում:

Միջազգային առողջապահական (բժշկասանիտարական) կանոնների ներդրման ուղղությամբ.

«Միջազգային առողջապահական (բժշկասանիտարական) կանոնների հարցերով ազգային համակարգող մարմնի և շահագրգիռ մարմինների համագործակցության մեխանիզմները և համակարգման ընթացակարգերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության ի 2010թ.-ի օգոստոսի 26-ի թիվ 1138-Ն որոշմամբ կանոնակարգվել են հանրային առողջապահության ոլորտում արտակարգ իրավիճակների, ներառյալ ջրով փոխանցվող վարակիչ հիվանդություններով պայմանավորվածները, տեղեկատվության փոխանակման և համագործակցության հարցերը:

«Կենսաբանական, քիմիական և ճառագայթային գործոններով պայմանավորված, հանրային առողջապահության ոլորտում արտակարգ իրավիճակ ներկայացնող դեպք արձանագրելիս, միջազգային առողջապահական (բժշկասանիտարական) կանոնների ներդրման հարցերով պատասխանատուին տեղեկատվության հաղորդման օրինակելի ընթացակարգը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի 2010 թ.-ի նոյեմբերի 29-ի թիվ 26-Ն հրաման

«Հայաստանի Հանրապետության ջրային տնտեսության ոլորտում հանրային առողջապահության խնդիրների առաջացման դեպքում ՀՀ առողջապահության նախարարության և ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի համագործակցության ստանդարտ ընթացակարգերը համայնքում ջրային գործոնով պայմանավորված՝ վարակիչ հիվանդության դեպքերի արձանագրում» ՀՀ առողջապահության նախարարի և ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի համատեղ հրամանը (ՀՀ ԱՆ 06 դեկտեմբերի 2011թ. թիվ 24-Ն հրաման և ՀՀ ՏՆ ջրային տնտեսության կոմիտեի 12 դեկտեմբերի 2011թ. թիվ 163-Ն հրաման)

ԵՄ Ջրի շրջանակային դիրեկտիվի ներդրման ուղղությամբ.

ՀՀ կառավարության 2011թ. հունվարի 27-ի թիվ 75-Ն որոշումը <<Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին>>

Հայաստանի պարտավորություններն՝ ըստ ասոցացման համաձայնագրի նախագծի

ԵՄ ՁՇԴ սկզբունքների հետ ներդաշնակեցումը և ԵՄ ՁՇԴ մերթոդաբանությունների ընդունումը Հայաստանի ջրային ոլորտի «երկրորդ սերնդի» բարեփոխումների էական տարրերից են: Հայաստան-ԵՄ ասոցացման համաձայնագրի նախագիծը և ԵՄ-ի կողմից Կովկասի տարածաշրջանում իրականացվող ծրագիրն այս գործընթացի առանցքային շարժիչ ուժերից են:

Ջրի շրջանակային դիրեկտիվ

Ջրի շրջանակային դիրեկտիվը (պաշտոնապես՝ Եվրոպական խորհրդարանի և խորհրդի դիրեկտիվ 2000/60/EC ջրային քաղաքականության ոլորտում Եվրոպական համայնքի գործունեության շրջանակների ստեղծման վերաբերյալ) ընդունվել է 2000թ. հոկտեմբերին և ուժի մեջ է մտել 2000թ. դեկտեմբերին:

Համաձայն Հայաստան-ԵՄ ասոցացման համաձայնագրի նախագծի՝ որա՝ ուժի մեջ մտնելուց հետո 5 տարվա ընթացքում ԵՄ ՁՇԴ կոնստեքստում Հայաստանի համար պետք է կիրառվեն հետևյալ դրույթները.

- ազգային օրենսդրության ընդունում և լիազոր մարմնի/մարմինների նշանակում, գետավազանային տարածքների բացահայտում և միջազգային գետերի, լճերի և առափնյա ջրերի պահպանության համապատասխան համակարգում (հոդվածներ 3.1 – 3.7),
- գետավազանային տարածքների բնութագրիչների վերլուծություն (հոդված 5),
- ջրի որակի մոնիտորինգի ծրագրերի հիմնում (հոդված 8),
- գետավազանային կառավարման պլանների մշակում, խորհրդակցություններ հանրության հետ և պլանների հրատարակում (հոդվածներ 13 և 14):

Հեղեղումների դիրեկտիվ

Հեղեղումների դիրեկտիվը (պաշտոնապես՝ Եվրոպական խորհրդարանի և խորհրդի 2007/60/EC դիրեկտիվ հեղեղումների ռիսկի գնահատման և կառավարման մասին) ընդունվել է 2007թ. հոկտեմբերին և ուժի մեջ է մտել 2007թ. նոյեմբերին: Այն նպատակ ունի կրճատելու և կառավարելու հեղեղումների այն ռիսկերը, որոնք ազդեցություն ունեն մարդկային առողջության, շրջակա միջավայրի, մշակութային ժառանգության և տնտեսական գործունեության վրա:

Համաձայն Հայաստան-ԵՄ ասոցացման համաձայնագրի նախագծի՝ դրա՝ ուժի մեջ մտնելուց հետո 4 տարվա ընթացքում Հեղեղումների դիրեկտիվի կոնտեքստում Հայաստանի համար պետք է կիրառվեն հետևյալ դրույթները.

- ազգային օրենսդրության ընդունում և լիազոր մարմնի/մարմինների նշանակում,
- հեղեղումների նախնական գնահատման իրականացում (հոդվածներ 4 և 5),
- հեղեղումների վտանգների և քարտեզների ու հեղեղումների ռիսկերի քարտեզների պատրաստում (հոդված 6),
- հեղեղումների ռիսկերի կառավարման պլանների մշակում (հոդված 7):

Քաղաքային կեղտաջրերի մաքրման դիրեկտիվ

Քաղաքային կեղտաջրերի մաքրման դիրեկտիվը (պաշտոնապես՝ Քաղաքային կեղտաջրերի մաքրման մասին 91/271/EEC դիրեկտիվ՝ վերափոխված 98/15/EC դիրեկտիվով և Եվրոպական հանձնաժողովի 1882/2003 կանոնակարգով) ընդունվել և ուժի մեջ է մտել 1991թ.-ի մայիսին: Դիրեկտիվի նպատակն է պահպանել շրջակա միջավայրը քաղաքային կեղտաջրերի արտանետումների և արդյունաբերական ոլորտի արտանետումների կամայական ազդեցություններից: Այն կանոնակարգում է քաղաքային ջրերի հավաքումը, մաքրումը և արտանետումը, ինչպես նաև որոշ արդյունաբերական ոլորտների կեղտաջրերի մաքրումը և արտանետումը:

Համաձայն Հայաստան-ԵՄ ասոցացման համաձայնագրի նախագծի, դրա՝ ուժի մեջ մտնելուց հետո 4 տարվա ընթացքում Քաղաքային կեղտաջրերի մաքրման դիրեկտիվի կոնտեքստում Հայաստանի համար պետք է կիրառվեն հետևյալ դրույթները.

- ազգային օրենսդրության ընդունում և լիազոր մարմնի/մարմինների նշանակում,
- քաղաքային կեղտաջրերի կուտակման և մաքրման կարգավիճակի գնահատում,
- խոցելի տարածքների և ազլմերացիաների բացահայտում (հոդված 5.1 և հավելված II)
- քաղաքային կեղտաջրերի մաքրման պահանջների իրականացման տեխնիկական և ներդրումային ծրագրի պատրաստում (հոդված 17.1)

Խմելու ջրի դիրեկտիվ

Խմելու ջրի դիրեկտիվը (պաշտոնապես՝ Մարդկային սպառման համար նախատեսված ջրի որակի մասին 98/83/EC դիրեկտիվ՝ վերափոխված Եվրոպական հանձնաժողովի 1882/2003 կանոնակարգով) առնչվում է մարդկային սպառման համար նախատեսվող ջրի որակին և Եվրոպական միության Ջրամատակարարման և ջրահեռացման կանոնակարգի մաս է կազմում:

Համաձայն Հայաստան-ԵՄ ասոցացման համաձայնագրի նախագծի, դրա՝ ուժի մեջ մտնելուց հետո 4 տարվա ընթացքում Խմելու ջրի դիրեկտիվի կոնտեքստում Հայաստանի համար պետք է կիրառվեն հետևյալ դրույթները.

- ազգային օրենսդրության ընդունում և լիազոր մարմնի/մարմինների նշանակում,
- խմելու ջրի ստանդարտների հիմնում (հոդվածներ 4 և 5),
- մոնիտորինգի համակարգի հիմնում (հոդվածներ 6 և 7),
- սպառողներին տեղեկատվություն տրամադրելու մեխանիզմի հիմնում (հոդված 13):

Նիտրատների դիրեկտիվ

Նիտրատների դիրեկտիվը (պաշտոնապես՝ Գյուղատնտեսական աղբյուրներից ջրերի նիտրատներով աղտոտումից պահպանության 91/676/EC դիրեկտիվ՝ վերափոխված Եվրոպական հանձնաժողովի 1882/2003 կանոնակարգով) ընդունվել և ուժի մեջ է մտել 1991թ. դեկտեմբերին: Այն նպատակ ունի պահպանելու Եվրոպայի ողջ տարածքում ջրի որակը՝ կանխելով գյուղատնտեսական աղբյուրներից ստորերկրյա և մակերևութային ջրերի նիտրատներով աղտոտումը, ինչպես նաև խթանելով ֆերմերային տնտեսությունների վարման օրինակելի մեթոդները:

Համաձայն Հայաստան-ԵՄ ասոցացման համաձայնագրի նախագծի, դրա՝ ուժի մեջ մտնելուց հետո 4 տարվա ընթացքում Նիտրատների դիրեկտիվի կոնտեքստում Հայաստանի համար պետք է կիրառվեն հետևյալ դրույթները.

- ազգային օրենսդրության ընդունում և լիազոր մարմնի/մարմինների նշանակում,
- մոնիտորինգի ծրագրերի հիմնում (հոդված 6),
- աղտոտված ջրերի կամ ռիսկային ջրերի բացահայտում և նիտրատներից խոցելի գոտիների նշանակում (հոդված 3),
- նիտրատներով խոցելի տարածքների համար գործողությունների պլանի և գյուղատնտեսության վարման օրինակելի մեթոդների մշակում (հոդվածներ 4 և 5):

Գ. Ինստիտուցիոնալ դաշտ

Նոր ջրային օրենսգրիքի ընդունմամբ ներդրվեց նոր ինստիտուցիոնալ համակարգ, որի համաձայն ոլորտի կառավարումը իրականացվում է հետևյալ մարմինների կողմից.

Ջրի ազգային խորհուրդը ջրային ռեսուրսների կառավարման բնագավառում բարձրագույն խորհրդատվական մարմինն է, որը միջբնագավառային մասնակցության միջոցով քննարկում և առաջարկություններ է ներկայացնում ջրի ազգային քաղաքականության, ջրի ազգային ծրագրի և բնագավառին վերաբերող այլ իրավական ակտերի վերաբերյալ: Ջրի ազգային խորհրդի նախագահը Հայաստանի Հանրապետության վարչապետն է:

Վեճերը լուծող հանձնաժողովը կարող է լուծել ջրային հարաբերություններում ծագած ջրօգտագործման թույլտվությունների առնչվող վեճերը:

Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմինը

1) համակարգում է Հայաստանի Հանրապետության ջրի ազգային քաղաքականության և ջրի ազգային ծրագրի նախագծի նախապատրաստման աշխատանքները,

2) ջրի ազգային քաղաքականության և ջրի ազգային ծրագրի սահմաններում իրականացնում է ջրային ռեսուրսների կառավարումը և պահպանությունը,

3) մշակում է ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման էկոլոգիատնտեսական հիմնավորման սկզբունքները և նորմերը,

4) դասակարգում է ջրային ռեսուրսներն ըստ օգտագործման գործառույթի և կարգավիճակի,

5) մասնակցում է ջրերի ստանդարտների մշակմանը և վերահսկում է դրանց կիրառումը,

6) ջրի ազգային ծրագրի համաձայն, սահմանում է ջրային ռեսուրսների սահմանային թույլատրելի կոնցենտրացիան ու էկոլոգիական նվազագույն ելքերը և հաստատում է կեղտաջրերի թույլատրելի սահմանային արտահոսքի որակական և քանակական չափանիշները,

7) հաստատում է մակերևութային և ստորերկրյա ջրառի սահմանային մեծությունները,

8) ապահովում է ջրավազանային կառավարման պլանների մշակումը և դրանց իրականացումը,

9) իր հաստատած կանոնակարգի համաձայն՝ լիազորված անձանց միջոցով ստանում է ջրօգտագործման թույլտվության հայտերը,

10) տալիս է ջրօգտագործման թույլտվությունները,

11) մասնակցում է ջրօգտագործման և ջրահեռացման, ինչպես նաև ջրային համակարգերում կորուստների նորմատիվների մշակմանը.

12) աջակցում է ջրային ռեսուրսների մոնիտորինգի իրականացմանը, պլանավորման և կառավարման գործընթացում ներառում է դրանց արդյունքները,

13) ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության բնագավառում ապահովում է միասնական գիտատեխնիկական պետական քաղաքականության իրականացումը, կազմակերպում է բնագավառի հիմնարար ու կիրառական գիտական հետազոտությունների կատարման և արդյունքների ներդրման գործընթացը,

14) համակարգում է ջրային ռեսուրսների կառավարման և պահպանման հարցերին առնչվող ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքները,

15) բացահայտում է ջրհավաք ավազանների հյուծման սպառնալիքները և մշակում է միջոցառումներ՝ ջրային էկոհամակարգերի վրա վնասակար ազդեցությունները կանխելու համար,

16) կառավարության հաստատած կարգին համապատասխան ապահովում է իր կողմից մշակված փաստաթղթերի հրապարակայնությունը և հասարակայնության ծանուցումը,

17) սահմանում է ստորերկրյա ջրերի արտոնյալ օգտագործման իրավունքի ձեռքբերման համար անհրաժեշտ ջրառի սահմանային ծավալի չափը՝ սույն օրենսգրքով սահմանված դեպքերի համար,

18) ապահովում է ջրաէկոհամակարգերի պահպանման գոտիների քարտեզների մշակումը,

19) ջրի ազգային ծրագրի պահանջների համաձայն վերահսկողություն է իրականացնում ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության բնագավառում սահմանված նորմերի՝ չափաքանակների և սահմանափակումների կատարման նկատմամբ:

ՀՀ բնապահպանության նախարարության ջրային ռեսուրսների կառավարման գործակալությունը իրականացնում է ջրային ռեսուրսների պահպանություն և կառավարում:

Ջրային ռեսուրսների առավել արդյունավետ, նպատակուղղված և ապակենտրոնացված կառավարումը խթանելու նպատակով ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կառուցվածքում ստեղծվել է 6 տարածքային

ստորաբաժանում՝ Հյուսիսային, Ախուրյանի, Արարատյան, Սևանի, Հրազդանի և Հարավային (նկար 1):



Նկար 1 – Հայաստանի ջրավազանային կառավարման տարածքային բաժինները⁶

Ջրավազանային տարածքային կառավարման բաժինները (ՉՏԿԲ) պատասխանատու են ավազանային մակարդակով ջրավազանային կառավարման պլանների մշակման, ջրօգտագործման թույլտվությունների գրանցման, ջրային ռեսուրսների պահպանության ապահովման, ջրօգտագործման թույլտվություններով ամրագրված պայմանների իրավակիրարկման, ջրառի ռեժիմի սահմանման, ինչպես նաև ստեղծված հինգ ջրավազանային կառավարման տարածքների համար ջրային ռեսուրսների բաշխման պլանների մշակման համար:

⁶ ՀՀ բնապահպանության նախարարություն 2012. Բարեփոխումների տասնամյա փորձը դեպի ԵՄ ջրի շրջանակային դիրեկտիվ

ՀՀ բնապահպանության նախարարության <<Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն>> ՊՈԱԿ-ն (ՇՄՆՄԿ) իրականացնում է Հայաստանում մակերևութային ջրի որակի մոնիտորինգ: Ջրային ռեսուրսների որակի մոնիտորինգի համակարգը երկրում հիմնադրվել է 1964թ.-ին, սակայն 1992թ.-ից հետո ջրային ռեսուրսների որակին առնչվող միջոցառումներն էապես կրճատվեցին: Սկսած 2007թ.-ից՝ ՇՄՆՄԿ-ն գործում է ողջ հզորությամբ և տարեկան 1,2000 նմուշ է փորձագննում 131 դիտակետից (տարեկան 6-12 նմուշ յուրաքանչյուր դիտակետից):

ՀՀ բնապահպանության նախարարության իդրոերկրաբանական մոնիտորինգի կենտրոնը գնահատում է Հայաստանի տարածքում քաղցրահամ ջրերի ձևավորման հիմնական միտումները, դրանց քանակական և որակական հատկանիշները, ինչպես նաև տարածաշրջանային փոփոխությունները:

Ստորերկրյա ջրադեղյուրների և հորերի պարբերական դիտարկումներն իրականացվում են հանրապետությունում՝ սկսած 1950-ական թվականներից: Այդուհանդերձ, սկսած 1990թ.-ից՝ շուրջ 15 տարով դադարեց ստորերկրյա ջրերի մոնիտորինգը, չնայած Հայաստանի խմելու ջրի շուրջ 96%-ը ստորերկրյա ջրերն են: 2005թ.-ից ի վեր այդ նպատակով ստեղծվեց հիդրոերկրաբանական մոնիտորինգի կենտրոնը, սակայն, անբավարար ֆինանսավորման պատճառով 2006-2008թթ. կենտրոնի կողմից ստորերկրյա ջրերի մոնիտորինգն իրականացվում էր մասնակիորեն, սակայն սկսած 2009թ.-ից՝ այն իրականացվում է ամբողջությամբ: Հիդրոերկրաբանական մոնիտորինգն իրականացվում է ջրադեղյուրների, ծախսի, մակարդակի (ճնշման) և ջերմաստիճանի չափումների միջոցով: Չափումներն իրականացվում են 6 ջրավազանային տարածքների հիմնական ցանցի 70 դիտահորերից և ջրադեղյուրներից:

ՀՀ բնապահպանության նախարարության հանրապետական բնապահպանական պետական տեսչությունը վերահսկում է ջրօգտագործողների կողմից ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության նորմերի և պահանջների պահպանումը, ներառյալ՝ ջրային ռեսուրսներից թույլատրված ջրառը և կեղտաջրերի արտանետումների քանակը (բացառությամբ ռադիոակտիվ նյութերի): Տեսչությունը նաև պատասխանատու է ջրօգտագործողներից ջրառի, ջրի վերադարձի և որակի վերաբերյալ ստացված տվյալների պահպանման համար: Ջրօգտագործման և աղտոտման արտանետման մոնիտորինգն իրականացվում է 198 տեղանքից: Հիդրոլոգիական և ջրի որակի մոնիտորինգի ցանցը Հայաստանի մակերևութային և ստորերկրյա ջրերի համար ամփոփվում է ստորև տրվող աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3. Մակերևութային և ստորերկրյա ջրերի մոնիտորինգի ցանցը

| Գետավազան | Տարածքը (կմ ²) | Հիդրոլոգիական դիտակետ | | Մակերևութային և ջրի որակի նմուշառման կետ | | Ստորերկրյա ջրաղբյուրներ և հորեր | | Ջրօգտագործում և աղտոտիչներ ի արտանետում | |
|-----------------|----------------------------|-----------------------|-----------------------------------|--|-----------------------------------|---------------------------------|-----------------------------------|---|---------------------------|
| | | Քանոց | կմ ² 1 դիտակետի հաշվով | Քանոց | կմ ² 1 դիտակետի հաշվով | Քանոց | կմ ² 1 դիտակետի հաշվով | Քանոց | կմ ² 1 դիտակետ |
| Ախուրյանի | 5,044 | 17 | 297 | 14 | 360 | 8 | 631 | 47 | 107 |
| Արարատյան | 4,460 | 13 | 319 | 16 | 279 | 9 | 496 | 22 | 203 |
| Հյուսիսային | 7,068 | 23 | 307 | 25 | 283 | 6 | 1178 | 34 | 208 |
| Սևանի | 4,806 | 14 | 339 | 22 | 216 | 11 | 437 | 26 | 185 |
| Հրազդանի | 3,881 | 16 | 243 | 33 | 118 | 27 | 144 | 36 | 108 |
| Հարավային | 4,484 | 9 | 498 | 21 | 213 | 9 | 498 | 33 | 136 |
| Ընդամենը | 29,743 | 92 | 323 | 131 | 227 | 70 | 425 | 198 | 150 |

ՀՀ բնապահպանության նախարարության կենսառեսուրսների կառավարման գործակալությունը իրականացնում է Հայաստանի կենսառեսուրսների կառավարում և պահպանություն:

ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեն իրականացնում է պետական սեփականություն հանդիսացող ջրային և ոչ մրցակցային ջրամատակարարման համակարգերի կառավարումըն ապահովում է դրանց անվտանգ օգտագործումը:

ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեն՝

1) մասնակցում է ջրի ազգային քաղաքականության և ջրի ազգային ծրագրի նախագծի նախապատրաստման աշխատանքներին,

2) ապահովում է ջրային համակարգերի ներդրումային քաղաքականության մշակումն ու իրականացումը, ինչպես նաև ներդրումային ծրագրերի փորձաքննության կազմակերպումը,

3) ապահովում է ջրային համակարգերի վրա ազդող օբյեկտների շինարարական և վերակառուցման աշխատանքների նախագծային փաստաթղթերի նախնական փորձաքննությունն ու առաջարկություններ ներկայացնելը,

4) մասնակցում է ջրամատակարարման և ջրահեռացման, ինչպես նաև այլ ջրային համակարգերում կորուստների նորմատիվների մշակմանը.

5) ապահովում է ջրային հողերի ու դրանց ջրակոհամակարգերի պահպանման գոտիների օգտագործման սահմանափակումների և նորմերի սահմանումը,

6) մասնակցում է օգտագործելի ջրային ռեսուրսների պահանջարկի հաշվարկման ամենամյա և հեռանկարային աշխատանքներին,

7) ոլորտում առևտրային գործունեություն իրականացնող կազմակերպություններում պետական բաժնեմասի (գույքի) կառավարման հետ կապված գործառույթների ներառյալ պետական սեփականություն հանդիսացող ջրային և ոչ մրցակցային ջրամատակարարման համակարգերի արդյունավետ կառավարման պայմանագրերի կնքման և ջրային համակարգերի օգտագործման թույլտվությամբ սահմանված պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության ապահովումը,

8) իր իրավասությունների սահմաններում օժանդակում է ոլորտին առնչվող հարցերի վերաբերյալ միջազգային համագործակցության իրականացման:

Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը հանձնվել են կոնցեսիոն կառավարման հետևյալ կազմակերպություններին:

«Երևան Ջուր» ՓԲԸ - 2006թ. 10 տարի ժամկետով Երևան քաղաքի և շրջակա մի շարք գյուղերի ջրային համակարգերի կառավարումը տրված է վարձակալության ֆրանսիական «Վեոլիա» (Veolia) կազմակերպությանը:

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն 2004թ. մրցույթով փոխանցված է ֆրանսիական «Սաուր» (Saur) կազմակերպությանը: Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է 3 տարածքային մասնաճյուղի միջոցով գրեթե ամբողջ Հայաստանի տարածքում:

2004թ. ընթացքում «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ից վերակազմակերպման ճանապարհով առանձնացվել են *«Շիրակ-ջրմուղկոյուղի»*, *«Լոռի-ջրմուղկոյուղի»* և *«Նոր Ակունք»* ՓԲԸ-ները, որոնց բաժնետոմսերի 51%-ը պատկանում է Հայաստանի Հանրապետությանը, իսկ 49%-ը՝ սպասարկման տարածքի համապատասխան համայնքներին: Վերը նշված երեք կազմակերպության կառավարումը 2009 թ.-ից երեք տարով (մեկ տարի երկարաձգելու պայմանով) համատեղ իրականացվում է «Էյ-Ի-Ջի» ՍՊԸ-ի, հանրային ծառայությունները մատուցող և խորհրդատվական գերմանական «ԷմՎիՎի» (MVG) կազմակերպությունների կողմից:

Աղյուսակ 4. Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատակարարող մասնագիտացված կազմակերպությունները և սպասարկման տարածքում ընդգրված բնակավայրերը

| Հ/Հ | Կազմակերպության անվանումը | Մյասարկվող բնակավայրերի թիվը |
|-----|-----------------------------|--|
| 1 | « Երևան Ջուր » ՓԲԸ | ք. Երևան, ք. Եղվարդ, 31 գյուղական համայնք |
| 2 | « Հայջրմուղկոյուղի » ՓԲԸ | 37 քաղաք, 268 գյուղական համայնք |
| 3 | « Լոռի-ջրմուղկոյուղի » ՓԲԸ | ք. Վանաձոր, 16 գյուղական համայնք |
| 4 | « Շիրակ-ջրմուղկոյուղի » ՓԲԸ | ք. Գյումրի, ք. Մարալիկ, 34 գյուղական համայնք |
| 5 | « Նոր Ակունք » ՓԲԸ | ք. Արմավիր, ք. Մեծամոր, 10 գյուղական համայնք |

Սկսած 2004թ.-ից ստեղծվեցին *ջրօգտագործողների ընկերություններ*, որոնք պատասխանատու են ոռոգման համակարգերի շահագործման համար: Ներկայումս գործում է թվով 42 ջրօգտագործողների ընկերություն:

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովն իրականացնում է սակագնային քաղաքականություն ջրային հարաբերություններում:

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը գյուղատնտեսական քաղաքականություն և ռազմավարություններ (ներառյալ ոռոգման, դրենաժային ձկնա- և խեցգետնատնտեսություններ) սահմանող պետական լիազորված մարմինն է: Նախարարությունը նաև մշակում է ոռոգման ստանդարտները և գյուղատնտեսական մշակաբույսերի ռեժիմները:

ՀՀ առողջապահության նախարարությունը բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովումը ՀՀ կառավարության 2002թ.-իի օգոստոսի 15-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» թիվ 1300-Ն որոշման համաձայն, ՀՀ առողջապահության նախարարության նպատակներից և խնդիրներից մեկն է (հավելված 1, «7. Նախարարության նպատակները և խնդիրներն են`... Ժբ) հանրային առողջության և բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովումը»): Նախարարությունն իրականացնում է նաև բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովմանն ուղղված պետական քաղաքականության և նպատակային ծրագրերի մշակումը և դրանց իրականացման դիտարկումը և օրենքների ու այլ իրավական ակտերի նախագծերի մշակումը: Նախարարության կազմում ՀՀ բնակչության

սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման բնագավառում համապատասխան գործունեության առարկան և նպատակները ՀՀ կառավարության 25.07.2013թ. թիվ 857-Ն և 17.10.2013թ. թիվ 1134-Ն որոշումներով սահմանված են առողջապահական պետական տեսչության և «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի համար:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչություն (այսուհետ՝ տեսչություն)

Տեսչության նպատակներից և խնդիրներից են՝

- մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար և վտանգավոր գործոնների ազդեցության բացառումը՝ սանիտարահամաճարակային չափորոշիչների սահմանման, սանիտարական և հակահամաճարակային կանոնների ու նորմերի, հիգիենիկ նորմատիվների մշակման և դրանց պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության միջոցով,

- պետական հիգիենիկ և հակահամաճարակային հսկողության իրականացումը,

- Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովումը,

- Հայաստանի Հանրապետության տարածքում պետական հիգիենիկ և հակահամաճարակային հսկողությունը,

- բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման բնագավառում վարակիչ (շրջապատի համար վտանգ ներկայացնող) և ոչ վարակիչ հիվանդությունների ու թունավորումների կանխարգելման նպատակով սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների ու կանխարգելիչ աշխատանքների կազմակերպումը, առաջարկությունները ներկայացնելը,

- վարակիչ (շրջապատի համար վտանգ ներկայացնող) և ոչ վարակիչ հիվանդությունների ու թունավորումների կանխարգելումը,

- Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման օրենսդրության խախտումների հայտնաբերումը, վարչական վարույթի իրականացումը, պատասխանատվության միջոցների կիրառումը և կանխարգելումը:

Այս նպատակներին և խնդիրներին հասնելու համար, առողջապահական պետական տեսչությունն, ի թիվս այլոց, ունի նաև հետևյալ գործառույթները՝

- իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից (բացառությամբ սննդամթերքի անվտանգության բնագավառի պահանջների) սանիտարական կանոնների և նորմերի, հիգիենիկ նորմատիվների պահանջների կատարման ու հակահամաճարակային միջոցառումների իրականացման նկատմամբ

հսկողության իրականացումը՝ լաբորատոր հետազոտության համապատասխան մեթոդների ու տեխնիկական միջոցների կիրառմամբ ստուգումների, հետազոտությունների, ուսումնասիրությունների միջոցով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտումների բացահայտման, դրանց վերացման, ինչպես նաև սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումներ անցկացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության տարածքում տնտեսական գործունեություն իրականացնող սուբյեկտներից անհրաժեշտ փաստաթղթերի ստացումը,

- ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին օրենսդրության խախտումների բացահայտում և պատասխանատվության համապատասխան միջոցների կիրառում,

- բնակչության առողջության վրա շրջակա միջավայրի գործոնների ազդեցության ուսումնասիրում,

- բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման բնագավառում վարակիչ (շրջապատի համար վտանգ ներկայացնող) և զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների ու թունավորումների կանխարգելման նպատակով սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների ու կանխարգելիչ աշխատանքների կազմակերպում, ինչպես նաև մասնակցություն անհրաժեշտ առաջարկությունների մշակմանը,

- բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտում իրավիճակային վերլուծության և գնահատման իրականացումը,

- բնակչության առողջության վրա շրջակա միջավայրի գործոնների ազդեցության սոցիալ-հիգիենիկ գնումների (մոնիտորինգի) կազմակերպումը, դրանց արդյունքների վերլուծությունն ու գնահատումը,

- հիգիենիկ փորձաքննության և լաբորատոր հետազոտություններ կատարելու նպատակով ջրի և այլ արտադրանքի, առարկաների և նյութերի նմուշառումը,

- հիդրոտեխնիկական սարքավորումների գործունեությունը, կառուցվածքների շահագործումը, տեխնոլոգիական գործընթացները ժամանակավորապես դադարեցնելու մասին որոշումների ընդունումը՝ մինչև սանիտարական կանոնների ու նորմերի, հիգիենիկ նորմատիվների և հակահամաճարակային ռեժիմների արձանագրված խախտումների վերացնելը,

- խմելու, տնտեսական, արտադրական, տեխնիկական կարիքների համար ջրօգտագործման բնագավառում քիմիական նյութերի, միջոցների և մեթոդների կիրառումը ժամանակավորապես արգելելու մասին այն դեպքում, երբ առաջացել է մարդու առողջության վրա դրանց վնասակար ազդեցության վտանգ,

- խմելու, կենցաղային, տնտեսական, արտադրական, տեխնիկական կարիքների համար ջրի օգտագործումը ժամանակավորապես դադարեցնելու մասին, եթե ջրի որակը չի համապատասխանում անվտանգության սահմանված սանիտարահիգիենիկ պահանջներին,

- վարչական վարույթի իրականացումը՝ ՀՀ վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի համաձայն:

«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի՝ Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման և հանրային առողջապահության բնագավառում հիմնական գործունեության առարկան և նպատակներից են.

1) վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելմանն ուղղված համալիր միջոցառումների իրականացումը,

2) վարակիչ և ոչ վարակիչ զանգվածային հիվանդությունների, թունավորումների կանխարգելման նպատակով սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների անցկացումը,

3) բնակչության զանգվածային անընկալության ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացումը, Իմունականիսարգելման ազգային ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացումը և համակարգումը՝ իր իրավասությունների շրջանակում,

4) վարակիչ և մակաբուծային հիվանդությունների օջախներում, որտեղ առկա են վարակիչ ու մակաբուծային հիվանդությունների առաջացման և տարածման համար պայմաններ, ախտահանման, միջատազերծման և կրծողների ոչնչացման (դերատիզացիա) կատարումը,

7) համաճարակների, բռնկումների, թունավորումների և հանրային առողջության անվտանգությանը սպառնացող այլ իրավիճակներին պատրաստվածության և արձագանքման ապահովումը (ներառյալ՝ պահուստային պաշարների ապահովումը, արագ արձագանքման թիմի ձևավորումը և պատրաստվածությունը, տրանսպորտի և այլ նյութական ռեսուրսների ապահովումը, վարժանքների նախապատրաստումը),

8) բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտում մասնագիտական դիտարկումների, իրավիճակային վերլուծության և գնահատման իրականացումը,

9) վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների տարածվածության, համաճարակաբանության և ռիսկի գործոնների դիտարկումների, վերլուծությունների, ուսումնասիրությունների իրականացումը, ռիսկի խմբերի բացահայտումը,

11) աշխատանքի հիգիենայի ապահովման և աշխատողների առողջության պահպանմանն ուղղված միջոցառումների նկատմամբ դիտարկումների, վերլուծությունների, ուսումնասիրությունների իրականացումը,

12) համընդհանուր լաբորատոր ցանցի գործունեության համակարգումը՝ միջազգային առողջապահական կանոնների պահանջներին համապատասխան, և իր իրավասության սահմաններում ռեֆերենս լաբորատորիայի գործառնությունների իրականացումը,

13) սանիտարահիգիենիկ փորձաքննության, շրջակա միջավայրի գործոնների լաբորատոր հետազոտությունների իրականացումը և եզրակացությունների տրամադրումը,

15) բնակչության առողջության վրա շրջակա միջավայրի գործոնների ազդեցության սոցիալ-հիգիենիկ գնումների (մոնիտորինգի) իրականացումը, արդյունքների վերլուծությունը և գնահատումը,

16) բժշկական ու հիգիենիկ և հակահամաճարակային անվտանգության ոլորտի գիտելիքների և առողջ ապրելակերպի մասին քարոզչության ու բնակչության առանձին խմբերի կրթմանն ուղղված ծրագրերի իրականացումը,

20) գիտական և գիտաբժշկական հետազոտությունների իրականացումը:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատասխանատու է կառավարական գործակալությունների/ գերատեսչությունների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների և պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական աուդիտի կազմակերպման և իրականացման համար: Այն հսկողություն է իրականացնում նաև ջրային տնտեսության և բնապահպանական ոլորտներում, համակարգում է միջազգային դոնոր կազմակերպություններից ստացված վարկերն ու դրամաշնորհները և վերահսկում է վարկային ռեսուրսներով ֆինանսավորվող ծրագրերի իրականացումը:

ՀՀ րտակարգ իրավիճակների նախարարությունը Հայաստանի փրկարար ծառայության միջոցով պատասխանատու է արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության համար, ներառյալ ջրին առնչվող աղետները՝ հեղեղումները, սելավները, վարարումները և այլն: Այն իրականացնում է արտակարգ իրավիճակների հնարավոր հետևանքների կանխարգելում, կրճատում և վերացում, իրականացնում է քաղպաշտպանություն, բնակչության և տնտեսական օբյեկտների պահպանում արտակարգ իրավիճակների դեպքում:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայությունը երկրում հիդրոոդերևութաբանական ծառայությունների մատուցման շրջանակում մակերևութային ջրերի քանակի մոնիտորինգ իրականացնող միակ լիազոր մարմինն է: Ծառայությունը ներկայումս ունի հիդրոլոգիական 7 կայան և 92 դիտակետ: Մահմանափակ ռեսուրսների պատճառով

մոնիտորինգը ներառում է միայն ջրի մակարդակը, ծախսը, ջրի և օդի ջերմաստիճանը, սառցային երևույթները և տեղումները: Հիդրոլոգիական բոլոր դիտակետերից տվյալները հավաքագրելուց հետո, <<Հայպետհիդրոմետ>> ծառայության Երևանի գլխամասային գրասենյակը պատրաստում է հիդրոլոգիական տարեգրքեր:

ՀՀ էներգետիկայի և բնական ռեսուրսների նախարարությունը մշակում և իրականացնում է էներգետիկայի, ներառյալ՝ հիդրոէներգետիկ ոլորտի քաղաքականությունն ու ռազմավարությունը:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնն իրականացնում է ձկնաբուծության և ձկնաբանության, այդ թվում փափկամարմինների և խեցգետնակերպերի խնդիրների գիտական ուսումնասիրություններ:

Դ. Մանրամասն վերլուծություն ըստ քսան թիրախային ոլորտների

Թիրախային ոլորտ I

Հոդված 6, 2 (ա)

Մատակարարվող խմելու ջրի որակը

Արձանագրության 6-րդ հոդվածի 2-րդ կետի <<ա>> ենթակետով պահանջվում է սահմանել մատակարարվող խմելու ջրի վերաբերյալ թիրախային ցուցանիշներ և նպատակային ժամկետներ՝ հաշվի առնելով խմելու ջրի որակի վերաբերյալ ԱՀԿ-ի ուղեցույցը:

I. ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Ա. Ռազմավարություններ, իրավական / կարգավորիչ դաշտ և միջազգային պարտավորություններ

Ջրամատակարարման և ջրօգտագործման բնագավառում ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ընդհանուր պահանջները սահմանված են ՀՀ ջրային և հողային օրենսգրքերով, «ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով, կառավարության մի շարք որոշումներով և միջգերատեսչական իրավական ակտերով:

ՀՀ ջրային օրենսգիրք

ՀՀ հողային օրենսգիրք

«ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենք

ՀՀ կառավարության 2002թ.-ի փետրվարի 2-ի թիվ 96, 2002թ. –ի հունվարի 14-ի թիվ 26 որոշում

«Ջրերի ստանդարտների սահմանման կանոնակարգերի մասին» ՀՀ կառավարության 2005թ.-ի հուլիսի 28-ի թիվ 1147-Ն որոշում

Ինչպես բոլոր, այնպես էլ սանիտարական կանոնները և հիգիենիկ նորմատիվները՝ ՀՀ «Իրավական ակտերի մասին» օրենքի համաձայն, գերատեսչական նորմատիվ ակտ են և գրանցվում ու կիրարկվում են այդ օրենքով սահմանված կարգով:

- Խմելու տնտեսական նշանակության ջրմուղների և ջրամատակարարման աղբյուրների սանիտարական պահպանման գոտիներ N2-III-Ա2-2 սանիտարական կանոններ և նորմեր (գրանցված՝ 28 դեկտեմբերի 2002թ.), ինչով սահմանվում են խմելու տնտեսական նշանակության ջրմուղների և ջրամատակարարման աղբյուրների սանիտարական պահպանման գոտիների կազմակերպմանը և շահագործմանը ներկայացվող սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային պահանջները,
- Խմելու ջուր: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջրի որակին ներկայացվող պահանջներ: Որակի հսկողություն N2-III-Ա2-1 սանիտարական կանոններ և նորմեր (գրանցված՝ 28 դեկտեմբերի 2002թ.), ինչով սահմանվում են խմելու ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջները, ինչպես նաև արտադրվող և բնակավայրերին ջրամատակարարման համակարգերով տրվող խմելու ջրի որակի հսկողության կանոնները

Բ. Ինստիտուցիոնալ շրջանակները

Պատասխանատու կառույցներ

ՀՀ առողջապահության նախարարություն

II. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԵՐԿԱՅԻՍ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Ա. Մոնիտորինգային ծրագրեր և ցուցանիշներ

Խմելու ջրի որակ

Խմելու ջրի որակի հսկողությունն իրականացվում է սանիտարական կանոններով և նորմերով սահմանված կարգով, մասնավորապես.

Խմելու ջրի որակի նկատմամբ պետք է իրականացվի արտադրական հսկողություն և պետական սանիտարահամաճարակային վերահսկողություն:

Խմելու ջրի որակի արտադրական հսկողությունն ապահովվում է ջրամատակարարման համակարգի շահագործումն իրականացնող կազմակերպության կողմից:

Ջրառի տեղերում լաբորատոր հետազոտությունների համար խմելու ջրի նմուշների քանակը և պարբերականությունը սահմանվում է հետևյալ պահանջներին համապատասխան.

Աղյուսակ 5. Ջրառի տեղերում լաբորատոր հետազոտությունների համար խմելու ջրի նմուշների քանակի և պարբերականության հաճախականության սահմանման պահանջները

| Ցուցանիշների տեսակներ | Մեկ տարվա ընթացքում նմուշների քանակը, ոչ պակաս | |
|---------------------------------|--|-------------------------------|
| | Ստորգետնյա աղբյուրների համար | Մակերեսային աղբյուրների համար |
| Մանրէաբանական | 4 (ըստ տարվա եղանակների) | 12 (ամենամսյա) |
| Մակարածական | չեն կատարվում | --- |
| Զգայորոշման | 4 (ըստ տարվա եղանակների) | 12 (ամենամսյա) |
| Ընդհանրացված ցուցանիշներ | --- | --- |
| Անօրգանական և օրգանական նյութեր | 1 | 4 (ըստ տարվա եղանակների) |
| Ռադիոլոգիական | 1 | 1 |

Աղյուսակ 6. Քիմիական ցուցանիշներ

| Նյութ | Սահմանային թույլատրելի կոնցենտրացիա, մգ/լ | Հայտնաբերված շեղումներ, %, 2012թ. |
|--|---|-----------------------------------|
| Ֆտորիդ | 1.2-1.5 | 0 |
| Նիտրատ և նիտրիտ | 45 | 0.47 |
| Մկնդեղ | 0.05 | 0 |
| Կապար | 0.03 | 0 |
| Երկաթ | 0.3 | 0.51 |
| Լրացուցիչ ֆիզիկաքիմիական ցուցանիշ 1՝ մնացորդային քլոր - ազատ | 0.3-0.5 | 22.9 |
| Լրացուցիչ ֆիզիկաքիմիական ցուցանիշ 2՝ քլորիդ | 350 | 0.05 |
| Լրացուցիչ ֆիզիկաքիմիական ցուցանիշ 3՝ սուլֆատ | 500 | 0.12 |
| Լրացուցիչ ֆիզիկաքիմիական ցուցանիշ 4՝ ընդհանուր կոշտություն | 7.0 | 1.1 |
| Լրացուցիչ ֆիզիկաքիմիական ցուցանիշ 5՝ ամոնիակ | 3.0 | 2.04 |

Աղյուսակ 7. Մանրէաբանական ցուցանիշներ

| | Սահմանային թույլատրելի կոնցենտրացիա | Հայտնաբերված շեղումներ, %, 2012թ. |
|-------------|-------------------------------------|---|
| E. coli | Բացակայում է | 2012 - 70 522 նմուշ, որոնցից 13730-ը (19.5%) չեն համապատասխանում չափորոշիչներին |
| Enterococci | Չի սահմանվում | |

Աղյուսակ 8. Խմելու ջրի մանրէաբանական և մակաբուծական ցուցանիշների նորմեր

| Ցուցանիշներ | Չափման միավորներ | Նորմաներ |
|---|--|----------------|
| Ջերմատուլերանտ կոլիֆորմ մանրէներ 1/ | 100 մլ-ում մանրէների քանակ | Բացակայություն |
| Ընդհանուր կոլիֆորմ մանրէներ 2/ | 100 մլ-ում մանրէների քանակ | Բացակայություն |
| Մանրէների ընդհանուր քանակություն 2/ | Գադուրներ առաջացնող մանրէների քանակը 1 մլ-ում | 50-ից ոչ ավել |
| Կոլիֆագեր 3/ | Վահանակ առաջացնող միավորների (ՎԱՄ) քանակը 100 մլ-ում | Բացակայություն |
| Սուլֆիտերականգնող կլոստրիդիաների սպորներ 4/ | Սպորների քանակը 20 մլ-ում | Բացակայություն |
| Լյամֆլյաների ցիստեր 3/ | Ցիստերի քանակը 50 մլ-ում | Բացակայություն |
| Աղիքային ցուպիկ՝ «Esherichia coli» | 100մլ-ում մանրէների քանակը | 0 |
| Էնտերոկոկկ-«Enterococci» | 100մլ-ում մանրէների քանակը | 0 |

1) Որոշման ժամանակ կատարվում է վերցված 100 մլ ջրի նմուշի եռանվազ հետազոտություն:

2) Նորմատիվների գերազանցումը չի թույլատրվում ջրամատակարարման արտաքին և ներքին ցանցի ջրաբաշխիչ կետերից վերցված նմուշների 95 տոկոսում, 12 ամսվա ընթացքում, 100-ից ոչ պակաս հետազոտված նմուշների քանակի դեպքում, տարվա ընթացքում:

3) Հետազոտությունները կատարվում են միայն մակերևութային ջրի աղբյուրներից սնվող ջրամատակարարման համակարգերում՝ մինչև ջրաբաշխիչ ցանց մտնելը:

4) Հետազոտությունը կատարվում է ջրի մշակման տեխնոլոգիական եղանակի արդյունավետության գնահատման ժամանակ:

Որոշվող ցուցանիշների տեսակները, խմելու ջրի հետազոտվող նմուշների քանակը՝ մինչև բաշխիչ ցանց մտնելը, սահմանված են ըստ աղյուսակ 9-ի:

Աղյուսակ 9. Մինչև բաշխիչ ցանց մտնելը խմելու ջրում որոշվող ցուցանիշների տեսակների և հետազոտվող նմուշների քանակի նկատմամբ պահանջները

| Ցուցանիշների տեսակներ | Մեկ տարվա ընթացքում նմուշների քանակը, ոչ պակաս ստորգետնյա աղբյուրների համար | | | | |
|---|---|-------------------|-------------------|---------------------------------|-------------------|
| | մակերևութային աղբյուրների համար | | | մակերևութային աղբյուրների համար | |
| | տվյալ ջրահամակարգից ջրով ապահովվող բնակչության թիվը, հազար մարդ | | | | |
| | մինչև 20 | 20-100 | 100-ից բարձր | մինչև 100 | 100-ից բարձր |
| Մանրէաբանական | 50 ^{1/} | 150 ^{2/} | 365 ^{3/} | 365 ^{3/} | 365 ^{3/} |
| Մակաբուժական | չեն կատարվում | | | 12 ^{4/} | 12 ^{4/} |
| Զգայորոշման | 50 ^{1/} | 150 ^{2/} | 365 ^{3/} | 365 ^{3/} | 365 ^{3/} |
| Ընդհանրացված ցուցանիշներ | 4 ^{4/} | 6 ^{5/} | 12 ^{6/} | 12 ^{6/} | 24 ^{7/} |
| Անօրգանական և օրգանական նյութեր | 1 | 1 | 1 | 4 ^{4/} | 12 ^{6/} |
| Ջրապատրաստման տեխնոլոգիայի հետ կապված ցուցանիշներ | Մնացորդային քլոր, մնացորդային օզոն ոչ պակաս մեկ անգամ մեկ ժամում, մնացած ռեագենտները ոչ պակաս մեկ անգամ հերթափոխի ընթացքում | | | | |
| Ռադիոլոգիական | 1 | 1 | 1 | 1 | 1 |

1. Ընդունվում է ջրի նմուշների վերցման հետևյալ պարբերականությունը՝
1/ շաբաթը մեկ անգամ, 2/ շաբաթը 3 անգամ, 3/ ամեն օր, 4/ 1 անգամ տարվա սեզոնների ընթացքում,

5/ 2 ամիսը մեկ անգամ, 6/ ամիսը 1 անգամ, 7/ ամիսը 2 անգամ:

2. Եթե մինչև 20 հազար մարդու խմելու ջրով ապահովող ստորգետնյա աղբյուրներից սնվող ջրմուղի ջուրը չի վարակազերծվում, ապա մանրէաբանական և զգայորոշական ցուցանիշներով հետազոտությունները կատարվում են ամիսը 1 անգամից ոչ պակաս:

3. Հեղեղների և արտակարգ իրավիճակների դեպքում անհրաժեշտ է սահմանել խմելու ջրի որակի հսկողության ուժեղացված ռեժիմ:

Ջրամատակարարման բաշխիչ ցանցում խմելու ջրի արտադրական հսկողությունը մանրէաբանական և զգայորոշական ցուցանիշներով կատարվում է հետևյալ հաճախականությամբ:

Աղյուսակ 10. Ջրամատակարարման բաշխիչ ցանցում խմելու ջրի արտադրական հսկողության ժամանակ մանրէաբանական և զգայորոշական ցուցանիշների որոշման հաճախականությունը

| Սպասարկվող բնակչության քանակը, հազ. մարդ | Նմուշների քանակը մեկ ամսում |
|--|---|
| մինչև 10 | 2 |
| 10-20 | 10 |
| 20-50 | 30 |
| 50-100 | 100 |
| 100-ից ավել | 100+1 նմուշ, յուրաքանչյուր 5 հազար մարդու համար 100 հազարից ավել բնակչության դեպքում |

Նմուշների քանակի մեջ չեն մտնում պարտադիր հսկողական նմուշները, որոնք վերցվում են ցանցի վերանորոգումից կամ այլ տեխնիկական աշխատանքներ կատարելուց հետո:

Ջրամատակարարման ցանցից նմուշառումը կատարվում է փողոցների ջրաբաշխիչ սարքավորումներից, որոնք գտնվում են դրանց ամենաբարձր և փակուղային հատվածներում, ինչպես նաև բոլոր տների ներքին ջրամատակարարման ցանցերի խողովակներից, որոնք ունեն ներմղում և տեղային ջրաճնշման բաքեր:

Խմելու ջրի որակի արտադրական հսկողությունն իրականացվում է ջրամատակարարման համակարգերը շահագործող կազմակերպությունների լաբորատորիաների կողմից կամ պայմանագրային կարգով՝ խմելու ջրի որակի հետազոտություններ կատարելու իրավունք ունեցող (հավատարմագրված) այլ կազմակերպությունների լաբորատորիաների կողմից:

Հետազոտության համար ջրի նմուշառումը և խմելու ջրի որակի լաբորատոր հետազոտությունները կատարվում են համապատասխան պետական նորմերով սահմանված մեթոդներով:

Բ. Առարկայական ոլորտին վերաբերող հիմնական խնդիրները

Եզրակացություն

Վերջին տարիներին հանրապետությունում, ընդհանուր առմամբ, զգալի դրական տեղաշարժեր են արձանագրվել խմելու ջրի հասանելիության, ջրամատակարարման շարունակականության և անվտանգության աստիճանի ավելացման առումով: Այդուհանդերձ, ջրամատակարարման տևողությունը

որոշ տարածքներում ներկայումս շարունակում է մնալ ցածր մակարդակի վրա և բնութագրվում է տարածքային զգալի անհամաչափություններով: Լուրջ հիմնախնդիր է գյուղական բնակավայրերում ջրամատակարարվող ջրի որակի և անվտանգության ապահովումը:

- Ջրային գործոնով պայմանավորված հիվանդությունների կանխարգելման, սահմանափակման և նվազեցման նպատակով, անհրաժեշտ է շարունակել ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի կառավարման, օգտագործման և պահպանության համապատասխան գործողությունների իրականացումը՝ բարձրացնելով խմելու ջրի օգտագործման հասանելիությունը բոլորի համար, հատկապես գյուղական վայրերում և երեխաների համար նախատեսված կազմակերպություններում, ապահովելով ջրային ռեսուրսների կայուն օգտագործումը, մարդու առողջության և հիգիենայի համար ջրի պահանջվող որակի ապահովումը և ջրաէկոհամակարգերի պահպանումը:

IV. ՓՈՐՉԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Առաջարկություններ

1. Բարելավել հատկապես գյուղական բնակավայրերում ջրամատակարարվող ջրի որակի և անվտանգության ապահովումը՝ ջրամատակարարման համակարգերի արդիականացման և որակի ապահովման ուղղությամբ միջոցառումների իրականացման միջոցով:
2. Ներդնել ջրամատակարար կազմակերպությունների կողմից «Ջրի անվտանգության ծրագրերի» մշակման և իրականացման պահանջը՝ ԱՀԿ և ԵՄ պահանջների համապատասխան:
3. Մշակել և ներդնել ջրի որակի մոնիթորինգի օրինակելի ցուցանիշներ՝ համաձայն «Ջուր և առողջություն» արձանագրության շրջանակում ԱՀԿ-ի մշակած առաջարկությունների և հաշվի առնելով երկրի առանձնահատկությունները:

Թիրախային ոլորտ II

Հոդված 6, 2 (բ)

Ջրի հետ կապված բնկումների և հիվանդությունների կրճատում

Արձանագրության 6-րդ հոդվածի 2-րդ կետի <<բ>> ենթակետով պահանջվում է սահմանել թիրախային ցուցանիշներ և նպատակային ժամկետներ՝ ջրի հետ կապված բնկումների և հիվանդությունների կրճատման համար:

I. ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Ա. Ռազմավարություններ, իրավական / կարգավորիչ դաշտ և միջազգային պարտավորություններ

«ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենք

«Բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենք

«Շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2001թ.-ի դեկտեմբերի 27-ի թիվ 1286 որոշում

Սույն որոշումը ներառում է ջրով փոխանցվող բոլոր տեսակների վարակիչ հիվանդությունները՝ աղիքային վարակիչ հիվանդություններ (բոլոր ձևերը), վիրուսային հեպատիտներ, տուլարեմիա և այլն: Բուժման ծավալները ներառվում են յուրաքանչյուր տարի հաստատվող պետական պատվերի չափանիշներում՝ վարակիչ հիվանդությունների մասով:

«Հայաստանի Հանրապետությունում վարակիչ հիվանդությունների կանխարգելման և դրանց դեմ պայքարի 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ռազմավարական ծրագրի միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2011 թ.-ի դեկտեմբերի 29-ի թիվ 1913-Ն որոշում

Ծրագրի նպատակը Հայաստանի Հանրապետությունում վարակիչ հիվանդությունների բեռի նվազեցումն է: Որպես համազգային նշանակություն ունեցող փաստաթուղթ, սույն ռազմավարական ծրագիրն այն գործիքն է, որը կնպաստի Հայաստանի Հանրապետության բնակչության առողջության պահպանմանը, վարակիչ հիվանդությունների առումով ձեռքբերումներն ամրապնդելուն, հիմնախնդիրները հնարավորինս լուծելուն՝ վարակիչ

հիվանդությունների կանխարգելման և դրանց հետ պայքարի ճանապարհով և ապահովելու երկարաժամկետ առաջընթաց վարակիչ հիվանդությունների համաճարակաբանական հսկողության և արձագանքման ոլորտում՝ համագործակցելով ոլորտում գործադրվող այլ ծրագրերի հետ: Ծրագրի խնդիրներից են ինտեգրացված համաճարակաբանական հսկողության համակարգի ձևավորումը, արձագանքման կարողությունների, ախտորոշման լաբորատոր համակարգի և հիվանդություններով պայմանավորված արտակարգ իրավիճակներին արձագանքման կարողությունների զարգացումը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 46-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 2012թ.-ի հոկտեմբերի 10-ի թիվ 1285-Ն որոշմամբ հաստատվել է պատվաստումների ազգային նոր օրացույցը, որի համաձայն 2012 թ.-ի նոյեմբերից ներդրվել է ռոտավիրուսային վարակի դեմ պատվաստումը, որով ենթակա երեխաների օրացուցային ժամկետներում ընդգրկումը 2012թ. դեկտեմբերի 20-ի դրությամբ կազմել է 90%:

Միջազգային առողջապահական (բժշկասանիտարական) կանոնների ներդրման ուղղությամբ.

«Միջազգային առողջապահական (բժշկասանիտարական) կանոնների հարցերով ազգային համակարգող մարմնի և շահագրգիռ մարմինների համագործակցության մեխանիզմները և համակարգման ընթացակարգերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2010թ.-ի օգոստոսի 26-ի թիվ 1138-Ն, որով կանոնակարգվել են հանրային առողջապահության ոլորտում արտակարգ իրավիճակների՝ ջրով փոխանցվող վարակիչ հիվանդություններով պայմանավորվածները ներառյալ, տեղեկատվության փոխանակման և համագործակցության հարցերը:

«Կենսաբանական, քիմիական և ճառագայթային գործոններով պայմանավորված, հանրային առողջապահության ոլորտում արտակարգ իրավիճակ ներկայացնող դեպք արձանագրելիս, միջազգային առողջապահական (բժշկասանիտարական) կանոնների ներդրման հարցերով պատասխանատուին տեղեկատվության հաղորդման օրինակելի ընթացակարգը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի 2010 թ.-ի նոյեմբերի 29-ի թիվ 26-Ն հրաման

«Հայաստանի Հանրապետության ջրային տնտեսության ոլորտում հանրային առողջապահության խնդիրների առաջացման դեպքում ՀՀ առողջապահության նախարարության և ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային

տնտեսության պետական կոմիտեի համագործակցության ստանդարտ
ընթացակարգերը համայնքում ջրային գործոնով պայմանավորված՝ վարակիչ
հիվանդության դեպքերի արձանագրում» ՀՀ առողջապահության նախարարի և
ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության
պետական կոմիտեի նախագահի համատեղ հրամանը (ՀՀ ԱՆ 06 դեկտեմբերի
2011թ. թիվ 24-Ն հրաման և ՀՀ ՏՆ ջրային տնտեսության կոմիտեի 12
դեկտեմբերի 2011թ. թիվ 163-Ն հրաման)

Բ. Ինստիտուցիոնալ շրջանակները

Պատասխանատու կառույցներ

Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության
ապահովումը ՀՀ կառավարության 2002 թ.-ի
օգոստոսի 15-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության
նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ
ստեղծելու, Հայաստանի Հանրապետության առողջապահության
նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը
հաստատելու մասին» թիվ 1300-Ն որոշման համաձայն, ՀՀ առողջապահության
նախարարության նպատակներից և խնդիրներից մեկն է (հավելված 1, «7.
Նախարարության նպատակները և խնդիրներն են՝... Ժբ) հանրային
առողջության և բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության
ապահովումը»): Նախարարությունը իրականացնում է նաև բնակչության
սանիտարահամաճարակային անվտանգության ապահովմանն ուղղված
պետական քաղաքականության և նպատակային ծրագրերի մշակումը և դրանց
իրականացման դիտարկումը և օրենքների ու այլ իրավական ակտերի
նախագծերի մշակումը: Նախարարության կազմում ՀՀ բնակչության
սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման բնագավառում
համապատասխան գործունեության առարկան և նպատակները ՀՀ
կառավարության 25.07.2013թ. թիվ 857-Ն և 17.10.2013թ. թիվ 1134-Ն
որոշումներով սահմանված են առողջապահական պետական տեսչության և
«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն»
ՊՈԱԿ-ի համար:

Առարկայական ոլորտին վերաբերող հիմնական խնդիրները

Աղյուսակ 11. Ջրային բնկումների քանակը

| | <i>Դեպքերի թիվը</i> | | <i>Բնկումների քանակը</i> | |
|---|--|------------------------------|---|----------------------------|
| | <i>բազային</i> | <i>ընթացիկ մեծությունը</i> | <i>բազային</i> | <i>ընթացիկ մեծությունը</i> |
| Խուլերա | 0 (2010թ.), 0 (2011թ.), 0 (2012թ.) | 0 (2013թ. հունվար-փետրվար) | 0 (2010թ.) 0 (2011թ.) 0 (2012թ.) | 0 (2013թ. հունվար-փետրվար) |
| Բակտերիալ դիզենտերիա (շիզելոզ) | <i>Բոլոր դեպքերը</i> 1241 (2010թ.) 1041 (2011թ.) 733 (2012թ.), | 84 (2013թ. հունվար-փետրվար) | 1 բնկում 8 դեպք, 1 բնկում, 76 դեպք (2010թ.), 0 (2011թ.) 0 (2012թ.) | 0 (2013թ. հունվար-փետրվար) |
| <i>Էնտերոհեմոքսիկարային</i> աղիքային ցուպիկ | 2010թ. մոնիթորինգ չի իրականացվել 11(2011թ.), 15 (2012 թ.) | 3 (2013թ. հունվար-փետրվար) | 0 (2010թ.) 0 (2011թ.) 0 (2012թ.) | 0 (2013թ. հունվար-փետրվար) |
| Վիրուսային հեպատիտ Ա | 379 (2010 թ.), 143 (2011 թ.) 98 (2012 թ.) | 100 (2013թ. հունվար-փետրվար) | 0 (2010 թ.) 0 (2011 թ.) 0 (2012 թ.) | 0 (2012թ. հունվար-փետրվար) |
| Որովայնային տիֆ | 0 (2010 թ.), 0 (2011 թ.), 0 (2012 թ.) | 0 (2013թ. հունվար-փետրվար) | 0 (2010 թ.), 0 (2011 թ.), 0 (2012 թ.) | 0 (2013թ. հունվար-փետրվար) |

Եզրակացություն. Հանրապետությունում ժամանակ առ ժամանակ առաջանում են տեղային բնկումներ, որոնք չեն վերաժվում համաճարակի: Հիմնականում արձանագրվում են աղիքային վարակների բնկումներ՝ պայմանավորված ջրային (հիմնականում՝ ջրմուղ-կոյուղու ցանցում պարբերաբար առաջացող վթարներ) և սննդային գործոններով:

IV. ՓՈՐՉԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Առաջարկություններ

1. Հգորացնել ջրային գործոնով պայմանավորված հիվանդությունների դեպքերի կամ բռնկումների առաջացման հնարավոր պատճառ հանդիսացող իրավիճակների վերահսկման, այդ դեպքերին և բռնկումներին ու դրանց սպառնալիքին արձագանքման համակարգը՝ համաճարակաբանական հսկողություն և արձագանքում իրականացնելու կարողությունները և արդյունավետությունը՝ «Հայաստանի Հանրապետությունում վարակիչ հիվանդությունների կանխարգելման և դրանց դեմ պայքարի 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ռազմավարական ծրագրի միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2011 թ.-ի թիվ 1913-Ն որոշման համաձայն:
2. Մասնակցել այս ուղղությամբ ԱՀԿ-ի և «Ջուր և առողջություն» արձանագրության կողմից իրականացվող միջոցառումներին:

Թիրախային ոլորտ III
Հոդված 6, 2 (գ)
Խմելու ջրի մատչելիություն

Արձանագրության 3-րդ թիրախային ոլորտը պահանջում է սահմանել խմելու ջրի մատչելիության վերաբերյալ նպատակային ցուցանիշներ և նպատակային ժամկետներ:

1.ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՅՈՂ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Ա. Ռազմավարությունները, իրավական / կարգավորիչ դաշտ

Հայաստանի հանրապետության ջրային օրենսգիրքը

ՀՀ «Ջրի ազգային ծրագրի մասին» օրենքը

Ջրի ազգային ծրագրի իրականացման միջոցառումները ելնում են ջրի սահմանափակ լինելու, մարդու կյանքի և առողջության, կենդանական և բուսական աշխարհի պահպանման համար հիմնական միջոցներից մեկը հանդիսանալու, դրա մատչելիության ապահովման նախապայմաններից:

Բ. Ինստիտուցիոնալ շրջանակները

Ջրային ռեսուրսների կառավարումն իրականացնում են հետևյալ մարմինները՝

Ջրի ազգային խորհուրդ

Վեճերը լուծող հանձնաժողով

Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմին

Ֆինանսական օգնությունը ջրային հարաբերություններում

Ջրային հարաբերություններում կարող է տրամադրվել ֆինանսական օգնություն, սուբսիդիաների կամ օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային արտոնությունների տրամադրման տեսքով՝ կախված ջրի ազգային ծրագրում ամրագրված ֆինանսական օգնության տրամադրման կոնկրետ ձևից:

Կառավարությունը յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի նախագծով Ազգային ժողովի հաստատմանն է ներկայացնում ջրամատակարարներին և ջրօգտագործողներին պետական բյուջեից տրվող սուբսիդիաների կամ օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային արտոնությունների չափերը:

2. Խմելու ջրի մատչելիությունը

Ջրային ռեսուրսների կառավարման քաղաքականության հիմնախնդիրների հետ սերտորեն կապված է ջրի նկատմամբ մատչելիությունը:

Ջրի և ջրահեռացման մատչելիությունը մարդու հիմնարար իրավունքն է և կարևոր է կյանքի, առողջության և արժանապատվության համար, որը ճանաչվել է ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի և Մարդու իրավունքների խորհրդի կողմից՝ 2010թ.-ին:

Նախկին ԽՍՀՄ-ի տարիներին Հայաստանի Հանրապետությունում ջրամատակարարման ծառայությունների մատչելիության խնդրով ոչ ոք չէր անհանգստանում, քանի որ ջուրը բնակչությանն էր մատակարարվում չնչին գներով:

Այդ պատճառով, ինչպես նաև «պլանային» տնտեսության և ջրային ոլորտի սուբսիդավորման առկայության պայմաններում, ջրի դիմաց վարձավճարը բացարձակապես չէր վնասում ընտանեկան բյուջեին: Տվյալ խնդրի մասին սկսեցին մտածել 1990-ական թվականներին՝ Խորհրդային միության փլուզումից հետո՝ կապված շուկայական հարաբերություններին անցնելու հետ:

Ջրամատակարարման ծառայությունները համարվում են տնտեսապես մատչելի, եթե սպառողներն ի վիճակի են վճարել այդ ծառայությունների համար՝ առանց մյուս կենսականորեն կարևոր ծախսերի զգալի կրճատման:

ՀՀ խմելու ջրի մատակարարման ոլորտի հիմնական խնդիրների լուծմանը նպաստող և արդյունավետ գործունեության հնարավորությունները բացահայտող հիմնական գործոններից է ճիշտ սակագնային քաղաքականության իրականացումը:

Աղյուսակ 12-ում ներկայացված են հանրապետության հինգ ընկերության կողմից սպասարկվող ջրի սակագները:

Աղյուսակ 12. Խմելու ջրի մատակարարման ծառայությունների մատուցման սակագները 2011թ., դրամ/մ³

| | Ջուր մատակարարող կազմակերպությունը | Ընդամենը սակագիրը | Այդ թվում | |
|-----|------------------------------------|-------------------|-----------------------|------------------------|
| | | | ջրամատակարարում, դրամ | %, ընդհանուրի նկատմամբ |
| | Երևան-Ջուր | 174.065 | 161.88 | 93.0 |
| | Հայջրմուղկոյուղի | 179.78 | 154.47 | 85.92 |
| | Շ Լոռի-ջրմուղկոյուղի | 180.98 | 146.62 | 81.01 |
| ուկ | Շիրակ-ջրմուղկոյուղի | 172.21 | 146.3 | 84.37 |
| այ | Նոր Ակունք | 202.63 | 184.02 | 90.82 |
| ակ | | | | |

ան վերափոխումների ընթացքում գների և սակագների ազատականացումը հանգեցրեց կոմունալ ծառայությունների զգալի թանկացմանը, ինչը բնակչության որոշ խավի բյուջեի վրա ծանր ազդեցություն բողեց:

Խմելու ջրի մատակարարման կենտրոնացված համակարգով ծառայությունների մատուցման սակագներն օրենքով սահմանված կարգով սահմանում է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը:

Կենտրոնացված կարգով խմելու ջրի մատակարարման ծառայությունների հաշվառումն իրականացվում է ջրաչափերի կամ ՀՀ կառավարության կողմից սահմանված այլընտրանքային հաշվառման կարգին համապատասխան՝ նկատի ունենալով ջրաչափի տեղադրման խթանումը:

ՀՀ տարածքում ջրաչափերի տեղադրման դինամիկան ըստ տարիների կազմել է՝ 2001թ.-ին 1,5 %, 2002թ.-ին 5%, 2003թ.-ին 45%, 2004թ.-ին 57%, 2005թ.-ին 65%, 2006թ.-ին 68.8%, 2007թ.-ին 72.4%, 2008թ.-ին 75%, 2009թ.-ին 83.9%, 2010-ին 86.7%, 2011թ.-ին 86.9% և 2012թ.-ին 87.1%:

Ջրաչափեր չտեղադրված բազմաբնակարանային շենքերի բնակիչների համար սահմանված է գանձել մեկ անձից օրական 200 լիտրի վճար (Երևան քաղաքում՝ 250լ), անհատական բնակելի տների բնակիչների համար՝ օրական 100 լիտրի վճար (Երևան քաղաքում՝ 150լ):

Աղյուսակ 13-ում բերված է բաժանորդների մոտ տեղադրված ջրաչափերի քանակը՝ 2012թ.-ի դրությամբ:

Աղյուսակ 13. Խմելու ջուր մատակարարող ընկերությունների սպասարկման տարածքում տեղադրված ջրաչափերի քանակը՝ 2012թ.-ի. դրությամբ

| Հ/Հ | Ընկերության անունը | Բաժանորդների քանակը, հազ. | Ջրաչափեր տեղադրված բաժան. քանակը, հազ. | Տեղադրման տոկոսը |
|-----------------|--------------------------|---------------------------|--|------------------|
| 1 | «Երևան Ջուր» ՓԲԸ | 351935 | 329089 | 93.5 |
| 2 | «Հայջրմուկոյուտի» ՓԲԸ | 285579 | 213970 | 74.9 |
| 3 | «Նոր Ակունք» ՓԲԸ | 17916 | 17700 | 98.8 |
| 4 | «Լոռի-ջրմուկոյուտի» ՓԲԸ | 39910 | 37548 | 94.1 |
| 5 | «Շիրակ-ջրմուկոյուտի» ՓԲԸ | 55601 | 40152 | 72.2 |
| Ը ն դ ա մ ե ն ը | | 750941 | 638459 | 85.0 |

Խմելու ջրի մատակարարման համայնքային ծառայությունների հաշվառումն իրականացվում է տեղական ինքնակառավարման մարմնի և/կամ խմելու ջուր օգտագործողների ընկերության կողմից ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից սահմանված սակագներով (կամ վճարներով)՝ հաշվի առնելով համակարգի սպասարկման և հետագա զարգացմանն ուղղված ծախսերը, ինչպես նաև ծառայություններից օգտվողների թվաքանակը:

Խմելու ջրի մատակարարման այլընտրանքային ծառայություն իրականացնող կազմակերպությունը, կնքված պայմանագրի համաձայն, խմելու ջուրը բաշխում, հաշվառում և իրացնում է սպառողներին՝ համայնքի ավագանու որոշմամբ սահմանված վճարներով:

Մարդկանց հիմնական կարիքների յուրաքանչյուր բաղադրիչը բավարարելու համար միջազգայնորեն ընդունված ջրաքանակներն են՝ խմելու նպատակով՝ 3-5 լ/մարդ/օր, մարդկանց հիգիենայի համար՝ 10-15 լ/մարդ/օր, սանիտարա-հիգիենիկ կարիքների համար՝ 10-20 լ/մարդ/օր, կերակուր պատրաստելու համար՝ 10-15 լ/մարդ/օր:

Հայաստանը միացել է ՄԱԿ-ի հազարամյակի հռչակագրին 2000թ.-ին և ստանձնել Հազարամյակի զարգացման նպատակները (ՀՁՆ) իրականացնելու պարտավորություն: ՀՀ կառավարությունը համաշխարհային թիրախները և ցուցանիշները տեղայնացրել է 2005թ.-ին: ՀՁՆ 7-ը վերաբերում է շրջակա միջավայրի պահպանության ապահովմանը (հավելված 2): ՀՁՆ տեղայնացման ընթացքում նոր ցուցանիշներ են ավելացվել թիրախ 10-ին՝ փոքր և միջին քաղաքներում օրական ջրամատակարարման տևողությունը⁷: Աղյուսակ 14-ում ներկայացված է թիրախ 10-ը:

Աղյուսակ 14. ՀՁՆ 7, թիրախ 10. Անվտանգ խմելու ջրի մատչելիության բարձրացում

| Ցուցանիշներ | 1999 | 2004 | 2005 | 2006 | 2007 | 2015թ. նպատակադրված (թիրախային) արժեք |
|---|------|------|------|------|------|---------------------------------------|
| Կենտրոնացված ջրամատակարարման միջին օրական տևողությունը քաղաքային (բացառությամբ Երևանի) տնային տնտեսություններում, ժամ | ... | 7,3 | 7,4 | 7,5 | 8,9 | >16 |
| Գյուղական բնակավայրերում անվտանգ խմելու ջրի | 30,9 | 18,7 | 18,4 | 12,5 | 9,8 | <5 |

⁷ Հայաստան, Հազարամյակի զարգացման նպատակների առաջընթացի ազգային զեկույց, 2005-2009թթ., http://www.un.am/res/UN%20RC%20Annual%20Reports,%20UNDAFs,%20MDGs/MDG%202nd%20report_arm.pdf

| | | | | | | |
|--|------|-----|------|-----|-----|----|
| մատչելիությունից զրկված բնակչության մասնաբաժինը, %* | | | | | | |
| Գյուղական բնակավայրերում բերովի ջրից օգտվողների հարաբերակցությունը գյուղական բնակավայրերի ջրօգտագործողների ընդհանուր թվին, %** | 17,8 | 9,0 | 10,6 | 3,6 | 4,1 | <1 |

* Գյուղաբնակ այն տնային տնտեսությունները, որոնք միացված չեն կենտրոնացված կամ (սեփական) ջրամատակարարման համակարգերին, համարվում են անվտանգ խմելու ջրամատակարարում չունեցող:

** Գյուղաբնակ տնային տնտեսությունները, որոնք օգտագործում են մատակարարների կողմից բերվող տեղափոխվող ջուր, համարվում են բերովի ջրից օգտվողներ:

Աղբյուր. ՀՀ կառավարություն / ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ, 2010թ. Հայաստան, Հազարամյակի զարգացման նպատակների առաջընթացի ազգային զեկույց, 2005-2009թթ.

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) ՀԶՆ-ի թիրախ 10-ի ջրի մատչելիության վերաբերյալ տվյալները ներկայացված են հավելված 3-ում:

ԱՀԿ-ի և ՄԱՄԿ-ի Մոնիթորինգի համատեղ ծրագրի տվյալների համաձայն, բարելավված ջրամատակարարման մատչելիությունը 2011թ.-ին Հայաստանի քաղաքների համար կազմել է 100%, իսկ գյուղական համայնքներում՝ 98%, ընդամենը՝ 99%⁸ (աղյուսակ 15):

Աղյուսակ 15 Խմելու ջրի ծածկույթի գնահատման միտումներն՝ ըստ Մոնիթորինգի համատեղ ծրագրի

| Հայաստան | Խմելու ջրի ծածկույթի գնահատականները | | | | | |
|------------------------|-------------------------------------|------|---------------|------|--------------|------|
| | քաղաքային (%) | | գյուղական (%) | | ընդամենը (%) | |
| | 1990 | 2011 | 1990 | 2011 | 1990 | 2011 |
| Միացում ջրագծին | 95 | 98 | 52 | 91 | 81 | 96 |
| Այլ բարելավված աղբյուր | 3 | 2 | | 7 | | 3 |
| Այլ չբարելավված | 2 | 0 | | 2 | | 1 |

⁸ http://www.wssinfo.org/documents-links/documents/?tx_displaycontroller%5Btype%5D=country_files

| | | | | | |
|--------------------|---|---|--|---|---|
| աղբյուր | | | | | |
| Մակերևութային ջուր | 0 | 0 | | 0 | 0 |

Աղբյուրը՝ ԱՀԿ/ՄԱԿ-ի ԵՏՀ Մոնիթորինգի համատեղ ծրագիր, 2013թ.

Խմելու ջրի մատչելիությունը գնահատելու համար Երևան քաղաքի բնակիչների հետ 2012թ. կատարված հարցումները ցույց են տվել, որ բնակչության 23,7%-ի համար հիմնական խնդիր է ջրամատակարարման գրաֆիկի խախտումները, 12,8%-ի համարը՝ խողովակներում եղած ցածր կամ բարձր ճնշումը, 8,2%-ն՝ առնչվել է վթարային իրավիճակների հետ, 2,3%-ը կարևորել է խողովակների անբարվոք վիճակը, 2%-ը որպես խնդիր առանձնացրել է ջրի որակն ու համը, մոտ 60%-ը դժգոհ է ջրի մատակարարման սակագնից:

Հայաստանը չնայած հարուստ է բարձրորակ ջրի ստորերկրյա աղբյուրներով, սակայն ներկայումս շուրջ 250 քաղաքային և գյուղական բնակավայրերի ավելի քան 200 հազար բնակիչ օգտվում է մակերևութային ջրաղբյուրներից՝ լեռնային գետերից: Վերը նշված բնակավայրերից 7 քաղաքային՝ Կապան, Դիլիջան, Քաջարան, Արթիկ, Մեղրի, Բերդ, Վանաձոր, և 23 գյուղական բնակավայրերի շուրջ 160 հազար բնակչին ջուրը տրվում է խմելու ջրի 16 մաքրման կայանից:

Հանրապետության խմելու ջրի մաքրման կայանների համար որպես ջրաղբյուր հիմնականում ընտրված են լեռնային գետերի վերին հոսանքները, որոնց ջրերը մանրէաբանական առումով համեմատաբար մաքուր են՝ աղտոտված չեն կենցաղային կամ արտադրական կեղտաջրերով, գյուղատնտեսական պարարտանյութերով ու թունաքիմիկատներով:

Սակայն հանրապետության խմելու ջրի գրեթե բոլոր մաքրման կայանները, որոնք կառուցվել են խորհրդային ժամանակաշրջանում, անբավարար շահագործման պատճառով ներկայումս հայտնվել են ծանր իրավիճակում, որի հետևանքով բնակչությունը խմելու նպատակով ստանում է ցածր որակի ջուր: Խաթարված են ջրի մաքրման տեխնոլոգիական գործընթացները, և նման պայմաններում հնարավոր չէ ապահովել խմելու ջրի ստանդարտների պահանջներին համապատասխանող որակի ջրի արտադրությունը:

Բնակչության ապրելակերպը, սանիտարական, ինչպես նաև սոցիալ-տնտեսական ցածր մակարդակն այդ շրջաններում մեծապես պայմանավորված է խմելու ջրի դեֆիցիտով և անբավարար որակով:

Խմելու ջուր մատակարարող կազմակերպությունների կողմից սպասարկվող ջրամատակարարման գլխամասային կառույցների և օրվա կարգավորիչ ջրամբարների մի մասը ներկայումս գտնվում է վթարային վիճակում: Մյուս կողմից, հանրապետության լեռնային գետերում տարվա ընթացքում ջրի որակը փոփոխվում է շատ մեծ սահմաններում, ջրի պղտորությունը չոր սեզոնին կարող է նվազել՝ հասնելով մինչև մի քանի մգ/լ-ի, իսկ վարարումների ժամանակ՝ բարձրանալ մինչև մի քանի հազար մգ/լ-ի: Այս պայմաններում շատ դժվար է, իսկ որոշ դեպքերում

անհնար՝ գոյություն ունեցող տեխնոլոգիաներով և կառուցվածքներով ապահովել ջրի անհրաժեշտ աստիճանի մաքրումն ու անխափան ջրամատակարարումը:

Խմելու ջուրը քիչ հասանելի է գյուղական բնակավայրերում: Թեև վերջին տարիների ընթացքում բարելավվում է ջրամատակարարման համակարգը, այնուամենայնիվ, դեռևս ջրամատակարարումը անբավարար է փոքր և միջին քաղաքների համար:

Հանրապետությունում կան նաև մի քանի տասնյակ հեռավոր բնակավայրեր և հանգստյան տներ, որտեղ խմելու-կենցաղային նպատակներով տրվում է անմիջապես գետի վերին հոսանքներից վերցվող ջուրը, որը մաքրման չի ենթարկվում:

Հայաստանում գործում է 5 օպերատոր, որոնք ապահովում են կենտրոնական ջրամատակարարման և ջրահեռացման աշխատանքները: Կան համայնքներ (560), հիմնականում գյուղական, որոնք իրենք են ապահովում իրենց ջրամատակարարումը և ջրահեռացումը: Տեխնիկական, մարդկային և ֆինանսական ռեսուրսները համայնքներում անբավարար են: Սահմանափակ ուշադրություն է դարձվում այդ համայնքների խնդիրներին և հաճախ այդ համայնքները դուրս են մնում իրագործվող ծրագրերից: Սահմանափակ տվյալներ կան այդ համայնքների առկա իրավիճակի մասին:

Կան բնակավայրեր, որոնք չունեն սեփական աղբյուրներ և հիմնական ջրատարներից գտնվում են մեծ հեռավորությունների վրա կամ ջուր են ստանում նույնիսկ 2-3 օրը մեկ անգամ: Որոշ բնակավայրերում ջուրը նույնիսկ բերովի է:

Ջրամատակարարման խնդիրն արդիական է նաև գյուղական վայրերի կրթական կառույցների համար, որոնք ապավինում են սուղ պետական միջոցներին՝ ենթակառուցվածքը պահպանելու և շահագործելու համար:

Ըստ կրթության և գիտության նախարարության տվյալների, Հայաստանում հանրակրթական դպրոցների քանակը 2011թ.-ին կազմել է 1441 (աղյուսակ 16), որոնցում սովորել է 386.4 հազար երեխա⁹: Դպրոցներից 868-ը գտնվում են գյուղական համայնքներում (աղյուսակ 17): Չնայած կան տվյալներ դպրոցների ջրամատակարարման և ջրահեռացման վերաբերյալ (աղյուսակ 18), այն հաճախ չի արտացոլում իրական պատկերը: Դպրոցներում, հատկապես գյուղական վայրերի, հաճախ կա կենտրոնական խմելու ջրի և ջրահեռացման համակարգ, որը սակայն չի գործում, քանի որ գյուղում չկա շահագործող համակարգ: Երեխաները չեն կարողանում լվանալ ձեռքերը սնվելուց առաջ և պետքարանից օգտվելուց հետո:

Աղյուսակ 16. 2011-2012 ուս.տարում ուսումնական հաստատությունների ընդհանուր քանակը Հայաստանում՝ ըստ իրականացվող հանրակրթական հիմնական ծրագրերի

⁹ www.armstat.am

| Մարզ | Ուսումնական հաստատություններն՝ ըստ իրականացվող հանրակրթական հիմնական ծրագրերի | | | | | | | | |
|-------------|---|------------|---------------|------------|---------|------------|----------|------------|----------|
| | հանրակրթական | | մասնագիտացված | | հատուկ | | ընդամենը | | |
| | պետական | ոչ պետական | պետական | ոչ պետական | պետական | ոչ պետական | պետական | ոչ պետական | ընդամենը |
| Երևան | 200 | 35 | | 6 | 1 | 13 | 219 | 36 | 255 |
| Արագածոտն | 121 | | 1 | | 1 | | 123 | 0 | 123 |
| Արարատ | 112 | | | | | | 112 | 0 | 112 |
| Արմավիր | 119 | 2 | | | 2 | | 121 | 2 | 123 |
| Գեղարքունիք | 126 | | | | 1 | | 127 | 0 | 127 |
| Լոռի | 162 | 1 | 2 | | 3 | | 167 | 1 | 168 |
| Կոտայք | 102 | 1 | 1 | | 1 | | 104 | 1 | 105 |
| Շիրակ | 166 | 3 | 2 | 1 | 2 | | 170 | 4 | 174 |
| Սյունիք | 117 | | | 0 | 4 | | 121 | 0 | 121 |
| Վայոց Ձոր | 51 | 1 | | 0 | 0 | | 51 | 1 | 52 |
| Տավուշ | 81 | | | 0 | 0 | | 81 | 0 | 81 |
| Ընդամենը | 1357 | 43 | 12 | 2 | 27 | 0 | 1396 | 45 | 1441 |

Աղյուսակ 17. 2011-2012 ուս.տարում Հայաստանի հանրակրթական ուսումնական հաստատությունների քանակը քաղաքային և գյուղական բնակավայրերում՝ ըստ մարզերի

| Մարզ | Ընդամենը | | | Քաղաքային բնակավայրերում | | | Գյուղական բնակավայրերում | | |
|-------------|----------|---------|------------|--------------------------|---------|------------|--------------------------|---------|------------|
| | ընդամենը | պետական | ոչ պետական | ընդամենը | պետական | ոչ պետական | ընդամենը | պետական | ոչ պետական |
| Երևան | 255 | 219 | 36 | 255 | 219 | 36 | 0 | 0 | |
| Արագածոտն | 123 | 123 | 0 | 14 | 14 | | 109 | 109 | |
| Արարատ | 112 | 112 | 0 | 21 | 21 | | 91 | 91 | |
| Արմավիր | 123 | 121 | 2 | 28 | 26 | 2 | 95 | 95 | |
| Գեղարքունիք | 127 | 127 | 0 | 27 | 27 | | 100 | 100 | |

| | | | | | | | | | |
|-----------|------|------|----|-----|-----|----|-----|-----|---|
| Լոռի | 168 | 167 | 1 | 65 | 64 | 1 | 103 | 103 | |
| Կոտայք | 105 | 104 | 1 | 39 | 39 | | 66 | 65 | 1 |
| Շիրակ | 174 | 170 | 4 | 59 | 55 | 4 | 115 | 115 | |
| Սյունիք | 121 | 121 | 0 | 36 | 36 | | 85 | 85 | |
| Վայոց Ձոր | 52 | 51 | 1 | 11 | 10 | 1 | 41 | 41 | |
| Տավուշ | 81 | 81 | 0 | 18 | 18 | | 63 | 63 | |
| Ընդամենը | 1441 | 1396 | 45 | 573 | 529 | 44 | 868 | 867 | 1 |

Աղյուսակ 18. 2011-2012 ու. տարում Հայաստանի հանրակրթական ուսումնական հաստատությունների քանակն՝ ըստ շենքերի վիճակի և հարմարությունների (ենթակառուցվածքների)

| Մարզ | Դպրոցի պայմանները | | | | | | | |
|-------------|-------------------|--------------------------|----------------------------------|------------------|--------------|--------------|-----------|--------------|
| | շենքի վիճակը | | | ջրամատակարարումը | | կոյուղացումը | | |
| | բավարար է | կարիք ունի հիմնանորոգման | կարիք ունի ընթացիկ հիմնանորոգման | առկա է | բացակայում է | կենտրոնացված | անհատական | բացակայում է |
| Երևան | 123 | 111 | 21 | 255 | 0 | 245 | 10 | 0 |
| Արագածոտն | 37 | 54 | 32 | 103 | 20 | 28 | 89 | 6 |
| Արարատ | 35 | 59 | 18 | 102 | 10 | 48 | 38 | 26 |
| Արմավիր | 50 | 54 | 19 | 109 | 14 | 51 | 72 | 0 |
| Գեղարքունիք | 30 | 75 | 22 | 99 | 28 | 37 | 48 | 42 |
| Լոռի | 75 | 51 | 42 | 154 | 14 | 82 | 65 | 21 |
| Կոտայք | 46 | 46 | 13 | 102 | 3 | 72 | 29 | 4 |
| Շիրակ | 78 | 50 | 46 | 150 | 24 | 96 | 51 | 27 |
| Սյունիք | 44 | 49 | 28 | 105 | 16 | 57 | 44 | 20 |
| Վայոց Ձոր | 33 | 14 | 5 | 48 | 4 | 24 | 26 | 2 |
| Տավուշ | 35 | 25 | 21 | 73 | 8 | 32 | 23 | 26 |
| Ընդամենը | 586 | 588 | 267 | 1300 | 141 | 772 | 495 | 174 |

III. ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԸՆԹԱՑԻԿ ԵՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

1. Ձրային համակարգերի կառավարման հիմնախնդիրներն անհնար է պատկերացնել առանց այդ համակարգերի կառավարման լիարժեք իրավական դաշտի ստեղծման: Նշված հիմնախնդրի լուծման ուղղությամբ մինչև այժմ հանրապետությունում կատարվել են զգալի աշխատանքներ, այնուամենայնիվ

ջրային ռեսուրսների կառավարման իրավական հիմքերը շարունակում են մնալ ոչ լիարժեք, և այդպիսի իրավական դաշտի ստեղծման համար դեռևս կան հրատապ լուծում պահանջող որոշ խնդիրներ:

2. Մինչև այժմ ՀՀ տարածքի համար մշակված չէ «Խմելու ջրի մասին» օրենք:

3. Ջրային համակարգերի կառավարման ոլորտում արդյունավետ սակագնային քաղաքականության իրականացման հիմնախնդիրը կապված է այն բանի հետ, որ ներկայումս ջրամատակարարման ծառայությունների գործող սակագները սահմանված են որպես միասնական գին 1մ^3 օգտագործված ջրի համար և իրենց մեջ փոփոխական դրույքներ չեն պարունակում: Այսինքն, հաշվի չեն առնվում ջրային ռեսուրսների օգտագործումը տարբեր տնտեսական, սոցիալական և տարածաշրջանային պայմաններում գտնվող սուբյեկտների կողմից, նրանց գնողունակությունը, պահանջարկը, տարբեր տնտեսական զարգացման միտումները:

IV. ՓՈՐՉԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

1. Սակագնային քաղաքականության իրականացման վերը նշված հիմնախնդրի լուծման նպատակով անհրաժեշտ է պահպանել ջրի գնորոշման հիմնական սկզբունքները՝ տնտեսական արդյունավետության, սոցիալական արդարության, ֆինանսական պահանջների և շրջակա միջավայրի:

2. Անհրաժեշտ է առաջիկայում մշակել ՀՀ տարածքի համար Խմելու ջրի մասին օրենք, որի նպատակն է լինելու՝ Հայաստանի Հանրապետության խմելու ջրի մատակարարման ոլորտում պետական քաղաքականության սկզբունքների և դրանց կանոնակարգման մեխանիզմների, անվտանգության և վերահսկողության սահմանումը, ինչպես նաև ներկայում և ապագայում մարդկանց բարեկեցությանն ուղղված անհրաժեշտ քանակի, տևողության և որակի խմելու ջրի մատակարարման ծառայությունների մատուցման ապահովումը:

3. Բնակավայրերի ջրամատակարարման ներքին ցանցն անհրաժեշտ է մասնավորից հանձնել ջրամատակարար կազմակերպություններին, ինչը հնարավորություն կտա լուծել բազմաբնկարանային շենքերի խմելու ջրի մատակարարման ոլորտում ներքին ցանցերի երկար տարիների ընթացքում չլուծված շահագործման հիմնախնդիրները:

4. Անհրաժեշտ է բարձրացնել ջրամատակարարման ծառայությունների մակարդակը (տեխնիկական վերազինում և կադրերի պատրաստում), իսկ ջրամատակարարման համակարգերի վերականգնման և կառուցման գործընթացում կիրառել արդիական տեխնոլոգիաներ:

5. Անհրաժեշտ է գնահատել ջրամատակարարման հետ կապված իրավիճակը 560 գյուղական համայնքում: :

6. Անհրաժեշտ է գնահատել ջրամատակարարման հետ կապված իրավիճակը կրթական կառույցներում, մասնավորապես դպրոցներում: :

Թիրախային ոլորտ IV
Հոդված 6, 2 (դ)
Ջրահեռացման մատչելիություն

Արձանագրության 6-րդ հոդվածի 2-րդ կետի <<դ>> ենթակետով պահանջվում է սահմանել թիրախային ցուցանիշներ և նպատակային ժամկետներ այն տարածքի մակերեսի կամ բնակչության այն թվաքանակի կամ մասնաբաժնի համար, որը պետք է սպասարկվի ջրահեռացման կոլեկտիվ համակարգերով կամ որի ջրահեռացման կոլեկտիվ համակարգը պետք է բարելավվի այլ միջոցներով:

I.ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Ա. Օրենսդրական դաշտ

ՀՀ Ջրային օրենսգիրք,

ՀՀ կառավարության 2004 թ.-ի հունվարի 22-ի «Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման կանոնների, ջրամատակարարման և ջրահեռացման պայմանագրերի օրինակելի ձևերը, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերին միացման տեխնիկական պայմանների սահմանման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թ.-ի մարտի 13-ի թիվ 149 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ130-Ն որոշում

ՀՀ կառավարության 2003 թ.-ի օգոստոսի 28-ի «Ջրահեռացման համակարգերի օգտագործման և հեռացվող ջրերի մաքրման կանոնները սահմանելու մասին» թիվ 1228-Ն որոշում

Բ. Ինստիտուցիոնալ շրջանակները

Ջրահեռացման ոլորտի խնդիրների իրականացման համար պատասխանատու մարմիններն են՝

- ՀՀ բնապահպանության նախարարությունը,
- ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեն,
- ՀՀ առողջապահության նախարարությունը,
- Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը,

- ՀՀ ֆինանսների նախարարությունը:

ՀՀ տարածքում կենտրոնացված կարգով խմելու ջրի մատակարարման ու ջրահեռացման ոլորտներում գործում է 5 ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող մասնագիտացված ընկերություն:

Այստեղ կիրառվել են մասնավոր համագործակցության տարբեր ձևեր:

- «Երևան Ջուր» ՓԲԸ
- «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ
- «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ
- «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ
- «Նոր Ակունք» ՓԲԸ

Աղյուսակ 19. Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող ընկերությունների կողմից սպասարկվող բնակավայրերը (ըստ տեսակների) և բնակչության թվաքանակը

| Կազմակերպության անվանումը | Մասսարկվող բնակավայրեր | | Բնակչության թվաքանակը |
|------------------------------|------------------------|-----------|--------------------------|
| | քաղաքային | գյուղական | |
| «Երևան Ջուր» ՓԲԸ | 2 | 31 | 1244230 |
| «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ | 37 | 268 | 789950 |
| «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ | 1 | 16 | 136500 |
| «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ | 2 | 34 | 188970 |
| «Նոր Ակունք» ՓԲԸ | 2 | 10 | 73430 |
| Ընդամենը | 44 | 359 | 2433080 |

II. ՆԵՐԿԱՅԻՄ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

ՀՀ կառավարությունը համաշխարհային թիրախները և ցուցանիշները տեղայնացնելիս, նոր ցուցանիշ է ավելացրել թիրախ 9-ին՝ կեղտաջրերի մաքրման կայանների կողմից սպասարկվող քաղաքների թիվը:

ՀԶՆ-ի թիրախ 10-ի ջրահեռացման մատչելիության վերաբերյալ տվյալները ներկայացված են հավելված 2-ում:

ԱՀԿ-ի և ՄԱՄՀ-ի Մոնիթորինգի համատեղ ծրագրի տվյալների համաձայն Բարելավված ջրահեռացման մատչելիությունը 2011թ.-ին Հայաստանի քաղաքների համար կազմել է 96%, իսկ գյուղական համայնքներում՝ 81%, ընդամենը՝ 90%¹⁰ (աղյուսակ 20):

Աղյուսակ 20. Ջրահեռացման ծածկույթի գնահատման միտումներն՝ ըստ Մոնիթորինգի համատեղ ծրագրի

| Հայաստան | Ջրահեռացման ծածկույթի գնահատականները | | | | | |
|--|--------------------------------------|------|---------------|------|--------------|------|
| | քաղաքային (%) | | գյուղական (%) | | ընդամենը (%) | |
| | 1990 | 2011 | 1990 | 2011 | 1990 | 2011 |
| Բարելավված հարմարություններ | 95 | 96 | | 81 | | 90 |
| Համատեղ օգտագործման հարմարություններ | 3 | 3 | | 3 | | 3 |
| Այլ չբարելավված հարմարություններ | 2 | 1 | | 16 | | 7 |
| Դեֆեկացիա /կղկղում/ բացօթյա պայմաններում | 0 | 0 | | 0 | | 0 |

Աղբյուրը՝ ԱՀԿ/ՄԱԿ-ի ԵՏՀ Մոնիթորինգի համատեղ ծրագիր, 2013թ.

Հանրապետության բոլոր քաղաքային համայնքները և որոշ խոշոր գյուղական համայնքներ ունեն ջրահեռացման կենտրոնացված համակարգեր:

Ընդհանուր առմամբ, հանրապետությունում առկա է շուրջ 620 կմ երկարությամբ գլխավոր կոլեկտորներ և 3200 կմ ջրահեռացման ցանցեր: Հանրապետության առավել խոշոր քաղաքներում (որտեղ բնակվում է հանրապետության բնակչության 60-65%-ը) ջրահեռացման կենտրոնացված համակարգերով ծածկվածության աստիճանը հետևյալն է՝ Երևան 96%, Գյումրի 50%, Վանաձոր 70%, Սիսիան 41%, Աշտարակ 100%, Ալավերդի 37%, Արարատ 38%, Արտաշատ 55%, Վաղարշապատ 62%, Գավառ 49%, Վարդենիս 48%, Սևան 58%:

Հանրապետության գյուղական համայնքների մեծ մասի համար ջրահեռացման համակարգն անհասանելի է: Գյուղական տնային տնտեսությունների գրեթե 75%-ը իրենց բնակարաններում չունեն հիմնական ջրամատակարարման և ջրահեռացման հարմարություններ:

¹⁰ http://www.wssinfo.org/documents-links/documents/?tx_displaycontroller%5Btype%5D=country_files

Հանրապետությունում կա 560 գյուղական համայնք, որոնք ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող մասնագիտացված ընկերությունների կողմից չեն սպասարկվում: Ջրամատակարարումն իրականացվում է պատմականորեն ձևավորված լոկալ աղբյուրների միջոցով, ջրային համակարգերը շահագործվում են համայնքի կամ դրա բնակիչների միջոցով: Այս խնդիրը կարգավորելու նպատակով ներկայումս Գերմանական զարգացման բանկի ֆինանսավորմամբ նախատեսվում է նշված համայնքներում իրականացնել համապատասխան ուսումնասիրություններ՝ առկա խնդիրներն ուսումնասիրելու, ֆինանսական գնահատականներ տալու և հետագա կառավարմանն ուղղված առաջարկություններ ներկայացնելու համար:

Առկա ջրահեռացման համակարգերը հաճախ վատ վիճակում են կամ այլևս չեն գործում:

Արդեն 20 տարուց ավել ջրահեռացման համակարգում բավարար շահագործման ու պահպանության ծախսեր չեն իրականացվել (բացի մի քանի մեծ քաղաքներում վթարների վերացումը) և համակարգը կամաց-կամաց շարքից դուրս է գալիս: Մաքրման կայանների բացակայության պատճառով՝ նախկինում գործող մաքրման 22 կայանից այսօր աշխատում են միայն Երևանի <<Աերացիա>> կայանը և Սևանի ավազանում նոր կառուցված 3 կայանը, որոնք միայն մեխանիկական մաքրում են իրականացնում, բնակավայրերը վեր են աճել շրջակա միջավայրի խոշոր աղտոտողների: Բնակավայրերի կենցաղային, որոշ քաղաքներում նաև արտադրական կեղտաջրերը առանց մաքրվելու լցվում են մակերևութային ջրային օբյեկտներ, աղտոտելով ջրային ռեսուրսները, դեգրադացիայի ենթարկելով ջրային ու ցամաքային էկոհամակարգերը:

Շատ անմխիթար վիճակում են գտնվում գյուղական համայնքերի կրթական կառույցները: Հաճախ բացակայում են կենտրոնացված ջրահեռացման համակարգերը (աղյուսակ 18):

Գյուղական բնակավայրերում, որտեղ չկա կենտրոնական ջրահեռացման համակարգ, որպես այլընտրանքային մեթոդ կարող է կիրառվել էկոսան տիպի զուգարանները:

Մեզը կղանքից գատող համակարգով զուգարանները ցուցադրական օրինակ են այն բանի, թե ինչպես կարելի է այլընտրանքային եղանակով բարելավել մարդկանց, հատկապես՝ երեխաների սանիտարական և հիգիենիկ պայմանները, պաշտպանել հողը և ստորերկրյա ջրերը մարդու արտաթորանքի ներթափանցումից: Համարյա բոլոր գյուղական դպրոցներում աշակերտներն օգտվում են դպրոցի բակի մի անկյունում տեղակայված հորատիպ զուգարանից: Այդպիսի զուգարանները գտնվում են անմխիթար վիճակում, զարշահոտ են, կեղտոտ և չեն երաշխավորում անձի մեկուսացումը, քանի որ դրանց դռները կամ չեն փակվում, կամ իսպառ բացակայում են: Կա

մեկ այլ վտանգ ևս, որը կապված է զուգարանների սայթաքուն հատակների հետ: Շատ դպրոցներում չկան ձեռքերը լվանալու համար անհրաժեշտ պայմաններ, իսկ որոշ դեպքերում նույնիսկ խմելու ջուր չկա¹¹:

Հայաստանում էկոսան տիպի զուգարաններ են կառուցվել Կոտայքի, Արարատի, Լոռու և այլ մարզերի տարբեր համայնքներում <<Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի>> և <<Լոռե>> էկո ակումբ ՀԿ-ների կողմից: Դրանք կամ դպրոցական զուգարաններ են կամ կառուցվել են անհատ տնտեսությունների համար: Այս համակարգն այլընտրանքային լուծում է գյուղական վայրերում ջրահեռացման բացակայության դեպքում:

Գենդերային խնդիրներ. Կանայք և աղջիկները ոչ համարժեք սանիտարական վիճակից ավելի են տուժում, քան տղամարդիկ և երիտասարդ տղաները: Ուսումնասիրություններից պարզվել է, որ դպրոցներում արտաքննողների բացակայության պատճառով աղջիկները խուսափում են դպրոց հաճախելուց: Բացի վերը թվարկված խնդիրների կարգավորումից, դպրոցի ներսում կառուցված էկոսան արտաքննողի կիրառումն ունի մի քանի այլ առավելություններ՝ հատկապես աղջիկներին ցուրտ եղանակին զերծ է պահում միզապարկի բորբոքումներից, ինչպես նաև սեռական անհանգստությունների վտանգից:

III. ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԸՆԹԱՑԻԿ ԵՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Անկախությունից ի վեր նախկին խորհրդային երկրներում, ինչպես Հայաստանում, կան խնդիրներ՝ կապված պատշաճ ջրամատակարարման և ջրահեռացման իրականացման հետ:

Հարկ է նշել, որ հանրապետությունում իրականացված ջրային ոլորտի բարեփոխումները, որոնք զգալի չափով բարելավել են ջրամատակարարման ոլորտը, հիմնականում չեն առնչվել ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման խնդիրներին: Այդ իսկ պատճառով վերջին տարիներին հանրապետության կառավարության կողմից իրականացվել են մի շարք միջոցառումներ՝ ուղղված ջրահեռացման համակարգերի բարելավմանն ու կեղտաջրերի մաքրման կայանների կառուցմանը:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Սևանա լճի ավազանի բնապահպանական ծրագրի շրջանակում կառուցվել և 2013 թվականին շահագործման են հանձնվել Գեղարքունիքի մարզի Գավառ, Մարտունի և Վարդենիս քաղաքների կեղտաջրերի մաքրման կայանները: Նշված ծրագրի շրջանակում Գավառ, Մարտունի, Վարդենիս, Սևան և Ջերմուկ քաղաքներում կառուցվել և վերանորոգվել է 52 կմ երկարությամբ կոյուղագիծ, իսկ ջրահեռացման ցանցերի

¹¹ ՀԿՀԱԱՇՄ ՀԿ

վրա կառուցվել և վերանորոգվել է 794 դիտահոր: Արդյունքում որոշակիորեն բարելավվել է տվյալ բնակավայրերի բաժանորդներին մատուցվող ջրահեռացման ծառայությունների որակը:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի և Եվրոպական ներդրումների բանկի միջոցների հաշվին, ինչպես նաև պետական համաֆինանսավորմամբ նախատեսվում է կառուցել և 2015 թվականին շահագործման հանձնել Դիլիջան և Ջերմուկ քաղաքների կեղտաջրերի մաքրման կայանները:

Ֆրանսիայի կառավարության կողմից հատկացվել են միջոցներ Երևանի <Աերացիա> կեղտաջրերի մաքրման կայանը վերակառուցելու նպատակով:

Երևանից ոչ հեռու գտնվող Փարաքար գյուղական համայնքում վերջերս շահագործման հանձնվեց կեղտաջրերի մաքրման սկզբունքորեն նոր համակարգ, որը կարող է իրականացնել ոչ մեծ ծավալի հոսքաջրերի մաքրում, իսկ կառուցման աշխատանքները մեծ ծախսեր չեն պահանջում:

Ներկայումս Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) ֆինանսավորմամբ իրականացվում է ջրահեռացման ոլորտի և կեղտաջրերի մաքրման կայանների ուսումնասիրության աշխատանքներ, որի արդյունքում մշակվելու են ոլորտի զարգացման սկզբունքները:

IV. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

«Ձուր և առողջություն» արձանագրության իրավասության սահմաններում գտնվող ջրերի մեջ չմաքրված կեղտաջրերի արտահոսքի դեպքերը կրճատելու և հետագայում բացառելու տեսանկյունից կարևոր նշանակություն ունի ջրահեռացման ոլորտի հիմնախնդիրների լուծումը:

Հայաստանի Հանրապետության տնտեսաֆինանսական կարգավիճակով պայմանավորված, ինչպես նաև նախորդ կետերում ներկայացված խնդիրներով պայմանավորված՝ խիստ անբավարար վիճակում է գտնվում հանրապետության ջրահեռացման ոլորտը:

Խմելու ջրի մատակարարման ապահովության և անվտանգության տեսանկյունից առաջնային խնդիրներից է խմելու ջրի աղբյուրներին (ռեսուրսներին) մոտ գտնվող բնակավայրերի ջրահեռացումն ու կեղտաջրերի մաքրումը:

Ընդհանուր առմամբ հանրապետության ջրահեռացման ոլորտի քաղաքականության զարգացումն ապահովվելու նպատակով անհրաժեշտ է առանձնացնել և իրականացնել հետևյալ միջոցառումները.

- առաջնային խնդիրների որոշում,
- ռեսուրսների ներգրավում և ռացիոնալ օգտագործում,

- կենտրոնացված կամ լոկալ (օր. Էկոսան) ջրահեռացման համակարգերի մոդելների ընտրություն, կեղտաջրերի մաքրման կայանների կառուցման ծրագրերի մշակում իրարից ոչ հեռու քաղաքային և գյուղական համայնքների համար,
- սակագնային քաղաքականության մշակում, որը կապահովի ջրահեռացման մատչելիությունը, ինչպես նաև ջրահեռացման համակարգերի և կեղտաջրերի մաքրման կայանների արդյունավետ կառավարումն ու զարգացումը,
- 560 գյուղական համայնքում ջրահեռացման հետ կապված իրավիճակի գնահատում,
- հանրակրթական կառույցներում, ներառյալ՝ դպրոցներում ջրահեռացման հետ կապված իրավիճակի գնահատում:

Թիրախային ոլորտ V
Հոդված 6, 2 (ե), առաջին մաս
Ջրամատակարարման կոլեկտիվ և այլ համակարգերի
արտադրողականության մակարդակը

Արձանագրությունը պահանջում է նշել նպատակային ցուցանիշները և արդյունավետության մակարդակը, որոնց կարելի կլինի հասնել կոլեկտիվ համակարգերով և ջրամատակարարման այլ միջոցներով հոսակորուստների կրճատումով:

1.ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Ա. Ռազմավարություններ և իրավական / կարգավորիչ դաշտ

ՀՀ ջրային օրենսգիրք

ՀՀ կառավարության 2004 թ.-ի հունվարի 22-ի «Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման կանոնների, ջրամատակարարման և ջրահեռացման պայմանագրերի օրինակելի ձևերը, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերին միացման տեխնիկական պայմանների սահմանման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թ.-ի մարտի 13-ի թիվ 149 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ130-Ն որոշում

Ներկայումս հանրապետությունում մեծ ուշադրություն է դարձվում ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարմանը, զարգացմանը և օգտագործմանը հասնելու համար իրականացվող գործընթացին, որը զետեղված է 2006թ. ՀՀ «Ջրի ազգային ծրագրի մասին» օրենքում, որտեղ սահմանված են միջնաժամկետ (2015թ.) և երկարաժամկետ (2020թ.) նպատակները:

Ջրային ռեսուրսների առավել արդյունավետ, նպատակուղղված և ապակենտրոնացված կառավարումը խթանելու նպատակով Ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կառուցվածքում ստեղծվել է 6 տարածքային ստորաբաժանում՝ Հյուսիսային, Ախուրյանի, Արարատյան, Սևանի, Հրազդանի և Հարավային:

Համաձայն ՀՀ կառավարությանն առնթեր ջրային տնտեսության պետական կոմիտեի կանոնադրության, հաստատված 5-ը սեպտեմբերի 2002 թվականի Հ-1400 որոշմամբ, պետական սեփականություն հանդիսացող ջրային համակարգերի կառավարումն ու անվտանգ օգտագործման ապահովումը, ինչպես նաև իր իրավասության սահմաններում ջրի ազգային ծրագրի իրականացման ապահովումը հանդիսանում են կոմիտեի նպատակներն ու խնդիրները:

Ջրային տնտեսության ոլորտի զարգացման ռազմավարությունն ընդհանրական տեսքով կարելի է դիտարկել երեք կտրվածքով՝ տեխնիկական, տնտեսական և ինստիտուցիոնալ:

Ոլորտի տեխնիկական ռազմավարությունը նպատակաուղղված է ջրային համակարգերի տեխնիկական վերազինմանը և արդիականացմանը, որը հնարավորություն կընձեռնի արդյունավետ կերպով իրականացնել հանրապետության տարբեր բնակավայրերի ջրամատակարարումը: Այս ուղղությամբ արդեն արվել են որոշակի քայլեր, որորնցից խմելու ջրի ոլորտում առանձնապես կարևորվում է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման վարկային ծրագրի իրագործումը, Գերմանական զարգացման բանկի աջակցությամբ հանրապետության Արմավիրի, Լոռու, Շիրակի մարզերում իրականացվող վարկային ծրագրերի իրագործումը, որոնք թույլ կտան առաջնահերթության որոշման չափանիշներով ընտրված համակարգերում բարելավել հանրապետության բազմաթիվ բնակավայրերի ջրամատակարարումը, իրականացնել ցանցերի գոտիավորման, հոսակորուստների մակարդակի կրճատման և այլ աշխատանքներ:

Ոլորտի տնտեսական զարգացումը հիմնականում պայմանավորված է արդյունավետ կառավարման, համապարփակ հաշվառման համակարգերի ներդրման և կատարելագործման, եկամուտների անհրաժեշտ մակարդակի ապահովման և ծախսերի հնարավոր կրճատման (մասնավորապես, էլեկտրաէներգիայի ծախսի) հետ:

Ոլորտի ինստիտուցիոնալ զարգացման ռազմավարական ուղղություններից մեկը պետական սեփականություն հանդիսացող ընկերության կառավարման կամ շահագործման բնագավառում մասնավոր ոլորտի ներգրավումն է: Այդ ոլորտի ներգրմամբ պետական ընկերության կառավարման փորձն առաջին անգամ իրականացվել է Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ում, որի գործունեության անցած տարիների արդյունքներն արդեն գնահատվել են բավարար:

Բ. Ինստիտուցիոնալ շրջանակները

ՀՀ ջրային օրենսգրքի ընդունմամբ ներդրվեց նոր ինստիտուցիոնալ համակարգ, որի համաձայն ոլորտի կառավարումն իրականացվում է հետևյալ մարմինների կողմից՝

- ՀՀ բնապահպանության նախարարությունը, որի կազմում է ջրային ռեսուրսների կառավարման գործակալությունը, իրականացնում է ջրային ռեսուրսների պահպանություն և կառավարում,
- ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեն, որն իրականացնում է ջրային համակարգերի պետական կառավարում,
- Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով, որն իրականացնում է սակագնային քաղաքականություն ջրային հարաբերություններում:

**Ջրամատակարարման կոլեկտիվ և այլ համակարգերի
արդյունավետության մակարդակը**

Ներկայումս հանրապետությունում մեծ ուշադրություն է դարձվում ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարմանը, զարգացմանը և օգտագործմանը հասնելու համար իրականացվող գործընթացին, որը զետեղված է 2006թ. «ՀՀ Ջրի ազգային ծրագրի մասին» օրենքում, որտեղ սահմանված են միջնաժամկետ (2015թ.) և երկարաժամկետ (2020թ.) նպատակները:

Հանրապետությունում տարիներ շարունակ ջուր մատակարարող ընկերությունների գործունեությանը խոչնդոտող գլխավոր հիմնահարցերից են ջրմուղի ցանցի, կառուցվածքների և այլ հիմնական միջոցների մաշվածությունը, ջրի հաշվառման արդյունավետ համակարգի՝ ջրաչափերով լրիվ ապահովվածության բացակայությունը, ծառայությունների դիմաց վարձավճարների հավաքագրման ցածր մակարդակը, ջրի մեծ կորուստների առկայությունը, ծառայությունների իրացման ցածր սակագները, բազմաբնակարան շենքերի ընդհանուր սեփականություն համարվող ներքին ցանցերի ցածր մակարդակով շահագործումը, որոնք հնարավորություն չեն տալիս ապահովել համակարգերի արդյունավետ տնտեսական գործունեությունը:

Չնայած այս ոլորտի առկա օրենսդրական բազմաթիվ բարեփոխումներին, ՀՀ-ում, մինչ այժմ, մասամբ դեռ օգտագործվում են խմելու ջրի մատակարարման, որակի թեստավորման, սանիտարա-հիգիենիկ պահանջների, ֆիլտրերի, մատակարարման գործընթացում խմելու ջրի հետ անմիջական շփում ունցող նյութերի որակի և օգտագործման մասին համապատասխան նորմերը:

Խմելու ջրի որակի նկատմամբ ընդունված նորմերը ենթադրում են համապատասխան մոնիտորինգ և հսկողություն: Խմելու ջրի ջրամատակարարները և ջրօգտագործողները պետք է ապահովեն խմելու ջրի որակի ընթացիկ մոնիտորինգ՝ համաձայն հաստատված ծրագրերի, որոնք ներառում են մատակարարվող ջրի մշակման և մաքրման արդյունավետության նկատմամբ հսկողություն, հատկապես վարակազերծման և մատակարարվող ջրի որակի նկատմամբ: Խմելու ջրի որակի մոնիտորինգ իրականացնող լաբորատորիաների ցանկը և անալիզի ենթակա պարամետրերը հաստատում է ՀՀ կառավարությունը:

Ջրամատակարարման համակարգերի շահագործումը, կախված տեղային պայմաններից, պետք է ապահովի բնակելի, հասարակական շենքերում և կազմակերպություններում կենցաղային և խմելու ջրի պահանջարկը:

Հայաստանի Հանրապետության տարածքում խմելու ջրի մատակարարումը հիմնականում իրականացվում է կենտրոնացված համակարգով՝ ջրամատակարար կազմակերպությունների կողմից:

Ջրամատակարարման համակարգերի շահագործումը, պահպանումը, բնականոն աշխատանքի ապահովումը պահանջում է վթարային և վերականգնողական պարտադիր որոշակի աշխատանքների մշտական իրականացում:

Հանրապետության բնակավայրերի ջրմուղի ցանցերը 2011թ. տվյալներով ունեն հետևյալ երկարությունները՝ ջրատարներ՝ 5475կմ, փողոցային ցանց՝ 6641.3կմ, որից լիովին փոխման կարիք ունի 4184.8կմ-ը: Միջթաղային և

միջբակային ցանցերն ունեն 987.5կմ երկարություն, որոնցից կեսից ավելին փոխման, իսկ մնացածը՝ վերանորոգման կարիք ունեն:

Վերջին տարիներին հանրապետության մայրուղի ջրատարները հաճախակի են սկսել ենթարկվել վթարի, հատկապես սողանքային երևույթների ակտիվացման հետևանքով՝ կապված խողովակաշարերի անցման տարածքների ոչ կարգավորված ռոզման հետ: Դրա հետևանքով երկար ժամանակ, նույնիսկ օրեր, բնակչությունը զրկվում է խմելու ջրից:

Ջուր մատակարարող առանձին կազմակերպությունների տեխնիկական համակարգերն իրենց կազմում ունեն տարբեր տիպի և քանակի կառուցվածքներ:

Այսպես, «Երևան Ջուր» ՓԲԸ-ի տեխնիկական համակարգն իր կազմում ունի 8 ջրաղբյուրում գտնվող պոմպակայաններ, 2645կմ ջրմուղի ցանց, 720կմ երկարությամբ արտաքին մայրուղի ջրատար, 90 կապտաժ, 29 հորատանցք, 23 օրական կարգավորման ջրամբար (ՕԿՁ):

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի տեխնիկական համակարգն իր կազմում ունի 12 խմելու ջրի մաքրման կայան, 441 կապտաժ, 78 խորքային հոր, 42 գլխավոր և 141 ներհամայնքային պոմպակայան, 322 ՕԿՁ (225.45 հազ.մ³ ընդհանուր տարողությամբ), 3848կմ երկարությամբ մայրուղի ջրատար, 4345կմ երկարությամբ ջրամատակարարման ցանց:

«Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ կազմակերպության տեխնիկական համակարգի ջրամատակարարումն իրականացվում է Գլազանչիի, Ջույգաղբյուրի, Կրասարի և Վարդբաղի ջրաղբյուրներից: Ջրամատակարարման ներհամայնքային ցանցի երկարությունը կազմում է մոտ 350կմ, գոյություն ունի 9 ՕԿՁ, 78 ներհամայնքային պոմպ և 5 քլորակայան:

«Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ կազմակերպության տեխնիկական համակարգն իր կազմում ունի 77 կապտաժային կառուցվածք, 5 վարակազերծման կայան, 12 պոմպակայան, գետակից սնվող 1 ջրի մաքրման կայան, 14 ՕԿՁ (23.5 հազ. մ³ ընդհանուր տարողությամբ), 176կմ երկարությամբ մայրուղի ջրատար, 22 պոմպակայան և 285կմ երկարությամբ ջրամատակարարման ցանց:

«Նոր Ակունք ՓԲԸ-ն իր գործունեությունն իրականացնում է 1 կապտաժային կառուցվածքի, 14 խորքային հորի, 14 գլխավոր պոմպակայանի, 8 ՕԿՁ-ի և 5 ջրանշման աշտարակի միջոցով:

Հանրապետությունում առկա են բազմաթիվ գյուղական բնակավայրեր, որոնց ջրամատակարարումն իրականացվում է համապատասխան համայնքների ուժերով, կամ համայնքային նշանակություն ունեցող կազմակերպությունների միջոցով:

2012թ. «Երևան Ջուր» կազմակերպության կողմից սպասարկվող բնակիչների հետ կատարված հարցումների արդյունքում պարզվել է, որ ընդհանուր սպասարկվողների 1%-ի ջրամատակարարման գրաֆիկի տևողությունը կազմում է մինչև 4 ժամ, 1.5%-ինը՝ 4-6 ժամ, 2%-ինը՝ 6-8 ժամ, 15.2%-ինը՝ 8-12 ժամ, 17.3%-ինը՝ 12-20 ժամ և 63%-ինը՝ 20-24 ժամ :

Աղյուսակ 21-ում ներկայացված են հանրապետության 5 ջրամատակարար կազմակերպության կողմից օրվա ընթացքում խմելու-կենցաղային նպատակներով սպասարկվող ժամերի քանակը 2009-2012 թվականների ընթացքում:

Աղյուսակ 21. Հանրապետության ջրամատակարարող կազմակերպությունների կողմից սպառողին օրվա ընթացքում ջրի մատակարարման տևողությունը, ժամ

| Չոր մատակարարող կազմակերպությունը | Տ ա ր Ե թ Ի Վ | | | |
|-----------------------------------|---------------|------|------|------|
| | 2009 | 2010 | 2011 | 2012 |
| Երևան-Չոր | 20.4 | 21.9 | 22.9 | 23 |
| Հայջրմուղկոյուղի | 12.7 | 13.7 | 15 | 16 |
| Լոռի-ջրմուղկոյուղի | 10.7 | | 11 | 12.1 |
| Շիրակ-ջրմուղկոյուղի | 9.2 | 10.4 | 11.9 | 13.7 |
| Նոր Ակունք | 22.3 | 22.4 | 22.4 | 22.4 |

Բնակչությանը խմելու ջրով մատակարարման տևողությունը հանրապետությունում ըստ տարիների գնալով ավելանում է, որն արդյունք է ինչպես ջրամատակարարման համակարգի տեխնիկական վիճակի բարելավման, այնպես էլ մասնավոր կառավարման համակարգի ներդրման և մի շարք կազմակերպչական ու վերահսկողական միջոցառումների իրականացման:

Ամբողջ հանրապետության խմելու ջրի մատակարարման ոլորտում լրջագույն խնդիրներից է ջրամատակարարման համակարգերից ջրի կորուստների բարձր մակարդակը:

Այդ կորուստները դասակարգվում են հետևյալ 3 հիմնական խմբի՝

1. տեխնիկական կորուստներ (վթարներ, համակարգի շահագործում),
2. տեխնոլոգիական կորուստներ (ՕԿՁ-ների լվացումներ, արտադրություն և տեղափոխում),
3. առևտրային կորուստներ (ապօրինի միացումներ և ջրագողություններ):

Նշված խնդրի լուծումն էապես կարևորվում է ոլորտի հետագա զարգացման, ինչպես նաև սակագների ձևավորման և համակարգի կազմակերպությունների ֆինանսական կենսունակության բարձրացման նկատառումներով:

III. ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՍՆՊԱՏԱՍԽԱՆ ԸՆԹԱՑԻԿ ԵՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հանրապետության բոլոր 5 ջրամատակարար կազմակերպությունում կորուստների չափը ներկայումս տատանվում է 74%-ից (Նոր Ակունք) մինչև 84% (Երևան ջուր):

Կորուստների այդ չափի մեծությունը պայմանավորված է համակարգի տեխնիկական վիճակով, առկա բազմաթիվ վթարներով, ապօրինի ջրամիացումներով, ջրաչափերի նկատմամբ միջամտությունների իրականացմամբ և այլն:

Կորուստների մեծություններն իրենց արտացոլումն են գտել նաև սակագների սահմանման հաշվարկների հիմքում, որոնք տարբեր կազմակերպությունների համար տատանվում են 7 տարբեր սահմաններում՝ նպաստելով բարձր սակագների սահմանմանը, միավոր ջրի տեղափոխման համար մեծ ծախսերի իրականացմանը և եկամուտների թերագնահատմանը:

Պատճառներից մեկն էլ այն է, որ ջրամատակարարման համակարգում վերջին ժամանակներս ճնշման բարձրացման և սպասարկման ժամերի

ավելացման հետևանքով կորուստներն աճել են՝ ցանցերի ներկայիս վատթար տեխնիկական վիճակի և մաշվածության հետևանքով:

Նշված կորուստների խոշոր արժեքների վրա մեծ ազդեցություն է թողել նաև այն հանգամանքը, որ նախկին մեծությունները եղել են ոչ իրատեսական կամ ոչ ճիշտ, հաշվառման համակարգի թերի լինելու պատճառով:

Հանրապետության ջրային ոլորտում դեռևս մեծ չափերի են հասնում մեխանիկական եղանակով (պոմպերի միջոցով) ջրամատակարարումը, ինչպես համակարգի ներքին, այնպես էլ արտաքին ցանցերում, ինչը բերում է համակարգի էլեկտրաէներգիայի հսկայական ծախսերի, հետևաբար և սպասարկման մեծ ծախսերի:

Անհրաժեշտ են իրականացնել ջրընդունիչների, ջրատարների, ջրաղբյուրների, պոմպակայանների տեղաբաշխման տարածքի մասնագիտական հետազոտություններ, հատկապես արտաքին ցանցում՝ դրանց ինքնահոս եղանակի անցման հնարավորությունները գնահատելու համար:

IV. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

2014-2020թթ.-ի ընթացքում հանրապետության 5 ջրամատակարար կազմակերպության կողմից անհրաժեշտ է՝

- կտրուկ կրճատել ջրակորուստները՝ 84%-ից հասցնելով մինչև 40%
- ամբողջովին վերացնել ապօրինի միացումները,
- շարունակական ջրամատակարարման ցուցանիշն ամեն տարի ավելացնելով մոտ 2%-ով՝ 2020թ.-ին 24 ժամյա սպասարկում ապահովել բնակչության 90-95%-ի համար:

Թիրախային ոլորտ VI

Հոդված 6, 2 (ե)

Ջրահեռացման կոլեկտիվ և այլ նմանօրինակ համակարգերի արտադրողականության մակարդակը

Արձանագրության 6-րդ հոդվածի 2-րդ կետի <<ե>> ենթակետով պահանջվում է սահմանել արդյունավետության այն մակարդակների համար թիրախային ցուցանիշներ և նպատակային ժամկետներ, որոնց պետք է հասնեն ջրամատակարարման և ջրահեռացման կոլեկտիվ և այլ նմանօրինակ համակարգերը:

I.ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Ա. Օրենսդրական դաշտ

ՀՀ ջրային օրենսգիրք

ՀՀ կառավարության 2004 թ.-ի հունվարի 22-ի <<Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման կանոնների, ջրամատակարարման և ջրահեռացման պայմանագրերի օրինակելի ձևերը, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերին միացման տեխնիկական պայմանների սահմանման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թ.-ի մարտի 13-ի թիվ 149 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ130-Ն որոշում

ՀՀ կառավարության 2003 թ.-ի օգոստոսի 28-ի <<Ջրահեռացման համակարգերի օգտագործման և հեռացվող ջրերի մաքրման կանոնները սահմանելու մասին>> թիվ 1228-Ն որոշում

Բ. Ինստիտուցիոնալ դաշտ

Ջրահեռացման ոլորտի խնդիրների իրականացման համար պատասխանատու մարմիններն են՝

- ՀՀ բնապահպանության նախարարությունը,
- ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեն,
- ՀՀ առողջապահության նախարարությունը,
- Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը,
- ՀՀ ֆինանսների նախարարությունը,

- Կենտրոնացված կարգով խմելու ջրի մատակարարման ու ջրահեռացման ոլորտներում գործող ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող 5 մասնագիտացված ընկերությունները:

II. ՆԵՐԿԱՅԻՍ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

2011-2012թթ. խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող ընկերությունների կողմից ջրամատակարարման և ջրահեռացման ծավալները ներկայացված են ստորև՝ աղյուսակ 22-ում:

Աղյուսակ 22. 2011-2012թթ. խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող ընկերությունների կողմից ջրամատակարարման և ջրահեռացման ծավալները

| Կազմակերպությունների անվանումը | 2011թ. | | 2012թ. | |
|--------------------------------|-------------------------|---------------------|-------------------------|---------------------|
| | ջրամատակարարում մլն.մ/խ | ջրահեռացում մլն.մ/խ | ջրամատակարարում մլն.մ/խ | ջրահեռացում մլն.մ/խ |
| «Երևան Ջուր» ՓԲԸ | 60.27 | 63.59 | 60.71 | 64.56 |
| «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ | 26.10 | 15.39 | 30.4 | 17.10 |
| «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ | 2.39 | 2.04 | 2.64 | 2.08 |
| «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ | 4.67 | 3.69 | 4.80 | 3.80 |
| «Նոր Ակունք» ՓԲԸ | 1.96 | 1.50 | 2.11 | 1.51 |
| Ընդամենը | 95.39 | 86.21 | 100.66 | 89.05 |

Ընդհանուր առմամբ հանրապետությունում առկա է շուրջ 620կմ երկարությամբ գլխավոր կոլեկտորներ և մոտ 3200կմ ջրահեռացման ցանցեր (Աղյուսակ 23) :

| Կազմակերպությունների անվանումը | Ջրահեռացման ցանց, կմ | Գլխավոր կոլեկտորներ, կմ |
|--------------------------------|----------------------|-------------------------|
| «Երևան Ջուր» ՓԲԸ | 950.0 | 220.0 |
| «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ | 1782.0 | 319.0 |
| «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ | 148.0 | 58.0 |
| «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ | 245.8 | 18 |
| «Նոր Ակունք» ՓԲԸ | 45.1 | 5 |
| Ընդամենը | 3170.9 | 620 |

Հանրապետության առավել խոշոր քաղաքներում (որտեղ բնակվում է հանրապետության բնակչության 60-65%-ը) ջրահեռացման կենտրոնացված համակարգերով ծածկվածության աստիճանը հետևյալն է՝ Երևանում 96%, Գյումրիում 50%, Վանաձորում 70%, Սիսիանում 41%, Աշտարակում 100%, Ալավերդիում 37%, Արարատում 38%, Արտաշատում 55%, Վաղարշապատում 62%, Գավառում 49%, Վարդենիսում 48%, Սևանում 58%:

Կենտրոնացված ջրահեռացման համակարգեր ունեցող բնակավայրերի կեղտաջրերը, շնորհիվ ռելիեֆային առանձնահատկությունների, հիմնականում ինքնահոս եղանակով են հասնում կեղտաջրերի մաքրման կայաններ: Սակայն կեղտաջրերը մաքրվում են ոչ լրիվ ծավալով և լավագույն դեպքում իրականացվում է մեխանիկական մաքրում, մյուս դեպքերում կեղտաջրերը թափվում են ջրընդունիչներ վթարային ելքերի միջոցով՝ շրջանցելով մաքրման կայանները կամ անցնում են մաքրման կայանների ողջ տեխնոլոգիական համակարգով՝ առանց մաքրվելու:

Հանրապետությունում դեռևս 1960-1980 թվականներին կառուցվել է 22 կեղտաջրերի մաքրման կայան, սակայն տեխնիկական սպասարկման իրականացման համար ծախսերի և համապատասխան ներդրումների բացակայության պատճառով, դրանց գերակշիռ մասը շարքից դուրս է եկել և ներկայումս չի գործում: Բացառություն է կազմում Երևանի «Աէրացիա» կեղտաջրերի մաքրման կայանը, որը նախատեսված էր Երևան քաղաքի և հարակից բնակավայրերի կեղտաջրերի մեխանիկական և կենսաբանական

մաքրման համար : Ներկայումս կայանում իրականացվում է միայն մասնակի մեխանիկական մաքրում:

Բացի այդ, հարկ է նշել, որ վերը նշված կայանների համար նախատեսված մաքրման տեխնոլոգիաները բավականաչափ էներգատար են և արդի ժամանակաշրջանի համար ֆինանսապես անարդյունավետ են համարվում:

Երևանի <<Ալրագիա>> կեղտաջրերի մաքրման կայան (այսուհետ՝ ԿՄԿ):

ԿՄԿ շինարարությունը սկսվել է 1963թ.-ին, լրիվ հզորությամբ շահագործման է հանձնվել 1978թ.-ին:

ԿՄԿ նախագծային հզորությունը կազմում է 600 000 մ³/տ /օր:

ԿՄԿ իրենից ներկայացնում է մեծ էներգատար համալիր, յուրաքանչյուր իս/մ կեղտաջրի մաքրման համար պահանջվող էլեկտրաէներգիայի ծախսը կազմում է 0,5 կՎտ/ժ :

ԿՄԿ մուտք գործող և մաքրված կեղտաջրերի տեխնոլոգիական ցուցանիշներն են՝

- մուտք գործող կեղտաջրերի ԹԿՊ
մինչև 240 մգ/լ
- մուտք գործող կեղտաջրերի ԹՔՊ
մինչև 360 մգ/լ
- մուտք գործող կեղտաջրերի կախված մասնիկների կոնցենտրացիան
մինչև 215 մգ/լ
- մուտք գործող կեղտաջրերի PH-ը
6,5-8.5
- մաքրված կեղտաջրի ԹԿՊ
15 մգ/լ
- մաքրված կեղտաջրի ԹՔՊ
22,5 մգ/լ
- մաքրված կեղտաջրի կախված մասնիկների կոնցենտրացիան
15 մգ/լ

ԿՄԿ տեխնոլոգիական գործընթացի նկարագիրը

Կեղտաջրերի մաքրումը նախատեսված է իրականացնել հետևյալ, միմյանց հետ փոխկապակցված տեխնոլոգիական գործընթացներով՝

- մեխանիկական մաքրում,
- կենսաբանական մաքրում,
- տիդմի վերամշակում,
- մաքրված ջրերի ախտահանում:

Պայմանավորված այն հանգամանքով, որ ներկայումս ԿՄԿ տեխնիկական վիճակը թույլ է տալիս իրականացնել միայն մեխանիկական մաքրում, ստորև կներկայացվի տվյալ մաքրման համար անհրաժեշտ կառուցվածքները և դրանց ներկայիս վիճակը:

Մեխանիկական մաքրման համար նախատեսված են հետևյալ կառուցվածքները՝

- ընդունման խուց, ճաղավանդակ - (5 հատ ՄԴ -180 մակնիշի),
- հորիզոնական աերացվող ավազորսիչներ - (54*6*3.35մ չափերով 4 կառուցվածք),
- առաջնային շառավղային պարզարաններ - (40մ տրամագծի և 4.5մ խորության 10 պարզարան իրենց պոմպակայաններով):

ԿՄԿ կայանի տեխնոլոգիական կառուցվածքների ներկայիս վիճակը

- Ճաղավանդակները մաշված են և կոռոզիայի ենթարկված:
- Խոշոր թափոնների մանրացման ջարդիչները չեն գործում, դրանց էլեկտրաշարժիչներն ու պոմպային ագրեգատները մաշված են ու ենթակա են փոխարինման :
- Ճաղավանդակներին մոտեցնող և հեռացնող առվակների վրա տեղադրված էլեկտրական շարժարեքներով վահանաձև փականները մասնակիորեն մաշված են :
- Ջարդված թափոնների համար նախատեսված պոմպերը մաշված են ու չեն գործում :
- Սարքավորումների էլեկտրամատակարարման համակարգը գտնվում է ոչ բարվոք վիճակում :
- Ընդունման խուցը և ճաղավանդակներին մոտեցնող առվակները լցված են ավազով:

ԿՄԿ աշխատանքի արդյունավետությունը և ֆունկցիոնալ նշանակության ցուցանիշը հիմնականում կախված է կենսաբանական մաքրման գործընթացից: Այն պահանջում է կեղտաջրում օրգանական միացությունները քայքայող մանրէների արդյունավետ կենսագործունեությունն ապահովող համապատասխան միջավայրի պահպանում՝ օդի անընդհատ մատակարարման պայմաններում:

Կայանի գործունեությունը պահանջում է էլեկտրաէներգիայի զգալի ծախսեր: Էլեկտրաէներգիայի ընդհատումները (օրվա ընթացքում ավելի քան 2 ժամ) բերում են կենսաբանական մաքրման տեխնոլոգիական գործընթացի խզման, որի վերագործարկումը պահանջում է 4-6 ամիս ժամանակ:

Հետևաբար, սկսած 1990-ական թվականներից, կախված հանապետության տնտեսական պայմաններից, Երևանի <<Աերացիա>> և հանրապետությունում գոյություն ունեցող կեղտաջրերի մաքրման մնացած բոլոր կայանները դադարեցին գործելուց, քանի որ չէին ապահովում պահանջվող աստիճանի մաքրման գործընթացները:

Այսօր, ինչպես արդեն նախկինում նշվել է, հանրապետությունում գործում է միայն Երևանի «Աերացիա» կեղտաջրերի մաքրման կայանը, որը ներկայումս իրականացնում է միայն մասնակի մեխանիկական մաքրում:

IV. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ջրահեռացման ոլորտի կարևորագույն խնդիրը՝ կեղտաջրերի մաքրման կայանների կառուցումը, լուծելու համար նախ և առաջ պետք է ստեղծել համապատասխան իրավական և ինստիտուցիոնալ բազա: Անհրաժեշտ է պետական աջակցությամբ, ինչպես նաև մասնավոր հատվածի մասնակցությամբ ներգրավել համապատասխան ֆինանսական միջոցներ՝ դոնոր կազմակերպությունների օգնություններ, ներդրումային ծրագրեր: Անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ ջրահեռացման համակարգերի և կեղտաջրերի մաքրման կայանների պահանջվող չափորոշիչները սահմանվել են դեռևս խորհրդային դարաշրջանում և թե տեխնիկապես, թե տնտեսապես չեն բավարարում ներկայիս պահանջներին:

Ջրահեռացման ոլորտի կարգավորման նպատակով ահրաժեշտ է մշակել և իրականացնել մի շարք համալիր ծրագրեր, որոնք կպահանջեն ֆինանսական մեծ ներդրումներ:

Ներկայիս սուղ ֆինանսական կարողությունների պարագայում առաջարկվում է ուսումնասիրել և առանձնացնել ջրահեռացման ցանցերը, որտեղ վթարներն առավել հաճախ են տեղի ունենում:

Թիրախային ոլորտ VII

Հոդված 6, 2 (գ), առաջին մաս

Ջրամատակարարման կառավարման ոլորտում ճանաչված լավագույն փորձի կիրառում

Թիրախային ոլորտում շեշտը դրվում է պատշաճ, բայց ոչ անպայման լավագույն փորձի (և ոչ անպայման միջազգայնորեն ճանաչված) կիրառման վրա, որը կարող է լինել տեղական պայմաններին և իրականացման նպատակներին հարմարեցված:

I. ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Ա. Ռազմավարություններ և իրավական / կարգավորիչ դաշտ

Հայաստանի Հանրապետության **ջրային օրենսգրքի** 121-րդ հոդվածի 5-րդ մասի 12-րդ կետի պահանջներին համապատասխան **ՀՀ կառավարության 2005 թ.-ի հունվարի 20-ի Հ64-Ն «Ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների մասին»** որոշում

<< Ջրի ազգային ծրագրի մասին> ՀՀ օրենք

Բ. Ինստիտուցիոնալ դաշտ

- ՀՀ բնապահպանության նախարարություն
- ՀՀ տարածքային կառավարման նախարարություն
- ՀՀ առողջապահության նախարարություն
- Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
- ՀՀ ֆինանսների նախարարություն

Համաձայն **ՀՀ կառավարությանն առնթեր ջրային տնտեսության պետական կոմիտեի** կանոնադրության, հաստատված 5-ը սեպտեմբերի 2002 թվականի Հ-1400 որոշմամբ, պետական սեփականություն հանդիսացող ջրային համակարգերի կառավարումն ու անվտանգ օգտագործման ապահովումը, ինչպես նաև իր իրավասության սահմաններում ջրի ազգային ծրագրի իրականացման ապահովումը հանդիսանում են կոմիտեի նպատակներն ու խնդիրները:

Հայաստանի Հանրապետության տարածքում կենտրոնացված կարգով խմելու ջրի մատակարարման ու ջրահեռացման ոլորտներում գործում է ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող 5 մասնագիտացված ընկերություն, որոնք ունեն միջազգային մեծ փորձ:

Ջրամատակարարման կառավարման ոլորտում
ճանաչված պատշաճ փորձի կիրառում

Հանրապետությունում ջրամատակարարման համակարգերի համապարփակ կառավարումը, պլանավորումը և դրանց կառավարման բարեփոխումները ներկայումս կախված են հրատապ լուծում պահանջող մի շարք հիմնախնդիրներից, որոնցից անհրաժեշտ է առանձնացնել.

- խմելու նպատակով օգտագործվող ջրային ռեսուրսների վերականգնումը, պահպանումը և արդյունավետ օգտագործումը,

- խմելու ջրի հոսակորուստների մակարդակի նվազեցումը,

- խմելու ջրի որակի բարձրացումը,

- ջրամատակարարման մատչելիության ապահովումը, դրա հուսալիության բարձրացումը և անխափան ջրամատակարարման իրականացումը,

- կենտրոնացված կարգով ջրամատակարարման ծառայություններ չստացող համայնքներում համալիր միջոցառումների իրականացումը,

- ջրամատակարարման տևողության և շուրջօրյա ջրամատակարարում ունեցող բնակավայրերի թվի ավելացումը,

- ջրամատակարարման ծառայությունների մատուցման ոլորտում կառավարման ձևի ընտրությունը,

- վճարների համակարգի բարելավումը:

Համաձայն «Վեոլիա» ընկերության ներկայացված առաջարկի՝ 2006-2015թթ.-ի ընթացքում ընկերությունը նախատեսում է՝

- կորուկ կրճատել ջրակորուստները՝ 84% -ից հասցնելով մինչև 44.7%՝ ամբողջովին վերացնելով ապօրինի միացումները,

- կրճատել ջրառի քանակն աղբյուրներից և հորատանցքերից՝ 347 մլն.մ³-ից մինչև 150 մլն.մ³,

- ավելացնել վարձավճարների հավաքագրումը՝ 79%-ից մինչև 92%,

- կրճատել էլեկտրաէներգիայի սպառումը՝ 125 մլն. կվտ. ժամից մինչև 25 մլն.կվտ.ժամ,

- շարունակական ջրամատակարարման ցուցանիշն ամեն տարի ավելացնել մոտ 2%-ով՝ 10-րդ տարում և 2015 թվականին 24 ժամյա սպասարկում ապահովել բնակչության 95%-ի համար:

2004թ.-ի ընթացքում «Հայջրմուկոյոյի» ՓԲԸ-ից վերակազմակերպման ճանապարհով առանձնացվել են «Շիրակ-ջրմուկոյոյի» և «Լոռի-ջրմուկոյոյի» ՓԲԸ-ները:

«Շիրակ-ջրմուկոյոյի» ՓԲԸ-ի բաժնետոմսերի 51%-ը պատկանում է Հայաստանի Հանրապետությանը, իսկ 49%-ը՝ սպասարկման տարածքի համապատասխան համայնքներին:

«Լոռի-ջրմուկոյոյի» ՓԲԸ-ի բաժնետոմսերի 51%-ը պատկանում է Հայաստանի Հանրապետությանը, իսկ 49%-ը՝ սպասարկման տարածքի համապատասխան համայնքներին:

«Նոր Ակունք» ՓԲԸ-ի բաժնետոմսերի 51%-ը պատկանում է Հայաստանի Հանրապետությանը, իսկ 49%-ը՝ սպասարկման տարածքի համապատասխան համայնքներին:

Ջրային համակարգերի կառավարման հիմնախնդիրներից է խմելու ջրի ներկայիս որակը, քանի որ հանրապետության բնակավայրերի որոշ մասում որակական հատկանիշները դեռևս չեն բավարարում խմելու ջրի որակին ներկայացվող ստանդարտների պահանջները:

Համակարգերի կառավարման լուրջ հիմնահարց է հանրապետության 980 կենտրոնացված կարգով ջրամատակարարման ծառայություններից չօգտվող շուրջ 560 գյուղական բնակավայրի ջրամատակարարման հետ կապված խնդիրների լուծումը: Լոկալ աղբյուրներից սնվող այդ գյուղական համայնքների ջրային համակարգերը շահագործվում են համապատասխան համայնքների կամ դրանց բնակիչների միջոցով: Այդ բնակավայրերը, գտնվելով ջրամատակարար ընկերությունների սպասարկման տարածքից դուրս, փաստորեն դուրս են մնացել նաև հանրապետությունում վերջին տարիներին իրականացվող ներդրումային, տեխնիկական աջակցության և այլ ծրագրերից:

Ի տարբերություն ջրամատակարար ընկերությունների, տվյալ համայնքներում դեռևս հստակեցված չեն ջրամատակարարման ծառայությունների իրականացման հետ կապված սակագնային, նվազագույն ջրամատակարարման ռեժիմին վերաբերող և այլ խնդիրներ: Այդ համայնքներում հիմնականում ձևավորված չեն ինստիտուցիոնալ կառույցները, որոնք պետք է պատասխանատվություն կրեն ջրային համակարգերի կառավարման և շահագործման համար:

Մակերևութային ջրաղբյուրներից սնվող ավելի քան 200 փոքր բնակավայրի, ինչպես նաև առանձին օբյեկտների (հանգստյան տներ, սպորտային բազաներ և այլն) ջրամատակարարման համակարգերը համարվում են համայնքային, գերատեսչական կամ մասնավոր սեփականություն և չեն շահագործվում որևէ մասնագիտական կազմակերպության կողմից: Դրանց մեծ մասը չունի ջրի մաքրման կայաններ կամ անհրաժեշտ սարքավորումներ, և ջուրը, վերցվելով գետերի վերին հոսանքներից, օգտագործվում է կենցաղային կարիքների համար՝ առանց մաքրման ու ախտահանման:

Ջրամատակարարման համակարգերի կառավարման արդյունավետությունը զգալիորեն պայմանավորված է ճիշտ սակագնային քաղաքականության իրականացմամբ: Հայտնի է, որ ջրամատակարարման ծառայության գործող սակագները թույլ չեն տալիս փոխհատուցել դրանց իրականացման կապիտալ ծախսերը, իսկ նշված ծախսերի հատուցման համար պետական բյուջեից անհրաժեշտ սուբսիդիաների հատկացման հնարավորությունները բավական սահմանափակ են:

Ջրային համակարգերի կառավարման ոլորտում արդյունավետ սակագնային քաղաքականության իրականացման հիմնախնդիրներից մեկն էլ կապված է այն բանի հետ, որ ներկայումս ջրամատակարարման ծառայությունների գործող սակագները սահմանված են որպես միասնական գին 1մ³ օգտագործված ջրի դիմաց և իրենց մեջ փոփոխական դրույքներ չեն պարունակում: Օգտագործված ջրի համար միասնական և առանց տարբերակման սակագնի սահմանումը հանգեցրել է այնպիսի սակագների կիրառմանը, որոնցում հաշվի չեն առնվում ջրային ռեսուրսների օգտագործումը տարբեր տնտեսական, սոցիալական և տարածաշրջանային պայմաններում գտնվող սուբյեկտների կողմից, նրանց

գնողունակությունը, պահանջարկը, տարբեր տարածաշրջանների տնտեսական զարգացման միտումները:

Ջրային համակարգերի կառավարման մյուս հիմնախնդիրը կապված է ջրամատակարարման հուսալիության բարձրացման և անխափան ջրամատակարարման իրականացման, ջրամատակարարման տևողության ավելացման և շուրջօրյա ջրամատակարարում ունեցող բնակավայրերի թվի ավելացման հետ:

Ջրային համակարգերի կառավարման հիմնախնդիրներից շատ կարևոր է դրանց կառավարման արդյունավետ կառուցվածքի ընտրությունը:

Ջրային համակարգերի կառավարման վերը նշված հիմնախնդիրների լուծումն անհնար է պատկերացնել առանց այնպիսի հիմնախնդրի լուծման, ինչպիսին այդ համակարգերի կառավարման լիարժեք դաշտի ստեղծումն է:

Հայաստանի Հանրապետության ջրամատակարարման համակարգերի շահագործման փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ ջրի մաքրման բարդ տեխնոլոգիաների կիրառումը հնարավոր է և տնտեսապես ձեռնատու միայն խոշոր բնակավայրերի ջրամատակարարման համակարգերի մաքրման կայաններում: Փոքր, հատկապես գյուղական բնակավայրերի և առանձին օբյեկտների ջրամատակարարման համակարգերում նշված պայմանների ապահովումը խիստ դժվարանում է, իսկ երբեմն դառնում անհնար և տնտեսապես ոչ ձեռնատու:

Վերը նշված համակարգերի հուսալի և արդյունավետ ջրամատակարարումը նպատակահարմար է իրականացնել առանց ռեազենտների կիրառման՝ ջրի մաքրման համար օգտագործելով խճի բազմաշերտ ֆիլտր:

Ներկայումս չեն գործում հանրապետության մաքրման կայանների ռեազենտ տնտեսությունները, ֆիլտրերի շերտերը մաշված են և ժամանակին չեն փոխարինվում, իսկ լվացման հաճախականությունն էլ անբավարար է, պարզաբաններն ու խառնարանները քայքայված են շահագործման դժվար պայմանների արդյունքում, գարնանային վարարումների և ձմռան սառցակալումների ընթացքում տեղի են ունենում ջրամատակարարման ընդհատումներ, ախտահանման քլորատորային սարքերը ոչ միշտ են գործում, ձմռան ամիսներին մաքրման կայանի աշխատանքի դադարեցման պատճառով չի կատարվում նաև քլորացում և ջուրը հաճախ մատակարարվում է առանց ախտահանման:

Մաքրման կայաններում ռեազենտների և դրանց լուծույթների պատրաստման ու դոզավորման սարքերի, ինչպես նաև անհրաժեշտ լաբորատորիաների բացակայության պատճառով պատշաճ կարգով չի իրականացվում ջրի կոագուլավորում:

Խմելու ջրի որակի և անվտանգության ապահովման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված են սանիտարական պահպանման գոտիներ՝ հաշվի առնելով խմելու նպատակով օգտագործվող ջրային ռեսուրսների տեսակը, հիդրոլոգիական, հիդրոերկրաբանական և հիդրոքիմիական պայմանները:

Հանրապետության բոլոր խմելու ջրի մաքրման կայանները ժամանակին ունեցել են սանիտարական գոտիներ՝ ինչպես ջրընդունիչ կառուցվածքների և ջրաղբյուրների, այնպես էլ՝ մաքրման կայանի շենքի համար:

Սակայն դրանց մեծ մասը ներկայումս կիսաքանդ կամ լրիվ ավերված վիճակում է, ճաղավանդակները և սանիտարական գոտիների ցանկապատերը քայքայված են կամ ավերված, և մարդիկ ազատ ելք ու մուտք ունեն, իսկ

անասուններն արածում են հատկապես ջրընդունիչ կառուցվածքների շրջակայքում:

Հիմնականում բացակայում է պահակային ոստիկանական ծառայությունը, արհեստական լուսավորվածությունը, տարածքները պլանավորված չեն մթնոլորտային տեղումներից առաջացած մակերևութային ջրերի լիարժեք հեռացման համար, որի արդյունքում առաջանում են ջրածածկ և ճահճոտ տարածքներ:

III. ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԸՆԹԱՑԻԿ ԵՎ ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

1. Հանրապետության համար ներկայումս լուրջ հիմնախնդիր է հանդիսանում կենտրոնացված կարգով ջրամատակարարման ծառայություններից չօգտվող շուրջ 560 գյուղական բնակավայրի ջրամատակարարման և ջրահեռացման հետ կապված հիմնախնդիրների լուծումը :

2. Բնապահպանության նախարարության ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կազմում 2003 թվականից ստեղծվել են ջրավազանային կառավարման մարմիններ: ՀՀ կառավարության 2004թ. ապրիլի 14-ի թիվ 649-Ն որոշմամբ հաստատվել են ՋՌԿԳ կանոնադրությունը և կառուցվածքը: Մակայն մինչև այժմ դրանց չի տրվել գետավազանային մակարդակով ջրերի համալիր կառավարման պլաններ մշակելու, ջրառի թույլտվություններ տալու, ջրային ռեսուրսների ջրառի ռեժիմներ մշակելու իրավասություն և այլ գործառնություններ:

IV. ՓՈՐՉԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

1. Անհրաժեշտ է ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններից չօգտվող համայնքները հնարավորինս ընդգրկել ջրամատակարար կազմակերպությունների սպասարկման ոլորտում կամ գործուն մեխանիզմներ մշակել, որպեսզի ստեղծվեն համապատասխան կազմակերպություններ կամ օրենքով սահմանված կարգով համայնքի ղեկավարությունն ապահովի ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունները:

2. Անհրաժեշտ է արագացնել հանրապետության ջրավազանային կառավարման մարմինների կանոնադրությամբ հաստատված գործառնությունների հանձնումը ջրավազանային կառավարման գործակալությունից ջրավազանային կառավարման մարմիններին:

Թիրախային ոլորտ VIII

Հոդված 6, 2 (գ), երկրորդ մաս

Ջրահեռացման կառավարման ոլորտում ճանաչված լավագույն փորձի կիրառում

Արձանագրության 6-րդ հոդվածի 2-րդ կետի <<գ>> ենթակետով պահանջվում է սահմանել թիրախային ցուցանիշներ և նպատակային ժամկետներ ջրահեռացման կառավարման ոլորտում ճանաչված լավագույն փորձի կիրառման համար:

I.ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Ա. Օրենսդրական դաշտ

ՀՀ ջրային օրենսգիրք

ՀՀ կառավարության 2004 թ.-ի հունվարի 22-ի <<Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման կանոնների, ջրամատակարարման և ջրահեռացման պայմանագրերի օրինակելի ձևերը, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերին միացման տեխնիկական պայմանների սահմանման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թ.-ի մարտի 13-ի թիվ 149 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 130-Ն որոշում

Ջրահեռացման համակարգն օգտագործվում է կոմունալ, կենցաղային, արտադրական և այլ կեղտաջրերի ընդունման, հեռացման և մաքրման համար: Արտադրական կեղտաջրերի ընդունումը բնակավայրերի ջրահեռացման համակարգ կատարվում է միայն պայմանագրով սահմանված աղտոտվածության չափաքանակների պահպանման դեպքում:

ՀՀ կառավարության 2003 թվականի օգոստոսի 28-ի <<Ջրահեռացման համակարգերի օգտագործման և հեռացվող ջրերի մաքրման կանոնները սահմանելու մասին>> թիվ 1228-Ն որոշում.

ա) ջրահեռացման համակարգերի կառավարման, օգտագործման (շահագործման) և հեռացվող ջրերի (կեղտաջրերի) մաքրման պահանջվող մակարդակի ապահովումը,

բ) ջրահեռացման համակարգերի կառուցվածքների հուսալիության և երկարակեցության, ինչպես նաև արդյունավետ և անխափան աշխատանքի ապահովումը,

զ) ջրահեռացման ցանցերի խցանումների և վթարների ժամանակին կանխարգելումն ու վերացումը,

դ) մաքրման կառուցվածքների շահագործման ճիշտ կազմակերպումը և դրանց աշխատանքի արդյունավետության բարձրացման համար պայմանների ստեղծումը,

ե) մաքրման կառուցվածքների շահագործման լավագույն գործելակարգերն ապահովելու նպատակով դրանց աշխատանքի նկատմամբ լաբորատոր-արտադրական և տեխնոլոգիական հսկողության կազմակերպումը:

Բ. Ինստիտուցիոնալ դաշտ

Ջրահեռացման ոլորտի խնդիրների իրականացման համար պատասխանատու մարմիններն են՝

- ՀՀ բնապահպանության նախարարությունը,
- ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեն,
- ՀՀ առողջապահության նախարարությունը,
- Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը
- ՀՀ ֆինանսների նախարարությունը,
- Կենտրոնացված կարգով խմելու ջրի մատակարարման ու ջրահեռացման ոլորտներում գործող ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող 5 մասնագիտացված ընկերությունները:

II. ՆԵՐԿԱՅԻՍ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

«Երևան Ջուր» ՓԲԸ. 2006թ.-ին 10 տարի ժամկետով (գործում է վարձակալական պայմանագիր) Երևան քաղաքի և շրջակա մի շարք գյուղերի ջրային համակարգերի կառավարումը տրված է վարձակալության ֆրանսիական «Վեոլիա» կազմակերպությանը:

Ընդանուր առմամբ, «Երևան Ջուր» ՓԲԸ-ն իր սպասարկման տարածքում ունի շուրջ 950կմ երկարությամբ ջրահեռացման ցանց և 220կմ երկարությամբ գլխավոր կոլեկտորներ:

2012թ.-ի ընթացքում ընկերության կողմից վերացվել է գրանցված թվով ջրահեռացման ցանցերի 15899 վթար, Երևան քաղաքի 17 փողոցում և Նուբարաշեն թաղամասում կառուցվել և նորոգվել է մոտ 400 գ/մ ջրահեռացման ցանց:

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն 2004թ.-ին (գործում է կառավարման պայմանագիր մինչև 31.12.2013թ.) մրցույթով փոխանցված է ֆրանսիական «Մաուր» կազմակերպությանը:

Ընդանուր առմամբ, «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն իր սպասարկման տարածքում ունի շուրջ 1782.0 կմ երկարությամբ ջրահեռացման ցանց և 319.0 կմ երկարությամբ գլխավոր կոլեկտորներ:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Սևանա լճի ավազանի բնապահպանական ծրագրի շրջանակներում Գավառ, Մարտունի և Վարդենիս քաղաքների կեղտաջրերի մաքրման կայաններում տեղադրվել են Հյուբեր-կոմպակտ տիպի սարքավորումներ:

IV. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ներկա դարաշրջանում ջրահեռացման ոլորտի ռազմավարության զարգացման ուղիներում անհրաժեշտ է մշակել և կառուցել կեղտաջրերի մաքրման կայաններ՝ կենսաբանական մաքրման հնարավորություններով:

Բացի այդ, կեղտաջրերի հավաքումը և մաքրումը ոչ միայն հանրապետական, այլև տարածաշրջանային պահանջված խնդիրներ են, այդ իսկ պատճառով դրանք պետք է արժանանան թե տարածաշրջանի մասնակիցների, թե միջազգային բնապահպանական, ֆինանսական և այլ հետաքրքրված կազմակերպությունների բավարար ուշադրությանը:

Թիրախային ոլորտ IX

Հոդված 6, 2 (է), ի

Չմաքրված կեղտաջրերի արտահոսքի դեպքեր

<<Ջուր և առողջություն>> արձանագրության հոդված 6-ի 2-րդ կետի է (i) ենթակետի համաձայն, պահանջվում է սահմանել չմաքրված կեղտաջրերի արտահոսքի դեպքերի նկատմամբ թիրախային ցուցանիշներ և այդ ցուցանիշներին հասնելու ժամկետներ:

I. ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Ա. Օրենսդրական դաշտ

Ոլորտը կարգավորող հիմնական օրենքներից են՝

- 2002թ. ընդունված ՀՀ ջրային օրենսգիրքը,
- 2006թ. ընդունված ՀՀ <<Ջրի ազգային ծրագրի մասին>> օրենքը,
- ՀՀ կառավարության 28.08.2003թ. թիվ 1228-Ն <<Ջրահեռացման համակարգերի օգտագործման և հեռացվող ջրերի մաքրման կանոնները սահմանելու մասին>> որոշումը,
- ՀՀ կառավարության 2004թ.-ի հունվարի 22-ի <<Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման կանոնների, ջրամատակարարման և ջրահեռացման պայմանագրերի օրինակելի ձևերը, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերին միացման տեխնիկական պայմանների սահմանման կարգը հաստատելու մասին>> թիվ 130-Ն որոշումը,
- ՀՀ կառավարության 2011թ.-ի հունվարի 27-ի թիվ 75-Ն <<Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին>> որոշումը:

Բ. Ինստիտուցիոնալ շրջանակները

Օրենսդրական բարեփոխումների ընդունմամբ ներդրվեց նոր ինստիտուցիոնալ համակարգ, որի համաձայն ոլորտի կառավարումն իրականացնում են հետևյալ մարմինները՝

- ՀՀ բնապահպանության նախարարության ջրային ռեսուրսների կառավարման գործակալությունը,
- ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեն,
- Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը,

- ՀՀ առողջապահության նախարարությունը,
- ՀՀ ֆինանսների նախարարությունը,
- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայությունը:

Բացի այդ, հանրապետության բնակչության խմելու ջրի ջրամատակարարման և ջրահեռացման ապահովման նպատակով առկա ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը հանձնվեցին կոնցեսիոն կառավարման հետևյալ կազմակերպություններին՝

- «Երևան Ջուր» ՓԲԸ
- «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ
- «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ
- «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ
- «Նոր Ակունք» ՓԲԸ

Բացի այդ, հանրապետությունում առկա 22 մաքրման կայանից 20-ը հանձնված են «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ շահագործման, Երևանի «Ալեքացիա» կայանը՝ «Երևան Ջուր» ՓԲԸ, իսկ Քաջարանի մաքրման կայանը շահագործվում է տեղական ինքնակառավարման մարմնի կողմից:

Առանց մաքրման կեղտաջրերի արտահոսքի կանխարգելման և կրճատման միտում է նկատվում նաև մասնավոր խոշոր արդյունաբերական ձեռնարկություններում: Օրինակ՝ դեռ 2005թ.-ին ԱՄՆ ՄԶԳ օգնությամբ Երևանի կաշվի վերամշակման գործարանում¹² կառուցվեց կեղտաջրերի մաքրման կայան, որն իրականացնում է կեղտաջրերի ոչ միայն մեխանիկական, այլ նաև կենսաբանական և քիմիական մաքրում: Մաքրված կեղտաջրերը, չնայած ջրի որակական բավականին լավ ցուցանիշների առկայությանը, այնուամենայնիվ, մղվում են Երևանի «Ալեքացիա» մաքրման կայան՝ լրացուցիչ կենսաբանական և մեխանիկական մաքրում անցնելու նպատակով: Կառուցված մաքրման կայանում, բացի Երևանի կաշվի վերամշակման գործարանի արտադրա-կենցաղային կեղտաջրերից, մաքրվում են նաև հարևանությամբ գտնվող «Արմկարպետ» ձեռնարկության կեղտաջրերը: Հարկ է նշել նաև, որ մաքրման կայանի նստվածքները, համապատասխան մշակումից հետո, օգտագործվում են գյուղատնտեսական հողերի պարարտացման նպատակով:

Գ. Ֆինանսական դաշտ

Կոմունալ և կենցաղային կեղտաջրերի և արտադրական հոսքաջրերի արտահոսքի կանխարգելմանն ու կրճատմանն ուղղված Հայաստանում իրականացվող և նախատեսվող բոլոր միջոցառումների մեծ մասն

¹² The Kashi Tannery Effluent Treatment System is a public-private partnership activity supported by USAID through its projects in “Sustainable Water Resources Management for Enhanced Environmental Quality,” and “Agribusiness Small Medium Enterprise Market Development (ASME).”

իրականացվում է միջազգային դոնոր կազմակերպությունների օժանդակությամբ, դրամաշնորհային և վարկային միջոցներով, ինչպես նաև պետբյուջեի հաշվին:

II. ՉՄԱՔՐՎԱԾ ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ԱՐՏԱՀՈՍՔԻ ԴԵՊՔԵՐԻ ՆԵՐԿԱՅԻՄ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Երկրի քաղաքային և արտադրական կեղտաջրերի գրեթե բոլոր արտանետումները բձանագրության իրավասությունների սահմաններում գտնվող ջրեր իրականացվում են մաքրման կոլեկտիվ կայաններից: Քաղաքային տարածքներում կեղտաջրերի արտահոսքն իրականացվում է գոյություն ունեցող հեռացման համակարգերի օգնությամբ:

Ջրահեռացման համակարգեր

Հայաստանի բոլոր քաղաքները և գյուղական համայնքների մոտ 20%-ը կոյուղացված են: Կոյուղացված բնակավայրերի բոլոր կեղտաջրերը թափվում են բաց ջրավազաններ, բացառությամբ մի քանի քաղաքների, ուր արտահոսքն իրականացվում է չոր հողերի կամ հեղեղատների մեջ (суходол): Կոլեկտորների ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 3200կմ, իսկ կոյուղացանցերինը՝ մոտ 860կմ:

Քաղաքային կոյուղացանցերը և կոլեկտորները հիմնականում ինքնահոս են, բացառությամբ մի քանի բնակավայրերի, օրինակ համար, Սևան (քաղաքային 3 պոմպակայան) և Մասիս (քաղաքային պոմպակայան) քաղաքների, որոնց մղող սարքավորումները պահանջում են վերանորոգում կամ փոխարինում նորերով:

Ռելիեֆի հնարավորությունների սահմաններում մի քանի բնակավայրերի կոյուղաջրերի հավաքման, տեղափոխման և հետագա մաքրման նպատակով Հայաստանում կառուցված են միջջրջանային ինքնահոս կոլեկտորային ցանցեր:

Այսպես, Սևան-Հրազդան կոլեկտորը պետք է հավաքեր Սևանի, Ծաղկաձորի, Հրազդանի, մերձակա գյուղերի և Հանքավանի հանգստյան գոտու կեղտաջրերը, որոնք պետք է մաքրվեին Քախսի գյուղի ԿՄԿ-ում, Չարենցավան-Երևան կոլեկտորը հավաքում է Աբովյան, Բյուրեղավան, Նոր-Հաճն, Եղվարդ և շրջակա գյուղերի կեղտաջրերը՝ Երևանի ԿՄԿ-ում մաքրելու նպատակով: Նախատեսվում էր նաև Սպիտակ-Վանաձոր կոլեկտորը՝ կեղտաջրերը Վանաձորի ՄԿ-ում մաքրելու համար: Որոշ քաղաքներում կամ քաղաքների այն վայրերում, ուր բացակայում են կոյուղացանցերը և կոլեկտորները, կեղտաջրերի մի մասն առանց մաքրման թափվում է բաց ջրավազան: Վթարային վիճակում է գտնվում շուրջ 40 տարի առաջ կառուցված ցանցերի և կոլեկտորների ավելի քան 60%-ը: Ցանցի մեկ կիլոմետր երկարության վրա տարեկան բաժին է ընկնում 2,5 վթար:

Ջրամատակարարման անկայուն ռեժիմը նույնպես պատճառ է դառնում կոյուղացանցերի և կոլեկտորների խցանմանն ու վնասմանը:

Կեղտաջրերի մաքրում

Հանրապետությունում առաջացած կեղտաջրերի ընդհանուր ծավալի միայն 45-50%-ն է ենթարկվում նորմալ (մասնակի) մեխանիկական մաքրման, մնացածը հոսում է բաց ջրավազաններ՝ առանց որևէ մաքրման:

Գրեթե բոլոր ԿՄԿ-ներում նախատեսված են մեխանիկական և կենսաբանական մաքրման կառույցներ՝ մաքրված հոսքերի համապատասխան վարակազերծումով, ինչպես նաև նստվածքների մշակման կառույցներ: Սակայն դրանք գտնվում են անմխիթար վիճակում:

Մաքրման կայանների մեխանիկական մաքրման կառույցները ներառում են՝

- ճաղավանդակներով շինություններ՝ մեխանիկական փոցխերով,
- հորիզոնական ավազորսիչներ՝ ջրի շրջապտույտով,
- առաջնային ռադիալ պարզարաններ՝ համապատասխան մեխանիզմներով և սարքավորումներով,
- կենսաբանական մաքրման կառույցները ներառում են,
- աերոտենկեր (аэротенк),
- երկրորդային ռադիալ պարզարաններ,
- օդամղիչ և պոմպային ագրեգատներով արտադրական շինություններ,
- քլորատորային ռեզերվուարներ,
- նստվածքների համալիր մշակման կառույցներ,
- նստվածքների մեխանիկական ջրազրկման արտադրամաս,
- տիղմային մակերեսներ:

Հանրապետությունում առկա 22 մաքրման կայանների գերակշռող մասը կառուցվել են բնակավայրերում դեռ ԽՍՀՄ իշխանության օրոք՝ շուրջ 40 տարի առաջ: Սակայն վերջին տարիներին տեխնիկական սպասարկման իրականացման համար ծախսերի և համապատասխան ներդրումների բացակայության պատճառով դրանց վիճակը վատթարացել է, և ներկայումս Հայաստանի կեղտաջրերի մաքրման կայաններից ոչ մեկը չի գործում: Բացառություն է կազմում 1972 թ.-ին կառուցված Երևանի «Աերացիա» կեղտաջրերի մաքրման կայանը, որտեղ իրականացվում է կեղտաջրերի մեխանիկական և կենսաբանական մասնակի մաքրում: Հանրապետության գյուղական համայնքներում վիճակը շատ ավելի բարդ է: Գյուղական համայնքները մեծ մասամբ միացված չեն մաքրման համակարգերին և չունեն կոյուղու ցանց: Կեղտաջրերը ինֆիլտրվում են հողի մեջ և ներթափանցում գրունտային ջրեր՝ աղտոտելով դրանք:

Որոշ մաքրման կայաններ, կառուցվելուց հետո, տարբեր պատճառներով չեն աշխատել, օրինակ, Ապարանի մաքրման կայանը, որտեղ

1988թ. ավերիչ երկրաշարժից հետո կարիք առաջացավ ամրացնելու հիմնական շինությունները և կառույցները: Չի ավարտվել Սիսիանի, Վանաձորի, Ստեփանավանի ԿՄԿ-ների կառուցումը:

Գործող Երևանի “Աէրացիա” ԿՄԿ-ն բնութագրվում է կառույցների, խողովակաշարերի, մեխանիզմների, փականների և սարքավորումների բարձր մաշվածությամբ և գրեթե անպիտանելիությամբ: Բաց երկնքի տակ գտնվող սարքավորումները և կառույցներն ամբողջովին մաշված են, երկաթբետոնյա կառույցները ապահերմետիկացված են, ջրանցքները մասամբ քանդված են, էլեկտրասարքավորումները և ավտոմատիկան չեն գործում:

ԽՍՀՄ փլուզումից հետո Գեղարքունիքի մարզի Վարդենիս, Մարտունի, Գավառ և Սևան քաղաքների մաքրման կայանները համապատասխան տեխնիկական սպասարկման և վերահսկման բացակայության պատճառով քանդվել և խարխլվել էին, ինչի հետևանքով քաղաքային կեղտաջրերը և անձրևաջրերի չմաքրված արտահոսքերն առանց որևէ մաքրման թափվում էին Սևանա լիճ:

Ընդհանուր առմամբ, վերջին տարիներին նկատվում է մատակարարվող և հեռացվող ջրերի քանակի հաստատուն աճ, և կորուստների թվի նվազում (աղյուսակ 24):

Աղյուսակ 24: Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգ մուտք գործող և հեռացվող ջրերի քանակը Հայաստանում

| | | Համակարգ մուտք գործած ջուր (հազ.մ ³) | Ընդհանուր կորուստ համակարգում (հազ.մ ³) | | Ջրամատակարարում (հազ.մ ³) | Ջրահեռացում (հազ.մ ³) |
|------|-----------------------------|---|--|-------|--|--------------------------------------|
| 2012 | « Երևան Ջուր » ՓԲԸ | 307321.8 | 245297,3 | 79,8% | 62024,5 | 65864,7 |
| | « Հայջրմուղկոյուղի » ՓԲԸ | 160266.7 | 128682,9 | 80,3% | 31583,9 | 17043,8 |
| | « Նոր Ակունք » ՓԲԸ | 6030.1 | 3961,3 | 65,7% | 2068,8 | 1588,0 |
| | « Շիրակ-ջրմուղկոյուղի » ՓԲԸ | 43118.9 | 38408,1 | 89,1% | 4710,8 | 3768,4 |
| | « Լոռի-ջրմուղկոյուղի » ՓԲԸ | 16612.1 | 14067,3 | 84,7% | 2544,8 | 2207,3 |
| | Ընդամենը | 533349,6 | 430416,9 | 80,7% | 102932,7 | 90472,2 |
| 201 | « Երևան Ջուր » ՓԲԸ | 319519,7 | 259252,8 | 81,1% | 60266,9 | 63595,9 |
| | « Հայջրմուղկոյուղի » ՓԲԸ | 159975,0 | 133865,6 | 83,7% | 26109,4 | 15390,4 |

| | | | | | | | |
|-----------------------------|-----------------------------|--------------------------|----------|----------|---------|---------|---------|
| | « Նոր Ակունք » ՓԲԸ | 5492,8 | 3534,2 | 64,3% | 1958,7 | 1530,2 | |
| | « Շիրակ-ջրմուղկոյուղի » ՓԲԸ | 27448,4 | 22777,6 | 83,0% | 4670,8 | 3687,7 | |
| | « Լոռի-ջրմուղկոյուղի » ՓԲԸ | 6070,5 | 3678,7 | 60,6% | 2391,9 | 2038,0 | |
| | Ընդամենը | 518506,4 | 423108,9 | 81,6% | 95397,5 | 86242,0 | |
| | 2010 | « Երևան Ջուր » ՓԲԸ | 346211,4 | 289219,7 | 83,5% | 56991,7 | 62605,3 |
| | | « Հայջրմուղկոյուղի » ՓԲԸ | 172792,3 | 147037,2 | 85,1% | 25755,1 | 15023,4 |
| « Նոր Ակունք » ՓԲԸ | | 5862,1 | 3905,6 | 66,6% | 1956,5 | 1522,7 | |
| « Շիրակ-ջրմուղկոյուղի » ՓԲԸ | | 24730,8 | 19993,6 | 80,8% | 4737,2 | 3711,4 | |
| « Լոռի-ջրմուղկոյուղի » ՓԲԸ | | 8045,1 | 5484,9 | 68,2% | 2560,2 | 2134,4 | |
| Ընդամենը | | 557641,6 | 465641,0 | 83,5% | 92000,6 | 84997,1 | |

Աղբյուր՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

Հարկ է նշել, որ 2012թ. Հայաստանի ամենախոշոր մաքրման կայանից՝ «Ալեքսիա» ԿՄԿ-ից, հեռացվող կեղտաջրերի քանակը կազմել է 65 մլն խ.մետր: Հաշվի առնելով նոր կառուցված Վարդենիսի, Մարտունու և Գավառի մաքրման կայանների հզորությունները (Գավառի ԿՄԿ՝ 6.3 մլն խ.մետր/տարի, Մարտունի ԿՄԿ՝ 3.15 մլն. խ.մ/տարի և Վարդենիսի ԿՄԿ՝ 3.15 մլն.խ.մ/տարի) կարելի է պնդել, որ Հայաստանում գործող մաքրման կայանների օգնությամբ տարեկան հնարավոր է իրականացնել միայն մոտ 78 մլն.խ.մ. կեղտաջրերի մեխանիկական մաքրում:

III. ՉՄԱՔՐՎԱԾ ԿԵՂՏԱՋՐԵՐԻ ԱՐՏԱՀՈՍՔԵՐԻ ԴԵՊՔԵՐԻ ԿՐՃԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԸՆԹԱՑԻՎ ԵՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերջին տարիներին այս ոլորտում նկատվում է դրական փոփոխություն: Այսպես, Ֆրանսիայի կառավարության կողմից նախատեսված է տրամադրել միջոցներ «Ալեքսիա» մաքրման կայանի վերականգնման և մի շարք ջրահեռացման ցանցերի վերակառուցման նպատակով:

Վերակառուցման և Ջարգացման Եվրոպական բանկի կողմից ֆինանսավորվող Սևանա լճի ավազանի բնապահպանական ծրագրի շրջանակում կեղտաջրերի մաքրման կայաններ են կառուցվել Գեղարքունիքի մարզի Վարդենիս, Մարտունի և Գավառ քաղաքներում, ինչպես նաև իրականացվում է ՀՀ Վայոց Ձորի մարզի Ջերմուկ քաղաքի մաքրման կայանի կառուցումը: Ծրագրի շրջանակում Վարդենիս, Մարտունի, Գավառ քաղաքների մաքրման կայանների կառուցման աշխատանքները սկսվել են 2010թ. և ավարտվել 2013թ.: Դրանք ներկա պահին իրականացնում են

կեղտաջրերի միայն մեխանիկական մաքրում, չնայած հնարավորություն ունեն իրականացնելու նաև կենսաբանական մաքրում:

Բացի այդ, ԱՄՆ ՄՁԳ, ՄՁԾ, Կոկա-Կոլա կորպորացիայի և ՀՀ կառավարության ֆինանսավորմամբ մեկնարկել են Դիլիջան քաղաքի ջրամատակարարման ու ջրահեռացման համակարգերի բարելավման ծրագրի շրջանակում Ադատն գետի վրա քաղաքային կեղտաջրերի մաքրման կայանի և կոյուղու կոլեկտորի կառուցման աշխատանքները: Ծրագրով նախատեսվում է նաև վերանորոգել քաղաքային կոյուղու ներքին ցանցը: Այդ աշխատանքների համար տրամադրված գումարը կազմում է 6 մլն 80 հազար եվրո:

Հարկ է նշել, որ հանրապետության մնացած քաղաքներում և գյուղական համայնքներում մաքրման կայանների կառուցում, նորոգում կամ վերակառուցում չի իրականացվում և մոտակա տարիների համար չի նախատեսվում:

IV. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Չնայած այն հանգամանքին, որ Հայաստանում վերջին տարիների ընթացքում բավականին լուրջ ուշադրություն է դարձվում կեղտաջրերի արտահոսքերի դեպքերի կանխարգելմանն ու կրճատմանը և իրականացվել են ոլորտի օրենսդրական և ինստիտուցիոնալ բազմաթիվ բարեփոխումներ, գնահատել սույն ոլորտի առաջընթացը դրական դեռ վաղ է:

Ինչպես արդեն նշվել է, ՀՀ տարածքում առկա, ԽՍՀՄ տարիներից ժառանգություն մնացած կեղտաջրերի գրեթե բոլոր 22 մաքրման կայանները չեն գործում: Նոր կառուցված մաքրման կայանները հիմնականում իրականացնում են միայն մեխանիկական մաքրում:

Քանի որ կեղտաջրերի մաքրման գործընթացը, մասնավորապես, մաքրման կայանների կառուցումը և շահագործումը, բավականին մեծ ֆինանսական միջոցներ պահանջող միջոցառում է, ուստի առկա իրավիճակը բարելավելու համար, նախ և առաջ պետք է հայթհայթել համապատասխան ֆինանսական միջոցներ՝ դոնոր կազմակերպությունների օգնություններ, ներդրումային ծրագրեր, վարկային միջոցներ, ինչպես նաև ներգրավել այս ոլորտում փորձառու միջազգային համապատասխան կազմակերպություններ, որոնք պատրաստ կլինեն վերականգնել առկա կայանները, կառուցել և շահագործել նոր մաքրման կայաններ:

Բացի այդ, անհրաժեշտ է՝

- ✓ ավարտին հասցնել նախատեսվող և կառուցվող կեղտաջրերի մաքրման կայանները,

- ✓ հանրապետության խոշոր քաղաքների մաքրման կայանների վերականգնման կամ նորերի կառուցման համար, մշակել համապատասխան նախագծեր,
- ✓ կյանքի կոչելով համապատասխան օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումները՝ պարտադրել խոշոր արդյունաբերական ձեռնարկություններին՝ իրականացնել արտահոսող կեղտաջրերի պատշաճ մաքրում կեղտաջրերի մաքրման կայանների միջոցով:

Արձանագրության իրավասության սահմաններում գտնվող ջրերի մեջ չմաքրված կեղտաջրերի արտահոսքի դեպքերի կրճատման համար պակաս կարևորություն չեն ներկայացնում կոյուղացանցերը և կոյուղու կոլեկտորները: Այդ համակարգերի անմխիթար վիճակի բարելավման նպատակով նախ և առաջ անհրաժեշտ է կապիտալ վերանորոգում կատարել առավել մաշված հատվածներում (մեկ կիլոմետրին 3-ից ավելի վթար ունեցող հատվածներ), նոր կոլեկտորների և կոյուղացանցերի փուլային կառուցում և հների վերակառուցում, նոր սարքավորումների և մեքենաների ձեռքբերում՝ կոյուղացանցերի և կոլեկտորների պատշաճ շահագործման համար:

Թիրախային ոլորտ X

Հոդված 6, 2 (է) (ii)

Կեղտաջրերի կոլեկտիվ կայաններից առանց մաքրման հեղեղաջրերի արտահոսքի դեպքեր՝ կոյուղու համակարգից դեպի արձանագրության իրավասության սահմաններում գտնվող ջրեր

<<Ջուր և առողջություն>> արձանագրության հոդված 6-ի 2-րդ կետի <<է(ii)>> ենթակետի համաձայն, պահանջվում է սահմանել կոյուղու համակարգից դեպի արձանագրության իրավասության սահմաններում գտնվող ջրերի մեջ կեղտաջրերի կոլեկտիվ կայաններից առանց մաքրման հեղեղաջրերի արտահոսքի դեպքերի նկատմամբ թիրախային ցուցանիշներ և այդ ցուցանիշներին հասնելու ժամկետներ:

I. ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Ա. Օրենսդրական դաշտ

Չմաքրված կեղտաջրերի արտահոսքի դեպքերի կանխարգելումն ու կրճատումը Հայաստանում կանոնակարգվում է համապատասխան օրենսդրությամբ՝

- 2002թ. ընդունված ՀՀ ջրային օրենսգիրքը,
- 2006թ. ընդունված ՀՀ <<Ջրի ազգային ծրագրի մասին>> օրենքը,
- ՀՀ կառավարության 2003թ.-ի օգոստոսի 28-ի թիվ 1228-Ն որոշումը <<Ջրահեռացման համակարգերի օգտագործման և հեռացվող ջրերի մաքրման կանոնները սահմանելու մասին>>>,
- ՀՀ կառավարության 2004թ.-ի հունվարի 22-ի թիվ 130-Ն որոշումը <<Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման կանոնների, ջրամատակարարման և ջրահեռացման պայմանագրերի օրինակելի ձևերը, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերին միացման տեխնիկական պայմանների սահմանման կարգը հաստատելու մասին>>>,
- ՀՀ կառավարության 2011թ.-ի հունվարի 27-ի թիվ 75-Ն որոշումը <<Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին>>:

Այս օրենսդրական բազան, այնուամենայնիվ, ամբողջությամբ չի կանոնակարգում կոյուղու համակարգից բաց ջրավազան առանց մաքրման արտահոսող հեղեղաջրերը:

Բ. Ինստիտուցիոնալ շրջանակները

Քանի որ քաղաքային և գյուղական համայնքների հեղեղատարների չնաքրված արտահոսքը բաց ջրավազան չի կարգավորվում համապատասխան իրավաբանական ակտերով, դրանց ինստիտուցիոնալ կառավարումը նույնպես համակարգված չէ: Քաղաքներում, այդ թվում Երևանում, հեղեղատարների կառավարումը և շահագործումը իրականացվում է ինչպես Երևանի քաղաքապետարանի, այնպես էլ «Երևան Ջուր» ՓԲԸ կողմից: Հանրապետության մնացած քաղաքներում և այն գյուղական համայնքներում, ուր առկա են հեղեղատար համակարգեր, դրանց շահագործումն իրականացվում է համապատասխան համայնքների և, կախված տարածաշրջանից, «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ, «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ, «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ կամ «Նոր Ակունք» ՓԲԸ կողմից:

Արտադրական տարածքներում առկա հեղեղատարների կառավարումը և շահագործումն իրականացվում է տվյալ արտադրական ձեռնարկության կողմից:

Գ. Ֆինանսական շրջանակները

Հայաստանում հեղեղատարների սպասարկման, շահագործման և, հնարավորության դեպքում, նաև արդիականացման ծախսերը հիմնականում իրականացվում են համայնքային միջոցների հաշվին: Վերջին տարիներին այս ոլորտում որևէ խոշոր ներդրում չի իրականացվել:

II. ՀԵՂԵՂԱՏԱՐՆԵՐԻ ՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԵՐԿԱՅԻՍ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Հեղեղատարների հեռացման համակարգեր գոյություն ունեն Հայաստանի բոլոր քաղաքներում և գրեթե բացակայում են գյուղական համայնքներում: Սակայն առկա համակարգերը ԽՍՀՄ դարաշրջանից մինչ այժմ ճգնաժամային պայմանների, բավարար սպասարկման և ֆինանսական միջոցների բացակայության պատճառով գտնվում են անմխիթար վիճակում: Ընդ որում, առկա համակարգերից ոչ մեկը չունի նույնիսկ պարզագույն հեղեղների, կեղտաջրերի համար նախատեսված մաքրման կայան: Այդ և մի շարք այլ օբյեկտիվ պատճառներով պայմանավորված, հեղեղների հոսքաջրերն առանց մաքրման թափվում են բաց ջրավազան, չնայած նրան, որ երբեմն դրանցում աղտոտման մակարդակը մի քանի անգամ գերազանցում է հոսքաջրերի արտահոսքի ԹՄԱ:

Հեղեղաջրերի հիմնական աղտոտիչներն են կախյալ մասնիկները, նավթամթերքները և քաղաքային տարածքներին բնորոշ այլ աղտոտիչներ, որոնք, յուրաքանչյուր անձրևից և ձնհալից հետո, անընդհատ առանց մաքրման թափվում են բաց ջրավազաններ և աղտոտում դրանք:

Հեղեղաջրերի հեռացման և կոմունալ - կենցաղային կեղտաջրերի համակարգերը Հայաստանում հիմնականում առանձնացված են և կապ չունեն իրար հետ: Ի տարբերություն քաղաքային հեղեղատար համակարգերի, որոնց չեն ներկայացվում խիստ պայմաններ, արդյունաբերական ձեռնարկությունների նմանատիպ համակարգերին ներկայացված պայմանները, համաձայն համապատասխան նորմերի և ջրօգտագործման թույլտվությունների պահանջների, ավելի խիստ են: Որոշ արդյունաբերական կազմակերպություններում առկա են հոսքաջրերի հավաքման, տեղափոխման և մաքրման համակարգեր, ընդ որում, ձեռնարկությունների մաքրման կայաններից հետո ջուրը քաղաքային կոյուղի է թափվում:

Ցավոք, հեղեղատար կոլեկտորների, խողովակաշարերի երկարությունների, առկայության և վիճակի մասին, ինչպես նաև հեղեղաջրերի հոսքերի մաքրման կառույցների նախագծային և փաստացի հզորությունների և հեղեղատար ու կոմունալ-կենցաղային կեղտաջրերի հեռացման համակարգեր թափանցող հեղեղային հոսքերի մոտավոր ծավալների մասին տեղեկատվությունը հանրապետությունում բացակայում է: Հանրապետությունում չի իրականացվում հեղեղատար համակարգերի և հեղեղային հոսքերի մոնիթորինգ և հսկողություն:

Հարկ է նշել, որ քաղաքային հեղեղաջրերի աղտոտման բարձ աստիճանը պայմանավորված է կոշտ կենցաղային թափոնների ոչ պատշաճ և անթույլատրելի վայրերում կուտակմամբ, հանրապետության ավտոմոբիլային պարկի անբավարար տեխնիկական վիճակով, տարածքների սանիտարական մաքրման անբավարարությամբ և այլ պատճառներով:

Հանրապետության բոլոր քաղաքային համայնքների գլխավոր քաղաքաշինական պլաններում և զարգացման ծրագրերում հաշվի է առնված հեղեղատար համակարգերի բարելավման և արդիականացման անհրաժեշտությունը: Այդ փաստաթղթերում շատ հաճախ նույնիսկ տեղ է հատկացվում մաքրման կայանների կառուցման համար: Սակայն ֆինանսական միջոցների բացակայության պատճառով կոնկրետ աշխատանքներ չեն իրականացվում:

2012թ.-ին հորդառատ անձրևների և մայրաքաղաքի հեղեղատար համակարգի անբավարար վիճակի պատճառով հեղեղվեցին և կաթվածահար եղան Երևանի մի քանի փողոցներ: Ըստ քաղաքապետարանի տեղեկատվության, այժմ իրականացվում են Երևան քաղաքի մոտ 350 կմ երկարություն ունեցող հեղեղատար համակարգերի մանրամասն ուսումնասիրություններ և գույքագրում՝ նշված համակարգերի վերանորոգման, արդիականացման և առաջնայնությունների որոշման նպատակով:

IV. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Հաշվի առնելով վերոնշյալը, թիրախային ոլորտ X-ին հասնելու համար անհրաժեշտ է՝

- ✓ ուսումնասիրել և գույքագրել առկա հեղեղատար համակարգերի վիճակը, բացահայտել հիմնական թերությունները,
- ✓ ուսումնասիրել հեղեղատար համակարգերից բաց ջրավազաններ առանց մաքրման հեռացվող հեղեղաջրերի որակը,
- ✓ ուսումնասիրել առանց մաքրման հեռացվող հեղեղաջրերի ազդեցությունը արձանագրության իրավասության սահմաններում գտնվող ջրերի վրա,
- ✓ իրականացնել համապատասխան օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումներ չմաքրված հեղեղաջրերի բաց ջրավազաններ արտահոսքի դեպքերը կանխարգելելու նպատակով,
- ✓ ներգրավել համապատասխան ներդրումներ մայրաքաղաքում և առնվազն ևս երկու քաղաքում հեղեղատար համակարգերի վերականգնման և արդիականացման նպատակով,
- ✓ մշակել հեղեղաջրերի հոսքերի կառավարման ռազմավարություն և քաղաքականություն:

Թիրախային ոլորտ XI

Հոդված 6, 2 (ը)

Կեղտաջրերի մաքրման կայաններից արձանագրության իրավասության սահմաններում գտնվող ջրերի մեջ արտահոսած կեղտաջրերի որակը

<<Ջուր և առողջություն>> արձանագրության հոդված 6-ի 2-րդ կետի <<ը>> ենթակետի համաձայն, պահանջվում է սահմանել կեղտաջրերի մաքրման կայաններից արձանագրության իրավասության սահմաններում գտնվող ջրերի մեջ արտահոսած կեղտաջրերի որակի և դրա նկատմամբ թիրախային ցուցանիշներ և այդ ցուցանիշներին հասնելու ժամկետները:

I. ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Ա. Օրենսդրական դաշտ

Վերջին տարիների ընթացքում կեղտաջրերի մաքրման կայաններից բաց ջրավազան թափվող հոսքաջրերի որակի նկատմամբ հսկողության և կառավարման ոլորտի կանոնակարգման նպատակով, երկրի օրենսդիր և գործադիր մարմինների կողմից ընդունվել են մի շարք օրենսդրական ակտեր, որոշումներ և այլն՝

- 2002թ. ընդունված ՀՀ ջրային օրենսգիրքը,
- 2006թ. ընդունված ՀՀ <<Ջրի ազգային ծրագրի մասին>> օրենքը,
- ՀՀ կառավարության 2003թ.-ի օգոստոսի 28-ի թիվ 1228-Ն որոշումը <<Ջրահեռացման համակարգերի օգտագործման և հեռացվող ջրերի մաքրման կանոնները սահմանելու մասին>>>,
- ՀՀ կառավարության 22.01.2004թ.-ի հունվարի 22-ի թիվ 130-Ն որոշումը <<Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման կանոնների, ջրամատակարարման և ջրահեռացման պայմանագրերի օրինակելի ձևերը, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերին միացման տեխնիկական պայմանների սահմանման կարգը հաստատելու մասին>>>,
- ՀՀ կառավարության 2011թ.-ի հունվարի 27-ի թիվ 75-Ն որոշումը <<Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին>>:

Բ. Ինստիտուցիոնալ շրջանակները

Նոր ինստիտուցիոնալ համակարգի համաձայն, ոլորտի կառավարումն իրականացվում է հետևյալ մարմինների կողմից՝

- ՀՀ բնապահպանության նախարարության ջրային ռեսուրսների կառավարման գործակալությունը,
- ՀՀ բնապահպանության նախարարության շրջակա միջավայրի վրաներգործության մոնիտորինգի կենտրոնը,
- ՀՀ բնապահպանության նախարարության հանրապետական բնապահպանական պետական տեսչությունը,
- ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեն,
- ՀՀ առողջապահության նախարարությունը,
- ՀՀ ֆինանսների նախարարությունը,
- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայությունը:

II. ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՋՐԵՐԻ ՄԵՁ ԱՐՏԱՀՈՍԱԾ ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ՈՐԱԿԸ, ՆԵՐԿԱՅԻՄ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Կոյուղու առկա համակարգերը ծառայում են բազմաբնակարանային, հասարակական, կոմունալ շենքերի, արտադրական ձեռնարկությունների, ինչպես նաև դրանց տարածքների վրա գոյացող կենցաղային, հեղեղային և արտադրական հոսքերի հեռացման և մաքրման համար:

Արդյունաբերական հոսքերը հանրապետությունում լոկալ/նախնական մաքրումից հետո մաքրվում են քաղաքային մաքրման կայաններում՝ կոմունալ-կենցաղային կեղտաջրերի հոսքերի հետ միասին:

Քանի որ չմաքրված կեղտաջրերի արտահոսքը բաց ջրավազաններ օրենսդրորեն արգելվում է, բոլոր կոյուղացանցերի նախագծերով նախատեսվում էր համակարգի հոսքաջրերը մղել համապատասխան մաքրման կայաններ: Սակայն ԽՍՀՄ փլուզումը, հետագա ճգնաժամը, պատշաճ շահագործման, ներդրումների և ֆինանսների բացակայությունը և բազմաթիվ այլ օբյեկտիվ պատճառներով նախատեսվող մաքրման կայաններից շատերը չկառուցվեցին կամ մնացին անավարտ, իսկ գործողների մեծ մասը դարձան շահագործման համար ոչ պիտանի:

Հանրապետությունում ներկայումս գործում է չորս կայան՝ անհապաղ կապիտալ վերանորոգում պահանջող Երևանի <<Աէրացիա>> և նոր կառուցված Վարդենիս, Մարտունի, Գավառ քաղաքների մաքրման կայանները: Ընդ որում, գործող մաքրման կայանները կատարում են կեղտաջրերի միայն մեխանիկական մաքրում:

Ներկայումս գործող հին մաքրման կայանները մաքրումն իրականացնում են հնացած տեխնոլոգիաներով և շահագործման տեսանկյունից չեն համապատասխանում առկա աղտոտիչների կոնցենտրացիաներին և բաղադրությանը, հոսքերի ծավալներին, ընդունվող հոսքերի հիդրավիլի բեռին:

Մաքրման կայանների անմխիթար վիճակի և դրանցից բաց ջրավազաններ թափվող հոսքաջրերի անբավարար մոնիտորինգի, ինչպես նաև գյուղական համայնքների մեծ մասի չկոյուղացման պատճառով, բաց ջրավազաններ թափվող կեղտաջրերի որակի մասին առկա տեղեկատվությունը լիարժեք չէ:

IV. ՓՈՐՉԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ինչպես արդեն նշվել է, ՀՀ տարածքում առկա, ԽՍՀՄ տարիներից ժառանգություն մնացած կեղտաջրերի 22 մաքրման կայանների մեծ մասը չեն գործում: Նոր կառուցված մաքրման կայանները հիմնականում իրականացնում են միայն մեխանիկական մաքրում:

Քանի որ կեղտաջրերի մաքրման գործընթացը, մասնավորապես, մաքրման կայանների կառուցումը և շահագործումը, բավականին մեծ ֆինանսական միջոցներ պահանջող միջոցառում է և Հայաստանի նման երկրի համար այս պարագայում գրեթե անհնար, ուստի առկա իրավիճակը բարելավելու համար նախ և առաջ պետք է հայթհայթել համապատասխան ֆինանսական միջոցներ՝ դոնոր կազմակերպությունների օգնություններ, ներդրումային ծրագրեր, վարկային միջոցներ, ինչպես նաև ներգրավել այս ոլորտում փորձ ունեցող միջազգային համապատասխան կազմակերպություններ, որոնք պատրաստ կլինեն վերականգնել առկա կայանները, կառուցել նոր մաքրման կայաններ և շահագործել դրանք:

Բացի այդ հաշվի առնելով վերոնշյալը, թիրախային ոլորտ XI-ին հասնելու համար անհրաժեշտ է՝

- ✓ ուսումնասիրել և հայտնաբերել կեղտաջրերի մաքրման կայաններից արձանագրության իրավասության սահմաններում գտնվող ջրերի մեջ արտահոսած կեղտաջրերի որակին առնչվող օրենսդրական դաշտի բացերը,
- ✓ մշակել և սահմանել մաքրման կայաններից բաց ջրավազաններ արտահոսող ջրերի որակի նորմերը և հեռացման կարգը,
- ✓ հանրապետության խոշոր քաղաքների մաքրման կայանների վերականգնման կամ նորերի կառուցման համար մշակել համապատասխան նախագծեր,
- ✓ կյանքի կոչելով համապատասխան օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումները՝ պարտադրել խոշոր արդյունաբերական

ձեռնարկություններին բարեխղճորեն իրականացնել արտահոսող կեղտաջրերի պատշաճ մաքրում կեղտաջրերի մաքրման կայանների միջոցով,

- ✓ բարեկարգել հանրապետությունում առկա որակական մոնիտորինգի համակարգը, մաքրման կայաններից արտահոսող ջրերի որակական մոնիտորինգի պատշաճ իրականացման նպատակով,
- ✓ սահմանել պատշաճ վերահսկողություն բաց ջրավազաններ հեռացվող կեղտաջրերի որակական ցուցանիշների նկատմամբ:

Թիրախային ոլորտ XII

Հոդված 6, 2 (թ), առաջին մաս

Ջրահեռացման կամ այլ ջրահեռացման շինությունների կոլեկտիվ համակարգերից կեղտաջրերի նստվածքի հեռացում կամ կրկնակի օգտագործում

<<Ջուր և առողջություն>> արձանագրության հոդված 6-ի 2-րդ կետի <<թ>> ենթակետի համաձայն, պահանջվում է սահմանել ջրահեռացման կամ այլ ջրահեռացման շինությունների կոլեկտիվ համակարգերից կեղտաջրերի նստվածքի հեռացման կամ կրկնակի օգտագործման նկատմամբ թիրախային ցուցանիշներ և այդ ցուցանիշներին հասնելու ժամկետներ:

I. ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Ա. Օրենսդրական դաշտ

Հայաստանի Հանրապետությունում ջրահեռացման կամ այլ ջրահեռացման շինությունների կոլեկտիվ համակարգերից, դրենաժներից և մաքրման կայաններից կեղտաջրերի նստվածքի հեռացումը կամ կրկնակի օգտագործման ոլորտը կանոնակարգող հիմնական օրենքներից են՝

- 2002թ. ընդունված ՀՀ ջրային օրենսգիրքը,
- 2006թ. ընդունված ՀՀ <<Ջրի ազգային ծրագրի մասին>> օրենքը,
- ՀՀ կառավարության 2003թ.-ի օգոստոսի 28-ի թիվ 1228-Ն որոշումը <<Ջրահեռացման համակարգերի օգտագործման և հեռացվող ջրերի մաքրման կանոնները սահմանելու մասին>>>,
- ՀՀ կառավարության 2004թ.-ի հունվարի 22-ի թիվ 130-Ն որոշումը <<Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման կանոնների, ջրամատակարարման և ջրահեռացման պայմանագրերի օրինակելի ձևերը, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերին միացման տեխնիկական պայմանների սահմանման կարգը հաստատելու մասին>>>,
- ՀՀ կառավարության 2011թ.-ի հունվարի 27-ի թիվ 75-Ն որոշումը <<Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին>>:

Այս ոլորտի օրենսդրական բարեփոխումներն, այնուամենայնիվ, դեռ վաղ է կոչել ավարտված, քանի որ դեռ բացակայում են ջրահեռացման կամ այլ ջրահեռացման շինությունների կոլեկտիվ համակարգերից, դրենաժներից և մաքրման կայաններից կեղտաջրերի նստվածքի հեռացումը կամ կրկնակի օգտագործումը կանոնակարգող օրենսդրական հենքերը, սահմանված չեն կեղտաջրերի նստվածքների որակական նորմերը և կեղտաջրերի

նստվածքների կրկնակի օգտագործման կանոնակարգերը: Ցավոք, վերը նշված օրենսդրական ակտերի կիրարկումն ապահովող միջոցառումներ հանրապետությունում չեն իրականացվում:

Բ. Ինստիտուցիոնալ շրջանակները

Չնայած նրան, որ ոլորտը որոշ չափով կանոնակարգվում է վերը նշված օրենսդրական ակտերով, կեղտաջրերի նստվածքի հեռացումը կամ կրկնակի օգտագործումը հանրապետությունում չի կիրառվում նորմերին համապատասխանող մաքրման կայանների բացակայության կամ նրանց անբավարար վիճակի պատճառով, հետևաբար դրանց ինստիտուցիոնալ կառավարումը նույնպես համակարգված չէ:

Գ. Ֆինանսական շրջանակները

Որևէ ներդրում այս ոլորտում վերջին տարիներին չի իրականացվել:

II. ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ՆՍՏՎԱԾՔՆԵՐԻ ՀԵՌԱՑՄԱՆ ԿԱՄ ԿՐԿՆԱԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆԵՐԿԱՅԻՍ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Հանրապետության գրեթե բոլոր մաքրման կայաններում նախատեսված են մեխանիկական և կենսաբանական մաքրման կառույցներ՝ մաքրված հոսքերի համապատասխան վարակազերծումով, ինչպես նաև նստվածքների մշակման կառույցներ, որոնք սակայն գտնվում են անմխիթար վիճակում:

Հանրապետությունում կեղտաջրերի մաքրման առկա 22 կայանները կառուցվել են բնակավայրերում դեռ ԽՍՀՄ իշխանության օրոք՝ շուրջ 40 տարի առաջ: Սակայն վերջին տարիներին, տեխնիկական սպասարկման իրականացման համար ծախսերի և համապատասխան ներդրումների բացակայության պատճառով, կայանների վիճակը վատթարացել է և ներկայումս դրանցից ոչ մեկը չի գործում: Բացառություն է կազմում 1972 թ.-ին կառուցված Երևանի «Աերացիա» կեղտաջրերի մաքրման կայանը, որտեղ իրականացվում է կեղտաջրերի մեխանիկական և կենսաբանական մասնակի մաքրում:

Հարկ է նշել, որ ԽՍՀՄ օրոք, երբ մաքրման կայանների մեծ մասը գործում էին, դրանցում գոյացած նստվածքները, համապատասխան մշակում անցնելուց հետո, օգտագործվում էին որպես պարարտանյութ՝ գյուղատնտեսական հողերը պարարտացնելու նպատակով: Սակայն ԽՍՀՄ վերջին տարիներին և փլուզումից հետո, երբ մաքրման կայանների մեծ մասը չէր գործում, դրանք բավարար կերպով չէին սպասարկվում, իսկ բեռնվածությունը, վնասակար նյութերի կոնցենտրացիան ավելացել էր, մաքրման կայաններում գոյացած նստվածքների որակական ցուցանիշները թույլ չտվեցին շարունակել դրանց կրկնակի օգտագործումը: Մաքրման կայանների խարխլված վիճակի պատճառով ներկայումս չեն գործում ոչ

մեթանտենկերը, ոչ նստվածքների մեխանիկական ջրազրկման արտադրամասերը, ոչ էլ տիղմային մակերեսները: Ըստ առկա տեղեկատվության՝ միայն մեխանիկական մաքրում իրականացնող Երևանի <<Աէրացիա>> մաքրման կայանի նստվածքները վերջին 20 տարում չեն հեռացվել և կուտակվել են կայանում:

Նոր կառուցված Գավառի, Մարտունու և Վարդենիսի մաքրման կայանները հանձնվել են շահագործման 2013 թվականին և դրանցում գոյացած նստվածքների քանակը դեռ չնչին է, հետևաբար այդ նստվածքի օգտագործման մասին խոսելը դեռ վաղ է:

Մասնավոր խոշոր արդյունաբերական ձեռնարկություններում վերջին տարիներին կառուցված մաքրման կայաններում, օրինակ՝ 2005թ.-ին ԱՄՆ ՄԶԳ օգնությամբ Երևանի կաշվի վերամշակման գործարանում¹³ կառուցված կեղտաջրերի մաքրման կայանում, որը մաքրում է նաև հարևանությամբ գտնվող Արմկարպետ ձեռնարկության հոսքաջրերը, ըստ նախագծի, նստվածքները, համապատասխան մշակումից հետո, պետք է օգտագործվեն գյուղատնտեսական հողերի պարարտացման նպատակով:

IV. ՓՈՐՉԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Հաշվի առնելով վերոնշյալը, թիրախային ոլորտ XII-ին հասնելու համար անհրաժեշտ է՝

- ✓ մշակել ջրահեռացման կամ այլ ջրահեռացման շինությունների կոլեկտիվ համակարգերից, դրենաժներից և մաքրման կայաններից կեղտաջրերի նստվածքի հեռացումը կամ կրկնակի օգտագործումը կանոնակարգող օրենսդրական հենքերը,
- ✓ ուսումնասիրել ջրահեռացման շինությունների կոլեկտիվ համակարգերի, դրենաժների և մաքրման կայանների կեղտաջրերի նստվածքի որակը և սահմանել համապատասխան որակական նորմեր,
- ✓ սահմանել կեղտաջրերի նստվածքների կրկնակի օգտագործման կանոնակարգեր,
- ✓ սահմանել մաքրման կայանների կեղտաջրերի նստվածքների հեռացման, տեղափոխման և կուտակման կանոնակարգեր,
- ✓ իրականացնել համապատասխան ինստիտուցիոնալ բարեփոխումներ ջրահեռացման կամ այլ ջրահեռացման շինությունների կոլեկտիվ համակարգերից, դրենաժներից և մաքրման կայաններից կեղտաջրերի նստվածքի հեռացումը կամ կրկնակի օգտագործումը կանոնակարգելու նպատակով,

¹³ The Kashi Tannery Effluent Treatment System is a public-private partnership activity supported by USAID through its projects in “Sustainable Water Resources Management for Enhanced Environmental Quality,” and “Agribusiness Small Medium Enterprise Market Development (ASME).”

- ✓ ներգրավել համապատասխան ներդրումներ՝ մայրաքաղաքում և առնվազն ևս երկու քաղաքում նստվածքների համալիր մշակման կառույցների վերականգնման և արդիականացման նպատակով:

Թիրախային ոլորտ XIII

Հոդված 6, 2 (թ), երկրորդ մաս

Ոռոգման նպատակներով օգտագործվող կեղտաջրերի որակը

<<Ջուր և առողջություն>> արձանագրության հոդված 6-ի 2-րդ կետի <<թ>> ենթակետի երկրորդ մասի համաձայն, պահանջվում է սահմանել ոռոգման նպատակով օգտագործվող կեղտաջրերի որակի նկատմամբ թիրախային ցուցանիշներ և այդ ցուցանիշներին հասնելու ժամկետներ:

I.ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Ա. Հայաստանի Հանրապետությունում ոռոգման նպատակով կեղտաջրերի օգտագործման օրենսդրական կարգավորում

Ոռոգման նպատակով օգտագործվող ջրերի նկատմամբ Հայաստանում կիրառվող ստանդարտները չեն տարածվում կեղտաջրերի վրա: Ներկա պահին հանրապետությունում գոյություն չունեն ոռոգման համար օգտագործվող ջրերի (մակերևութային, ստորգետնյա, անձրևաջրերի, ձնհալի ջրերի և կեղտաջրերի) որակի ինտեգրացված ստանդարտներ:

Ոռոգման նպատակով օգտագործվող մակերևութային ջրերի որակը մասամբ կարգավորվում է ՀՀ կառավարության 2011թ. –ի հունվարի 27-ի թիվ 75-Ն <<Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին>> որոշմամբ:

Չմաքրված կեղտաջրերով գյուղատնտեսական հողատեսքերի ոռոգումը սահմանափակվում է ՀՀ ջրային օրենսգրքի հոդված 99-ի 9-րդ կետով, հոդված 101 –ով և հոդված 103-ի վերջին պարբերությամբ:

Այսպիսով, հանրապետությունում տվյալ ոլորտը կարգավորող համապատասխան ազգային օրենսդրական դաշտը լիարժեք չէ: Մաքրված կեղտաջրերի երկրորդային օգտագործումը երկրում հիմնականում չի կիրառվում:

Բ. Ինստիտուցիոնալ շրջանակները

Ոռոգման ոլորտի, այդ թվում ոռոգման նպատակով օգտագործվող ջրերի որակի, ինչպես նաև ոռոգման նպատակով օգտագործվող կեղտաջրերի որակի, ոռոգման ջրերի մատակարարման կարգի և ռեժիմների նկատմամբ հսկողության, ռազմավարության մշակման և ոլորտի կարգավորման համար պատասխանատվություն են կրում՝

- ՀՀ բնապահպանության նախարարության ջրային ռեսուրսների կառավարման գործակալությունը,
- ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը,
- ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեն,
- Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը,
- ՀՀ առողջապահության նախարարությունը
- ՀՀ ֆինանսների նախարարությունը,
- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայությունը,
- Ջրօգտագործողների ընկերությունները:

Գ. Ֆինանսական շրջանակները

Հայաստանում ոռոգման ոլորտում իրականացվող և նախատեսվող միջոցառումների մեծ մասն իրականացվում է պետբյուջեի հաշվին, միջազգային դոնոր կազմակերպությունների օժանդակությամբ, դրամաշնորհային և վարկային միջոցներով: Սակայն, քանի որ չմաքրված կեղտաջրերը ոռոգման նպատակով չեն օգտագործվում, այդ խնդիրների ֆինանսավորումը չի իրականացվում:

II. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՈՌՈԳՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԵՂՏԱՋՐԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Հայաստանի տարածքում չմաքրված կեղտաջրերը ոռոգման նպատակով հիմնականում չեն օգտագործվում, սակայն շատ հաճախ ոռոգման նպատակով ջրառն իրականացվում է այնպիսի ջրային ռեսուրսներից, որտեղ ջրառի կետից հոսանքն ի վեր թափվում են մաքրման կայաններից հեռացված, մեխանիկական մաքրում անցած կենցաղային, արտադրական կեղտաջրեր, անձրևաջրեր և ձնհալի հոսքաջրեր կամ կենտրոնացված կոյուղատար չունեցող բնակավայրերից հեռացված կենցաղային կեղտաջրեր:

III. ՈՌՈԳՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԿԵՂՏԱՋՐԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Կեղտաջրերը Հայաստանում տարբերվում են քիմիական տարրերի, օրգանական նյութերի և միկրոօրգանիզմների պարունակությամբ:

Ոռոգման նպատակով օգտագործվող կեղտաջրերի որակը պետք է կանոնակարգվի ըստ քիմիական, մանրէաբանական, կենսաբանական և մակարոնական ցուցանիշների:

Ընդ որում, այդ ջրերի պիտանելիությունը որոշվում է քիմիական անալիզի արդյունքներով՝ հաշվի առնելով տարածաշրջանի կլիմայական առանձնահատկությունները և ոռոգվող տարածքների հողամելիորատիվ պայմանները: Ոռոգման նպատակներով առանց սահմանափակումների կարող են օգտագործվել միայն խմելու-կենցաղային ջրօգտագործման համար միկրոմասնիկների, այդ թվում ծանր մետաղների, թույլատրելի սահմանային կոնցենտրացիան չգերազանցող կեղտաջրերը:

Ընդհանուր առմամբ, ոռոգման նպատակով օգտագործվող կեղտաջրերը պետք է համապատասխանեն ագրոմելիորատիվ այն պահանջներին, որոնք ներկայացվում են ոռոգման ջրերին՝ մշակվող կուլտուրաների բարձր բերքատվության, լավորակ մթերքի, ինչպես նաև հողի բերրիության բարձրացումը և նրա մելիորատիվ վիճակի բարելավումն ապահովելու համար:

Ոռոգման համար պիտանի են համարվում այն հոսքաջրերը, որոնցով կատարվող ոռոգումը բացասական ազդեցություն չի գործում ոռոգվող տարածքների մելիորատիվ վիճակի և հողի բերքատվության վրա, չի նվազեցնում գյուղատնտեսական մշակաբույսերի բերքը և աճեցրած մթերքի որակը, չի առաջացնում հողում թունավոր նյութերի կուտակում: Կեղտաջրերով ոռոգումը չպետք է առաջացնի հողերի աղակալում, ճնշի բույսերի աճն ու զարգացումը, չնվազեցնի բույսերի բերքատվությունը:

Ոռոգման ջրի պիտանելիությունը կախված է բույսերի տեսակից, հողի տիպից, ցամաքեցնելու աստիճանից, ջրում անիոնների և կատիոնների հարաբերությունից: Մշակաբույսերի ընտրությունը կատարվում է՝ ելնելով ստացվող արտադրանքին ներկայացվող սանիտարական պահանջներից, կեղտաջրերի բաղադրությունից ու մատակարարման ռեժիմից, հողամելիորատիվ պայմաններից, ինչպես նաև գյուղատնտեսական արդյունաբերության ուղղվածությունից և մասնագիտացումից:

Կեղտաջուրը որպես ոռոգման ջուր օգտագործելիս հողի մշակումը և ցանքսերի խնամքը պետք է ուղղված լինի օդա-ջրային օպտիմալ վիճակի պահպանմանը, հողի բերքատվության և ջրաֆիզիկական հատկությունների բարձրացմանը: Դա նպաստում է գյուղատնտեսական մշակաբույսերի աճեցման համար ավելի նպաստավոր սանիտարական պայմանների ստեղծմանը:

Սակայն, կեղտաջրերն օգտագործելիս հնարավոր են նաև բացասական հետևանքներ, որոնք ազդում են, օրինակ, գրունտային ջրերի որակի վրա: Գրունտային ջրերի աղտոտումը կանխարգելելու համար անհրաժեշտ է ոռոգման ռեժիմի, շահագործման պահանջների խիստ պահպանում, ինչպես նաև դրենաժային համակարգերի առկայությունը:

Այսպիսով, կեղտաջրերի՝ ոռոգման նպատակով օգտագործումը պլանավորելիս, կարելի է առաջնորդվել հետևյալ չափանիշներով՝

- բնապահպանական չափանիշներ, որոնց համաձայն չի թույլատրվում շրջակա միջավայրի աղտոտումը, մասնավորապես գրունտային և մակերևութային ջրերի աղտոտումը,
- սանիտարական չափանիշներ, որոնց համաձայնպետք է ապահովել գյուղատնտեսական աշխատողների համար կեղտաջրերով ոռոգվող հողատարածքների վրա աշխատանքային անվտանգ պայմաններ,
- մելիորատիվ չափանիշներ, որոնցով չի թույլատրվում ոռոգվող հողատարածքի մելիորատիվ վիճակի վատացում,
- ագրոքիմիական չափանիշներ, որոնց համաձայն չի թույլատրվում ոռոգվող տեղամասի հողի որակի վատացում և բերքատվության նվազում,
- ագրոտնտեսական չափանիշներ, ըստ որոնց չի թույլատրվում մշակվող բույսերի բերքատվության անկում:

Կեղտաջրերը ոռոգման նպատակով օգտագործելու պիտանելիության աստիճանը կախված է հետևյալ գործոններից՝

- հողագրունտի աղակալման վտանգ,
- երկրորդային աղակալման վտանգ,
- առանձին իոնների տոքսիկություն և այլն:

Ոռոգման համար օգտագործվող կեղտաջրերի որակն առաջին հերթին կարելի է բնութագրել հետևյալ ցուցանիշներով՝

- ջրում լուծված աղերի իոնների գումարով,
- նատրիումի իոնների քանակով,
- մագնեզիումի աղերի քանակով,
- սոդայի առկայությամբ,
- լուծված աղերի քիմիական կազմով:

Այսպիսով, կեղտաջրերը ոռոգման նպատակով օգտագործելու դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել ոռոգման նպատակով օգտագործվող կեղտաջրերին ներկայացվող ագրոմելիորատիվ և սանիտարահիգիենիկ չափանիշները: Ընդ որում, ոռոգվող տարածքի մելիորատիվ պայմանների և բերքատվության հնարավոր փոփոխությունները պետք է հասցվեն նվազագույնի և պետք է բացառվի տարաբնույթ վարակիչ հիվանդությունների տարածումը:

IV. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Հաշվի առնելով վերոնշյալը, թիրախային ոլորտ XIII-ին հասնելու համար անհրաժեշտ է՝

- ✓ ուսումնասիրել ոռոգման նպատակով մաքրման կայանների հոսքաջրերի օգտագործման հնարավորությունները,
- ✓ ուսումնասիրել ոռոգման նպատակով կեղտաջրերի երկրորդային օգտագործման հնարավորությունները,
- ✓ մշակել ոռոգման նպատակով կեղտաջրերի օգտագործման նորմեր և կարգ:

Թիրախային ոլորտ XIV
Հոդված 6, 2 (ժ), առաջին մաս
Խմելու ջրի աղբյուր հանդիսացող ջրերի որակը

Արձանագրության 6-րդ հոդվածի 2-րդ կետի <<ժ>> ենթակետի առաջին մասի համաձայն, պահանջվում է սահմանել թիրախային ցուցանիշներ և նպատակային ժամկետներ խմելու ջրի աղբյուր հանդիսացող ջրերի որակի նկատմամբ:

I. ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Ա. Ռազմավարություններ, իրավական / կարգավորիչ դաշտ և միջազգային պարտավորություններ

ՀՀ ջրային օրենսգիրք

ՀՀ հողային օրենսգիրք

ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենք

ՀՀ կառավարության 2002 թ.-ի հունվարի 14-ի թիվ 26 որոշում

- Խմելու տնտեսական նշանակության ջրմուղների և ջրամատակարարման աղբյուրների սանիտարական պահպանման գոտիներ N2-III-Ա2-2 սանիտարական կանոններ և նորմեր /գրանցված 28.12.2002թ./, ինչով սահմանվում են խմելու տնտեսական նշանակության ջրմուղների և ջրամատակարարման աղբյուրների սանիտարական պահպանման գոտիների կազմակերպմանը և շահագործմանը ներկայացվող սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային պահանջները:

ՀՀ կառավարության «Ջրօգտագործման թույլտվության օրինակելի ձևաթուղթը և ջրօգտագործման թույլտվության ձևերը հաստատելու մասին» 07.03.2003թ. թիվ 218-Ն որոշմամբ կոմունալ-կենցաղային, բուժիչ և առողջապահական նպատակներով ջրօգտագործման դեպքում պարտադիր պահանջվում է համապատասխան փաստաթուղթ (եզրակացություն)՝ տրված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության կողմից:

«Ազատ ջրօգտագործման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2003 թ.ի հունիսի 5-ի թիվ 816-Ն որոշում

Բ. Բնատիտուցիոնալ շրջանակները

Պատասխանատու կառույցներ

Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովումը ՀՀ կառավարության 2002 թ.-ի օգոստոսի 15-ի ««Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» թիվ 1300-Ն որոշման համաձայն, ՀՀ առողջապահության նախարարության նպատակներից և խնդիրներից մեկն է (հավելված 1, «7. Նախարարության նպատակները և խնդիրներն են՝... Ժբ) հանրային առողջության և բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովումը»): Նախարարությունն իրականացնում է նաև բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովմանն ուղղված պետական քաղաքականության և նպատակային ծրագրերի մշակումը և դրանց իրականացման դիտարկումը և օրենքների ու այլ իրավական ակտերի նախագծերի մշակումը: Նախարարության կազմում ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման բնագավառում համապատասխան գործունեության առարկան և նպատակները ՀՀ կառավարության 25.07.2013թ. թիվ 857-Ն և 17.10.2013թ. թիվ 1134-Ն որոշումներով սահմանված են առողջապահական պետական տեսչության և «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի համար:

Բ. Առարկայական ոլորտին վերաբերող հիմնական խնդիրները

Հայաստանի Հանրապետության ազգաբնակչությանը ջրամատակարարման կենտրոնացված համակարգերով տրվող խմելու ջրի աղբյուրների հիմնական մասը կայուն քիմիական բաղադրությամբ և մանրէային ցածր աղտոտվածությամբ ստորերկրյա ջրեր են: Չնայած դրան, կա 22 մակերևութային աղբյուր /գետեր/, որոնցից ջրամատակարարվում է մոտ 150 000 բնակիչ: Մակերեսային և ստորերկրյա աղբյուրների ջուրը մինչև ցանց հասնելը վարակազերծման, իսկ մակերեսային աղբյուրների ջուրը՝ նաև մաքրման կարիք ունի, սակայն մաքրման սարքավորումների մի մասը արդիական չէ, ուստի մաքրման կայանների վերազինման հարցը մնում է որպես հիմնախնդիր:

Հաճախ չեն ապահովվում խմելու-տնտեսական նշանակության ջրմուղների և ջրամատակարարման աղբյուրների սանիտարական պահպանման խիստ ռեժիմի գոտիները, իսկ երկրորդ և երրորդ գոտիների հիդրոերկրաբանական հաշվարկներ հանրապետությունում փաստացի չեն իրականացվում՝ համապատասխան մեթոդաբանության և ռեսուրսների բացակայության պատճառով: Բացառված չէ, որ երկրորդ և երրորդ գոտիներում ծավալվի այնպիսի տնտեսական գործունեություն, որը հետագայում կհանգեցնի խմելու ջրի ինչպես մանրէային, այնպես էլ քիմիական աղտոտման:

Խմելու ջրի աղբյուր հանդիսացող ջրի որակին ներկայացվող պահանջները վերանայման կարիք ունեն՝ ԵՄ-ի պահանջներին համապատասխան:

Եզրակացություն

1. Չեն ապահովվում ջրամատակարարման կառույցների սանիտարական պահպանման գոտիները:
2. Անբավարար է խմելու ջրի մաքրման և վարակազերծման սարքավորումների տեխնոլոգիական մակարդակը: Խմելու ջրի զգալի մասը դեռևս չի ենթարկվում շարունակական վարակազերծման, իսկ բաց ջրամբարների ջրի մաքրման կառույցները արդիականացման կարիք ունեն:
3. Ջրամատակարարման աղբյուրների երկրորդ և երրորդ գոտիների սահմանագծերը որոշված չեն, ինչը կարող է նպաստել ջրի քիմիական և մանրէային աղտոտմանը:

IV. ՓՈՐՉԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Առաջարկություններ.

- ջրամատակարարման աղբյուրների երկրորդ և երրորդ գոտիների սահմանագծերի որոշման մեթոդաբանության ընդունում և սահմանների որոշման աշխատանքների /քարտեզագրում/ իրականացում,
- խմելու ջրի աղբյուրների սանիտարական պահպանության գոտիների որոշման մեթոդիկայի մշակում և ներդրում, երկրորդ և երրորդ գոտիներում աղտոտման աղբյուրների տեղակայման բացառում,
- խմելու ջրի վերամշակման գոյություն ունեցող տեխնոլոգիաների բարելավում և նոր՝ ժամանակակից տեխնոլոգիաների ներդրում, խմելու ջրի վարակազերծման և մաքրման կառույցների կառուցման և վերակառուցման միջոցառումների մշակում և իրականացում,

- սանիտարական պահպանության գոտիներում ջրի աղտոտման աղբյուրների գործունեության և հետագայում հողօգտագործման թույլտվությունների բացառում,
- ջրի անվտանգության ծրագրի մշակում, տեղայնացում և հաստատում:
- մոնիթորինգի օրինակելի ծրագրի ներդրում,
- ջրի որակի ցուցանիշների համապատասխանեցում ԵՄ դիրեկտիվների պահանջերին՝ խմելու ջրի, ջրի աղբյուրների և ռեկրեացիոն ջրի համար:

Թիրախային ոլորտ XV
Հոդված 6, 2 (ժ), երկրորդ մաս
Լողալու համար օգտագործվող ջրերի որակը

Արձանագրության 6-րդ հոդվածի 2-րդ կետի <<ժ>> ենթակետի երկրորդ մասի համաձայն, պահանջվում է սահմանել թիրախային ցուցանիշներ և նպատակային ժամկետներ լողալու համար օգտագործվող ջրերի որակի նկատմամբ:

I. ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Ա. Ռազմավարություններ, իրավական / կարգավորիչ դաշտ և միջազգային պարտավորություններ

ՀՀ ջրային օրենսգիրք

Հոդված 22. Ազատ ջրօգտագործումը

«ՀՀ բնակչության սանիտարահամաձարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենք

«Ջրերի ստանդարտների սահմանման կանոնակարգերի մասին» ՀՀ կառավարության 2005թ.-ի հուլիսի 28-ի թիվ 1147-Ն որոշում

«Զբոսաշրջության, մարզական և ռեկրեացիոն կարիքների համար ջրային ռեսուրսների օգտագործման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2003 թ.-ի մայիսի 8ի թիվ 756-Ն որոշում

«Լողավազանների կառուցվածքին, շահագործմանը և ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» թիվ 2-III-2.2.4 սանիտարահամաձարակային կանոնները և նորմերը

1,1 Սույն պետական սանիտարահամաձարակային կանոնների և նորմերի (այսուհետ՝ սանիտարական կանոններ) պահանջները տարածվում են ինչպես նոր կառուցվող, վերակառուցվող, այնպես էլ գործող սպորտային և առողջարարական նշանակության լողավազանների, այդ թվում՝ բացօթյա լողավազանների դպրոցական և նախադպրոցական կազմակերպությունների, առողջարարական հիմնարկների, բաղնիքային համալիրների (սաունաների) կազմում գործող լողավազանների վրա:

Լողավազանների կազմում ընդգրկված շենքերին (հանդերձարան, ցնցուղարան, ավազան, սանհանգույց և այլն) ներկայացվող հիգիենիկ պահանջները տարածվում են նաև այլ հասարակական շինությունների կազմում (բաղնիքներ, սաունաներ, սպորտային դահլիճներ և այլն) շահագործվող համանման շենքերի, այդ թվում և սաունաների հովացնող ավազանների վրա:

Բաց ջրավազանների ռեկրեացիոն /հանգստի/ գոտիների և խմելու-տնտեսական նպատակով ջրառի կետերի ջրի որակի դիտարկումները /մանրէաբանական, մակաբուծաբանական, զգայորոշման և սանիտարաքիմիական ցուցանիշներով/ իրականացվում են ՀՀ առողջապահության նախարարության կողմից, որակի չափանիշները որոշվում են ՌԴ «Մակերևութային ջրերի պահպանման հիգիենիկ պահանջներ» թիվ 2.1.5.980-00 սանիտարական նորմերով և կանոններով, իսկ աղտոտող նյութերի պարունակությունը <<Խմելու ջուր. Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ. Որակի հսկողություն>> N2-III-U2-1 սանիտարական նորմերով և կանոններով սահմանված «Վնասակար նյութերի սահմանային թույլատրվող խտությունները տնտեսական, խմելու և կուլտուր-կենցաղային ջրօգտագործման ջրային օբյեկտների ջրերում» ցանկով:

Առկա է հիգիենիկ նորմատիվների լրամշակման, Հայաստանի համար ընդունելի միջազգային պահանջներին համապատասխան գործող նորմերի վերանայման և դրանց ներդրման հիմնախնդիր:

Ջրային ռեսուրսների ափամերձ հանգստի գոտիների պատշաճ կազմակերպումը կարևորվում է ինչպես բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման, այնպես էլ ջրային ռեսուրսի ջրի մաքրության պահպանման տեսանկյունից: Ներկայումս նշված հարցը կանոնակարգող լիարժեք օրենսդրությունը բացակայում է, միայն ՀՀ կառավարության 2008 թ.-ի դեկտեմբերի 18-ի թիվ 1563-Ն «Սևան» ազգային պարկի և դրան հարող տարածքներում հողամասերի վարձակալության, կառուցապատման իրավունքի տրամադրման և քաղաքաշինական գործունեության իրականացման մասին» որոշմամբ սահմանվում են Սևանա լճի լողափերի կազմակերպման պահանջները, լողափի գոտու տարածքի կահավորման և սարքավորումների տարրերի տեխնիկական բնութագրերը:

Բ. Ինստիտուցիոնալ շրջանակները

Պատասխանատու կառույցներ

| | | |
|-------------|-----------------------|---------------|
| Բնակչության | սանիտարահամաճարակային | անվտանգության |
| ապահովումը | ՀՀ կառավարության | 2002 թ.-ի |

օգոստոսի 15-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» թիվ 1300-Ն որոշման համաձայն, ՀՀ առողջապահության նախարարության նպատակներից և խնդիրներից մեկն է (հավելված 1, «7. Նախարարության նպատակները և խնդիրներն են՝... ժբ) հանրային առողջության և բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովումը»): Նախարարությունն իրականացնում է նաև բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովմանն ուղղված պետական քաղաքականության և նպատակային ծրագրերի մշակումը և դրանց իրականացմանն ղիտարկումը և օրենքների ու այլ իրավական ակտերի նախագծերի մշակումը: Նախարարության կազմում ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման բնագավառում համապատասխան գործունեության առարկան և նպատակները ՀՀ կառավարության 25.07.2013թ. թիվ 857-Ն և 17.10.2013թ. թիվ 1134-Ն որոշումներով սահմանված են առողջապահական պետական տեսչության և «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի համար:

Բ. Առարկայական ոլորտին վերաբերող հիմնական խնդիրները

Եզրակացություն

- Բաց ջրավազանների ափամերձ տարածքներում առկա են կենցաղային և վտանգավոր թափոններ:
- Բաց ջրավազաններն աղտոտվում են հանքարդյունաբերության պոչամբարների վթարային արտահոսքերից:
- Անկատար է գործող օրենսդրական բազան, բացակայում են մի շարք նորմատիվ ակտեր:
- Բացակայում է միջճյուղային համակարգումը՝ բաց ջրավազանների պահպանության հարցերում:

IV. ՓՈՐՉՍԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Առաջարկություններ

- Վերանայել և ներդաշնակեցնել Հայաստանում գործող ջրային ռեսուրսների կառավարման առողջապահական նորմատիվների իրավաբանական բազան՝ համապատասխանեցնելով միջազգային պահանջներին և Եվրամիության ստանդարտներին,
- Մշակել բաց ջրավազանների ափամերձ տարածքներում առկա կենցաղային և վտանգավոր թափոնների և հանքարդյունաբերության պոչամբարների վթարային արտահոսքերի վերացման ծրագրեր:

Թիրախային ոլորտ XVI

Հոդված 6, 2 (ժ), երրորդ մաս

Կակղամորթերի և խեցգետնանմանների բուժման համար օգտագործվող ջրի որակը

<<Ջուր և առողջություն>> արձանագրության հոդված 6-ի 2-րդ կետի <<ժ>> ենթակետի երրորդ մասի համաձայն, պահանջվում է սահմանել ձկնաբուծության, այդ թվում փափկամարմինների և խեցգետնակերպերի բուժման համար օգտագործվող ջրի որակի նկատմամբ թիրախային ցուցանիշներ և այդ ցուցանիշներին հասնելու ժամկետներ:

I. ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Ա. Օրենսդրական դաշտ

Հայաստանի Հանրապետությունում ջրատնտեսության ոլորտում բացակայում է ձկնաբուծության, այդ թվում փափկամարմինների և խեցգետնակերպերի բուժման և աճեցման համար անհրաժեշտ ջրերի որակը սահմանող հատուկ նորմատիվային փաստաթուղթը, որը պետք է մշակվեր 1992 թվականի <<Անդրսահմանային ջրահոսքերի և միջազգային լճերի պահպանության և օգտագործման մասին>> կոնվենցիային կից <<Ջրի և առողջության մասին>> արձանագրության հիման վրա:

Այդ իսկ պատճառով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության համապատասխան ստորաբաժանումները ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման և ջրի որակի համապատասխանությունը ստուգելիս, ղեկավարվում են ստորև ներկայացվող ՀՀ կառավարության 2011 թ.-ի հունվարի 27-ի թիվ 75-Ն «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» (Հավելված 3) և ՀՀ կառավարության 2003թ.-ի նոյեմբերի 7-ի թիվ 47-Ն ««Ձկնորսության և ձկնաբուծության մասին» ձև թիվ 1-ձուկ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևը եվ լրացման հրահանգը հաստատելու մասին» որոշումներով:

Հայտնի է, որ ջրային կենդանիների տարբեր խմբերը ջրի որակի ցուցանիշների վերաբերյալ ունեն տարբեր ֆիզիոլոգիական պահանջարկ և օպտիմում:

Բ. Ինստիտուցիոնալ շրջանակները

Ձկնատնտեսության ոլորտի, այդ թվում փափկամարմինների և խեցգետնակերպերի բուծման և աճեցման, ինչպես նաև այդ ոլորտում օգտագործվող ջրերի օգտագործման, կառավարման, պահպանության կարգի և ռեժիմների նկատմամբ հսկողության, ռազմավարության մշակման և ոլորտի կարգավորման համար ՀՀ-ում պատասխանատվություն են կրում՝

- ՀՀ բնապահպանության նախարարության ջրային ռեսուրսների կառավարման և կենսառեսուրսների կառավարման գործակալությունները,
- ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը:

Հարկ է նշել, որ ձկնաբուծության և ձկնաբանության, այդ թվում փափկամարմինների և խեցգետնակերպերի խնդիրների գիտական ուսումնասիրություններով զբաղվում է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնը:

Գ. Ֆինանսական շրջանակները

Փափկամարմինների և խեցգետնակերպերի բուծման համար օգտագործվող ջրի որակի մոնիտորինգի, հսկողության և կառավարման ոլորտում ներկա պահին Հայաստանում մեծամասշտաբ ֆինանսական ներդրումներ չեն իրականացվում, բացառությամբ Սևանա լճում խեցգետնային պաշարների գնահատման համար կատարվող ներդրումների:

II. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԶԿՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ, ԱՅՐ ԹՎՈՒՄ ՓԱՓԿԱՄԱՐՄԻՆՆԵՐԻ և ԽԵՑԳԵՏՆԱԿԵՐՊԵՐԻ ԱՃԵՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՋՐԻ ՈՐԱԿԻ ԱՌԿԱ ՎԻՃԱԿԸ

ՀՀ ջրավազաններում հայտնաբերված է ոսկրային ձկների 5 կարգի 9 ընտանիքի 34 ցեղի 39 տեսակ, որոնցից 36-ը գետերի բնակիչ են, սակայն կարող են բնակվել նաև լճերում և ջրամբարներում: 3 տեսակը՝ իշխանը, սիգը, Սևանի բեղլուն, հանդիպում են միայն Սևանա լճում, երբեմն՝ վերջինիս մեջ թափվող գետակներում: Արարատյան դաշտի և մի շարք այլ ձկնատնտեսություններում աճեցվում են ծածան, սպիտակ ու սև ամուրներ, սպիտակ ու խայտաբղետ հաստաճակատներ և այլն: Ձկների շատ տեսակներ (սիգ, բեղլու, ճանար և այլն) ունեն ձկնաբոյունագործական նշանակություն, իսկ որոշ տեսակներ (հայկական կարմրակն, թեփուղ, արծաթափայլ կարաս և այլն) մարզական որսի օբյեկտներ են:

Ներկայումս Հայաստանում գոյություն ունեն շուրջ 250 ձկնաբուծական տնտեսություններ, որտեղ աճեցվում են հիմնականում ծիածանափայլ և ոսկեգույն իշխան, Գեղարքունի կամ Սևանի իշխան, կարմրափայտ,

սիբիրյանթառափ (Լենայի պոպուլյացիա), Ճապոնական կարպ-կոյ, լոբո, ծածան, սպիտակ և սև ամուր, հաստաճակատ և այլն:

Վերջին տարիներին ձկների արտադրության ծավալներն ավելացել են շուրջ 40% և 2009թ.-ի 5280 տոննայի դիմաց 2012թ.-ին հասել են 8850 տոննայի՝ որոնցից սաղմոնաձկներ՝ 4800տ., թառափաձկներ՝ 1636տ և 2414տ այլ ձկնատեսակներ (կարպ, ծածան, պնդաճակատ, սպիտակ ամուր և այլն):

Հայաստանի Հանրապետության տարածքում փափկամարմիններ չեն բնակվում և դրանց բուծման խնդիրը հանրապետությունում արդիական չէ: Հարկ է նշել, որ Հայաստանում իրականացվում է միայն խեցգետնակերպերի աճեցում: Խեցգետնակերպերի բուծում ձվերից չի իրականացվում՝ տնտեսապես ոչ նպատակահարմարության պատճառով:

Վերջին տարիների ընթացքում Հայաստանում կտրուկ աճել է խեցգետնի արդյունագործական աճեցումը, և, որպես արդյունք, ավելացել է նաև այդ նպատակով օգտագործվող ջրի քանակը և ջրապահանջը:

Խեցգետնի բուծումը, աճեցումը լայն տարածում է ստացել Սևանա լճի ավազանում և Արարատյան դաշտավայրում: Ընդ որում, մանր չափի խեցգետնիները հիմնականում ձեռք են բերվում Սևանա լճի ավազանում և տեղափոխվում Արարատյան դաշտավայրում գտնվող խեցգետնաբուծարաններ, ուր աճեցվում են մինչև արդյունագործական չափերը: Հայաստանում բուծվող միակ տեսակն է Երկարաչանչ խեցգետինը (*Pontastacus leptodactylus Eschscholtz*): Ընդհանուր առմամբ, Սևանա լճի այդ տեսակի արդյունագործական թույլատրված որսի չափերը չեն գերազանցում 500 տոննա/տարի:

Հանրապետությունում խեցգետնակերպերի բուծման համար օգտագործվող ջրի որակի մոնիտորինգ իրականացվում է միայն Սևանա լճի ավազանում ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտի կողմից: Ինստիտուտը մոնիտորինգ իրականացնելիս առաջնորդվում է խեցգետնի գոյության համար պիտանի ջրային էկոհամակարգերի հավելված 4-ում բերված ցուցանիշներով:

IV. ՓՈՐՉԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ելնելով վերոնշյալ տեղեկատվությունից, ակնհայտ է ՀՀ ջրատնտեսությունում(ձկնաբուծությունում) օգտագործվող խեցգետնակերպերի բուծման և աճեցման համար օգտագործվող ջրերի որակը սահմանող հատուկ նորմատիվ փաստաթղթի մշակման անհրաժեշտությունը:

Նպատակահարմար է հատուկ ուշադրություն դարձնել Արարատյան դաշտավայրի ջրային էկոհամակարգերում ձկնատեսակների և խեցգետնակերպերի պաշարների գնահատմանը և դրանց բուծման և աճեցման համար օգտագործվող ջրի որակի ցուցանիշներին և մոնիտորինգին:

Թիրախային ոլորտ XVII

Հոդված 6, 2 (ի)

Ճանաչված լավագույն փորձի կիրառում լողալու համար ընդհանրապես պիտանի պարփակված ջրերի կառավարման գործում

Արձանագրության 6-րդ հոդվածի 2-րդ կետի <<ի>> ենթակետի երկրորդ մասի համաձայն, պահանջվում է սահմանել թիրախային ցուցանիշներ և նպատակային ժամկետներ լողալու համար ընդհանրապես պիտանի պարփակված ջրերի կառավարման գործում ճանաչված լավագույն փորձի կիրառման նկատմամբ:

ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Ա. Ռազմավարություններ, իրավական / կարգավորիչ դաշտ և միջազգային պարտավորություններ

- ՀՀ ջրային օրենսգիրք
- «ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենք
- «Ջրերի ստանդարտների սահմանման կանոնակարգերի մասին» ՀՀ կառավարության 2005թ.-ի հուլիսի 28-ի թիվ 1147-Ն որոշում
- « Լողավազանների կառուցվածքին, շահագործմանը և ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2-III-2.2.4 սանիտարահամաճարակային կանոնները և նորմերը

Բ. Ինստիտուցիոնալ շրջանակները

Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովումը ՀՀ կառավարության 2002 թ.-ի օգոստոսի 15-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» թիվ 1300-Ն որոշման համաձայն, ՀՀ առողջապահության նախարարության նպատակներից և խնդիրներից մեկն է (հավելված 1, «7. Նախարարության նպատակները և խնդիրներն են՝... Ժբ) հանրային առողջության և բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովումը»): Նախարարությունը իրականացնում է նաև բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովմանն ուղղված պետական քաղաքականության և նպատակային ծրագրերի մշակումը և դրանց իրականացման դիտարկումը և օրենքների ու այլ իրավական ակտերի նախագծերի մշակումը: Նախարարության կազմում ՀՀ բնակչության

սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման բնագավառում համապատասխան գործունեության առարկան և նպատակները ՀՀ կառավարության 25.07.2013թ. թիվ 857-Ն և 17.10.2013թ. թիվ 1134-Ն որոշումներով սահմանված են առողջապահական պետական տեսչության և «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի համար:

Այս պահանջների պահպանման համար պատասխանատու են լողավազանը կամ լողալու համար հատուկ առանձնացված վայրերը շահագործող իրավաբանական կամ ֆիզիկական անձինք:

Թիրախ XVIII

Հոդված 6, 2 (լ)

Հատկապես ադոտոված տարածքների հայտնաբերում և մաքրում

Արձանագրության 6-րդ հոդվածի 2-րդ կետի <<լ>> ենթակետի համաձայն, պահանջվում է սահմանել թիրախային ցուցանիշներ և նպատակային ժամկետներ արձանագրության իրավասության սահմաններում գտնվող ջրային ռեսուրսների և օբյեկտների վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող և այդպիսով ջրի հետ կապված հիվանդությունների առաջացման վտանգի հնարավոր աղբյուր հանդիսացող հատկապես ադոտոված վայրերի հայտնաբերման և մաքրման նկատմամբ:

Ա. Ռազմավարություններ, իրավական / կարգավորիչ դաշտ և միջազգային պարտավորություններ

- ՀՀ սահմանադրությունը
- ՀՀ ջրային օրենսգիրքը
- ՀՀ <<Ջրի ազգային ծրագրի մասին>> օրենքը
- ՀՀ օրենքը <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին>>
- ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքը
- ՀՀ կառավարության 2011թ.-ի հունվարի 27-ի թիվ 75-Ն <<Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին>> որոշումը
- ՀՀ կառավարության 2005թ.-ի հունվարի 25-ի թիվ 76-Ն <<Ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության արտակարգ իրավիճակի ռեժիմներ սահմանելու կարգի, հրահանգների և բնակչությանը մատակարարվող խմելու ջրի նվազագույն չափաքանակների, ինչպես նաև ջրային համակարգի կառավարչի կրած վնասների փոխհատուցման կարգի մասին>> որոշումը
- <<Շրջակա միջավայրի հարցերի առընչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին>> 1998թ.-ի Օրհուսի կոնվենցիան

Բ. Ինստիտուցիոնալ շրջանակները

- ՀՀ բնապահպանության նախարարություն
- ՀՀ առողջապահության նախարարություն
- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն

Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոց. 1982թ.-ին Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոցում թաղվել է 500 տոննայից ավել ժամկետանց և արգելված թունաքիմիկատ, որոնցից ավելի քան 60%-ը եղել են քլորօրգանական կայուն միացություններ (ԴԴՏ, ՀՔՑՀ և այլն): Գերեզմանոցը պատկանում է Երևանի Էրեբունի համայնքին և գտնվում է Մուշավան գյուղի և ամառանոցային ավանի մոտակայքում: Այն ունի մոտավորապես 15մ լայնություն, 120 մ երկարություն և 3 մ խորություն:

Գերեզմանոցի հիմնախնդիրը 12 տարի շարունակ գտնվել է <<Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի>> հասարակական կազմակերպության ուշադրության կենտրոնում, քանի որ այն կառուցված է եղել ակտիվ սողանքային գոտում:

Վերջին տարիներին կազմակերպության կողմից իրականացված լաբորատոր հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ գերեզմանոցի շրջակայքից վերցրած հողի նմուշները պարունակում են բարձր խտություններով կայուն օրգանական աղտոտիչներ: Այն բանից հետո, երբ կազմակերպությունն ահազանգեց թունաքիմիկատների գերեզմանոցի վտանգավորության մասին, ՀՀ կառավարությունը, գերեզմանոցի անվտանգության ապահովման նպատակով, ձեռնարկեց ժամանակավոր բնույթի մի շարք միջոցառումներ (ցանկապատում, ջրահեռացման համակարգի ստեղծում, ճահճային տարածքի վերացում և այլն): Սակայն, ձեռնարկված միջոցառումները չապահովեցին թունաքիմիկատների գերեզմանոցի անվտանգությունը:

2010թ.-ի մարտի սկզբներին անհայտ անձինք, ծանր տեխնիկայի գործադրմամբ, քանդել էին գերեզմանոցը, որի հետևանքով տարբեր աստիճանի վտանգավորության թունաքիմիկատներ մեծ քանակությամբ հայտնվել էին գերեզմանոցին մակերեսին և դրա շուրջը: Տարածման տարածքը մոտավորապես կազմել է 100 x 30մ²:

Գարնանային հորդառատ անձրևների ժամանակ, անձրևաջրերը, ողողելով թունաքիմիկատներով աղտոտված տարածքը, հոսել են ցած և աղտոտել մոտակա բնակավայրերի հողը, բուսականությունը և ջուրը: Ավելին, աղտոտված ջրերը, թափվելով Գետառ և Հրագդան գետերը, վերջին հաշվով կարող են առաջացնել Արաքս և Քուռ միջսահմանային գետերի աղտոտվածություն:

Կառավարությունն ընդունեց որոշում, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության ներքո ստեղծվեց միջկառավարական աշխատանքային խումբ և տրամադրվեց բյուջե՝ գերեզմանոցի ժամանակավոր ծածկումն իրականացնելու համար՝ մինչև հարցի վերջնական լուծումը: Համաձայն այդ որոշման, կառավարությունն 2010թ.-ի հունիսին ավարտին հասցրեց գերեզմանոցի անվտանգությունն ապահովող միջոցառումների

իրականացումը. քանդված գերեզմանոցը ծածկվեց պաշտպանիչ շերտով և ցանկապատվեց, վերակառուցվեց հեղեղատարը, ինչպես նաև սահմանվեց պահակային ծառայություն: Նոր ծածկն ունի 30մ լայնություն և 130մ երկարություն:

Մակերեսային ջրեր. Այդ ժամանակահատվածում հետազոտվել են գերեզմանոցից ավելի ցածր գտնվող վտակից վերցրած նստվածքի նմուշները, և 4կմ հոսանքն ի վար հայտնաբերվել են ԴԴՏ-ի իզոմերների բարձր քանակներ:

Ստորերկրյա ջրեր: Պարզ չեն թունաքիմիկատների միգրացիայի ուղիները, հայտնի չէ, արդյոք ստորերկրյա ջրերը երթարկվում են աղտոտման, չի իրականացվել հետազոտություն մարդու առողջության վրա հնարավոր ազդեցության վերաբերյալ:

Այժմ ԵԱՀԿ երևանյան գրասենյակի, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի և Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի աջակցությամբ իրականացվում է իրավիճակի գնահատում և լուծումների առաջարկում¹⁴:

Բնապահպանության նախարարության մոնիտորինգի կենտրոնը իրականացնում է մակերևութային ջրերի որակի մշտադիտարկում:

2012թ. –ին մակերևութային ջրերի նմուշառ կատարվել է հանրապետության 47 ջրային օբյեկտի 157 դիտակետում: Վերցված 1080 փորձանմուշում որոշվել է 44-49-ական ցուցանիշ: Ընդհանուր առմամբ, որոշվել է 48600 ցուցանիշ:

ՀՎԾ–ն ներկայացնում է տվյալներն ըստ աղտոտիչների, ՍԹԿ-ն գերազանցող դեպքերի քանակը, միջին տարեկան կոնցենտրացիայի գերազանցումները ՍԹԿ-ից և այլ տվյալներ:

Սևանա լիճ: Սևանա լիճը գտնվում է Գեղարքունիքի մարզում, մոտ 1.900մ ծովի մակարդակից բարձրության վրա: Ավազանի ընդհանուր մակերեսը կազմում է 1275,0 կմ² (առ 31.12.2011)¹⁵ (ՀՎԾ 2012թ.) Այն սնվում է 28 գետերից ու հոսքերից:

ՀՎԾ-ի տվյալների համաձայն, Սևանա լիճ թափվող բազմաթիվ գետերում ծանր մետաղների և աղտոտող նյութերի խտությունը գերազանցում է թույլատրելի չափանիշը:

2012թ.-ին Սևանա լճում ծանր մետաղների և աղտոտող նյութերի ամենամեծ գերազանցումները ՍԹԿ-ից եղել է.

¹⁴ AWHHE

¹⁵ <http://armstat.am/file/doc/99471428.pdf>

ՄԹԿ-ն գերազանցող դեպքերի քանակը Փոքր Սևանում. վանադիում՝ 104 անգամ, մագնեզիում՝ 84, սելեն՝ 85:

ՄԹԿ-ն գերազանցող դեպքերի քանակը Մեծ Սևանում. վանադիում՝ 59 անգամ, մագնեզիում՝ 39, պղինձ՝ 19, սելեն՝ 37:

Միջին տարեկան կոնցենտրացիայի գերազանցումները ՄԹԿ-ից Փոքր Սևանում. վանադիում՝ 6,4, մագնեզիում՝ 1.2, սելեն՝ 2.6:

Միջին տարեկան կոնցենտրացիայի գերազանցումները ՄԹԿ-ից Մեծ Սևանում. վանադիում՝ 6,2, մագնեզիում՝ 1.1, պղինձ՝ 2,1, սելեն՝ 2.1:

Ըստ հիդրոէկոլոգիայի և ձկնաբուծության ինստիտուտի հետազոտությունների, Սևանա լիճ թափվող գետերի ջուրը գետաբերանում գնահատվում է՝¹⁶

- Վարդենիկ՝ խիստ աղտոտված,
- Գավառագետ՝ չափավոր աղտոտված,
- Լիճք՝ թույլ աղտոտվածից մինչ չափավոր,
- Մասրիկ, Ձկնագետ՝ թույլ աղտոտված,
- Արփա-Սևան թունելից՝ շատ մաքուր:

Մասրիկ գետի աղտոտումը կապվում է Սողքի ոսկու հանքավայրի շահագործման հետ, քանի որ գետի ջուրն ավելի աղտոտված է գետաբերանում: Վերոհիշյալ ծանր մետաղներից բացի, գետի նստվածքային նմուշներում հայտնաբերվել են նաև բարձր քանակներով, արծաթ, կոբալտ և ոսկի:

Ձորագետ. Վտանգի առջև է կանգնել նաև Ձորագետ գետը: Ձորագետ գետը, որը Ստեփանավանի տարածաշրջանի համար կարևոր է ոչ միայն էկոտորիզմի զարգացման, հանգստի և յուրահատուկ էկոհամակարգի պահպանման առումով, նաև գյուղատնտեսական հողերի ոռոգման միակ աղբյուրն է: Լինելով անդրսահմանային Դեբեդ գետի ամենամեծ վտակը, աղտոտում է նաև Դեբեդի ջրերը¹⁷:

Ըստ ՀՎԾ-ի 2012թ.-ի տվյալների, գետում ծանր մետաղների և աղտոտող նյութերի ամենամեծ գերազանցումները ՄԹԿ-ից եղել են.

ՄԹԿ-ն գերազանցող դեպքերի քանակը ք. Ստեփանավանից 0,5կմ վերև՝ այլումին՝ 7 անգամ, վանադիում՝ 9, քրոմ՝ 4, մանգան՝ 5, պղինձ՝ 4, ցինկ՝ 4, սելեն՝ 2:

ՄԹԿ-ն գերազանցող դեպքերի քանակը գետաբերանում՝ այլումին՝ 9 անգամ, վանադիում՝ 12, քրոմ՝ 7, մանգան՝ 8, պղինձ՝ 10:

¹⁶ Danielyan K., Gabrielyan B., Minasyan S. et al (2011). General assessment of ecological situation of Lake Sevan: GEO – Lake Sevan. Available at: <http://www.grida.no/files/publications/sevan-report---fin.pdf>

¹⁷ Ecolore NGO

Միջին տարեկան կոնցենտրացիայի գերազանցումները ՍԹԿ-ից ք. Ստեփանավանից 0,5կմ վերև՝ ալյումին՝ 8, վանադիում՝ 6,1, քրոմ՝ 1,6, մանգան՝ 4,2, պղինձ՝ 32,6 ցինկ՝ 7,6, սելեն՝ 1,2:

Միջին տարեկան կոնցենտրացիայի գերազանցումները ՍԹԿ-ից գետաբերանում՝ ալյումին՝ 5,4 անգամ, վանադիում՝ 4,5, քրոմ՝ 1,2, մանգան՝ 2,8, պղինձ՝ 4,3:

Ողջի գետ. Աղտոտումը կապվում է լեռնահանքային արդյունաբերության գործունեության հետ: Ըստ ՀՎԾ-ի տվյալների, ծանր մետաղների և աղտոտող նյութերի ամենամեծ գերազանցումները ՍԹԿ-ից եղել են.

1. ՍԹԿ-ն գերազանցող դեպքերի քանակը գետի տարբեր հատվածներում հասել է մինչև. ալյումին՝ 9 անգամ, քրոմ՝ 9, պղինձ՝ 12, մանգան՝ 9, սելեն՝ - 11:
2. միջին տարեկան կոնցենտրացիայի գերազանցումները ՍԹԿ-ից. ալյումին՝ 2,1, քրոմ՝ 3,0, պղինձ՝ 5,5, մանգան՝ 2,7, սելեն՝ - 3,9:

Ախթալա գետի գետաբերանում միջին տարեկան կոնցենտրացիայի գերազանցումները ՍԹԿ-ից գետի տարբեր հատվածներում կազմել է մանգանի համար՝ 84,7 անգամ, ալյումին՝ 45,2, պղնձինը՝ 465,8, ցինկինը՝ 337,1: **Որոտան գետում** բարձր է հատկապես վանադիումի քանակները և միջին տարեկան կոնցենտրացիան ՍԹԿ -ն գերազանցել է - 18 անգամ:

ՓՈՐՉԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

- Իրականացնել գետերին մոտ գտնվող լեռնաարդյունաբերության հետ կապված վտանգավոր գոտիների գնահատում
- Իրականացնել պոչամբարներից դեպի գետ թափվող ջրերի գնահատում
- Ավելացնել պոչամբարների մոտ մոնիտորինգային կետերը
- Թունաքիմիկատների գերեզմանոցի վերացման միջոցառումների պլանի մշակում

Թիրախային ոլորտ XIX

Հոդված 6, 2 (խ)

Ջրային ռեսուրսների կառավարման, զարգացման, պահպանման և օգտագործման համակարգերի արդյունավետությունը

<<Ջուր և առողջություն>> արձանագրության հոդված 6-ի 2-րդ կետի <<խ>> ենթակետի համաձայն, պահանջվում է սահմանել ջրային ռեսուրսների կառավարման, զարգացման, պահպանման և օգտագործման համակարգերի արդյունավետության նպատակով օգտագործվող կեղտաջրերի որակի նկատմամբ թիրախային ցուցանիշներ և այդ ցուցանիշներին հասնելու ժամկետներ:

Օրենսդրական դաշտ

Հայաստանի Հանրապետությունում ջրային ռեսուրսների կառավարման ոլորտի բարեփոխումները սկսվել են 1999-2000թթ. Համաշխարհային բանկի աջակցությամբ մշակված «Ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման ծրագրի» իրականացումից: Ծրագրի իրականացման արդյունքում գնահատվել են հանրապետության ջրային ռեսուրսները, առաջարկվել է կառավարման կառուցվածքային բարեփոխումների ծրագիր, ինչպես նաև ձևավորվել են ջրերի առաջարկի և պահանջարկի կառավարման ուրվագծերը: Առաջարկվել է նաև գետավազանային կառավարման գաղափարը՝ ջրային ռեսուրսների տարեկան և հեռանկարային պլանավորման մեխանիզմի ներդրմամբ:

Հաշվի առնելով «Ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման ծրագրի» առաջարկությունները, 2001թ.-ին ՀՀ կառավարությունը նախաձեռնեց երկրի ջրային ոլորտի կառավարման արդիականացմանը նպատակաուղղված ծրագիր, վերանայեց գործող իրավական դաշտը և հստակեցրեց ինստիտուցիոնալ հիմքերը: Այս ամենն ամրագրվեց 2001թ. փետրվարին ՀՀ կառավարության կողմից ընդունված «Հայաստանի ջրային ոլորտի բարեփոխումների հայեցակարգի մասին» թիվ 92 որոշմամբ:

Այդ ամենին հաջորդեց նոր **ջրային օրենսգրքի** ընդունումը 2002թ. հունիսի 4-ին, որը հիմք հանդիսացավ բազմաթիվ օրենսդրական բարեփոխումների, ընդունվեցին՝

«Ջրի ազգային քաղաքականության մասին» ՀՀ օրենքը /2005թ./,

«Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» (ՋԱԾ) ՀՀ օրենքը (2006թ.),

ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 3-ի «Ջրավազանային կառավարման մոդելային պլանի բովանդակությունը հաստատելու մասին» արձանագրային նիստի թիվ 4 որոշումը,

2011թ. հունվարի 27-ի թիվ 75-Ն «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշումը:

Ինստիտուցիոնալ շրջանակները

Նոր ջրային օրենսգրքի ընդունմամբ ներդրվեց նոր ինստիտուցիոնալ համակարգ, որի համաձայն, ոլորտի կառավարումը իրականացվում է հետևյալ մարմինների կողմից՝

- ՀՀ բնապահպանության նախարարության ջրային ռեսուրսների կառավարման գործակալությունը, որի կազմում գործում է 6 ջրավազանային տարածքային կառավարման բաժին,
- ՀՀ տարածքային կառավարման նախարարության բային տնտեսության պետական կոմիտեն,
- Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը:

Երկրում ջրերի կառավարմանն աջակցելու նպատակով տարբեր նախարարությունների ենթակայության մի շարք գործակալություններ մոնիտորինգի տվյալներ են տրամադրում որոշում կայացնողներին:

Աղյուսակ 25. Հայաստանում մոնիտորինգի համար պատասխանատու գերատեսչությունները

| Մոնիտորինգի գործառնություններ | Պատասխանատու գերատեսչություն | Նախարարություն |
|--|--|-----------------------|
| Մակերևութային ջրի քանակ | Հայաստանի հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայություն | Արտակարգ իրավիճակների |
| Մակերևութային ջրի որակ | Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն | Բնապահպանության |
| Ստորերկրյա ջրի քանակ և որակ | Հիդրոերկրաբանական մոնիտորինգի կենտրոն | Բնապահպանության |
| Խմելու ջրաղբյուրներ և որակ | Պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչություն | Առողջապահության |
| Ջրօգտագործում և աղտոտիչների արտանետում | Բնապահպանական պետական տեսչություն | Բնապահպանության |


Ի լրումն մոնիտորինգի գերատեսչությունների՝ մի շարք այլ կազմակերպություններ նույնպես իրենց գործունեությունում ներառում են ջրի կառավարման ասպեկտներ:

Ջրի ազգային խորհրդի վեճերը լուծող հանձնաժողովը,

Գյուղատնտեսության, էներգետիկայի և բնական ռեսուրսների, ֆինանսների, արտակարգ իրավիճակների նախարարությունները:

Սկսած 2004թ.-ից՝ Հայաստանում ստեղծվել է 42 ջրօգտագործողների ընկերություն, որոնք պատասխանատու են ոռոգման համակարգերի շահագործման համար:

Ստորև ներկայացվող դիագրամը (նկար 2) ամփոփում է ՀՀ կառավարության նախարարությունների և գերատեսչությունների կազմակերպչական կառուցվածքը, որոնք պատասխանատու են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի կառավարման, օգտագործման, պահպանության և մոնիտորինգի տարբեր ասպեկտների համար:



Նկար 2 – Հայաստանում ջրերի կառավարման ինստիտուցիոնալ շրջանակը

Ջրային պետական կադաստրի տեղեկատվական համակարգ

ՀՀ ջրային օրենսգիրքը ջրային պետական կադաստրը (ՋՊԿ) սահմանում է որպես «մշտապես գործող համակարգ, որը համապարփակ տվյալներ է

գրանցում ջրային ռեսուրսների քանակական ու որակական ցուցանիշների, ջրհավաք ավազանների, ջրավազանների հուններից ու ավերից արդյունահանվող նյութերի, կենսառեսուրսների կազմի ու չափաքանակների, ջրօգտագործողների, ջրօգտագործման թույլտվությունների և ջրային համակարգերի օգտագործման թույլտվությունների մասին»:

Համաձայն ջրային օրենսգրքի՝ ՋՊԿ-ն պետք է կուտակի և տրամադրի տվյալներ հետևյալի մասին՝

- ջրային ռեսուրսների քանակական ինդեքսներ՝ ներառյալ տվյալ ձյան ծածկի վերաբերյալ,
- ջրային ռեսուրսների որակական տվյալներ,
- ջրային ռեսուրսների օգտագործման արդյունավետություն,
- ջրային ռեսուրսների վրա մարդածին ազդեցության արդյունքները՝ ներառյալ աղտոտումը,
- կեղտաջրեր և դրանցում աղտոտիչների բաղադրությունը և քանակները,
- ջրային ռեսուրսների վերականգնում,
- հեղեղումների, սելավների և երաշտների վերաբերյալ կանխատեսումներ,
- ջրային էկոհամակարգերի պահպանման գոտիներ և դրանց կարգավիճակները,
- մթնոլորտային տեղումներ և մթնոլորտային ջերմաստիճանի ռեժիմ,
- ջրօգտագործման թույլտվություններ և ջրային համակարգերի օգտագործման թույլտվություններ,
- Ջրի ազգային ծրագրի իրականացում:

2003թ. ՀՀ կառավարության թիվ 1060-Ն որոշմամբ հաստատվել է ջրային պետական կադաստրում փաստաթղթերի գրանցման և տեղեկատվության տրամադրման կարգը: Ի լրումն ջրային պետական կադաստրի վարման կարգը սահմանող նորմատիվ փաստաթղթի՝ մշակվել և ՀՀ բնապահպանության նախարարի 30.12.2003թ. թիվ 514-Ն հրամանով հաստատվել է «Ջրային պետական կադաստրում տվյալների գրառման գրանցամատյանների ձևերը և դրանց վարման կարգը», որը 2006թ. փոփոխվել և լրացվել է ՀՀ բնապահպանության նախարարի թիվ 260-Ն հրամանով:

Ջրային պետական կադաստրի վարումն իրականացնում է ՀՀ բնապահպանության նախարարության ջրային ռեսուրսների կառավարման գործակալությունը, որը հավաքում, համախմբում և պահպանում է ջրային

ռեսուրսների վերաբերյալ ողջ տեղեկատվությունը պաշտոնական շտեմարանում:

2004-2008թթ. ընթացքում ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող «Հայաստանի ջրային ոլորտի ինստիտուցիոնալ և օրենսդրական հզորացում» ծրագիրն աջակցեց ՀՀ կառավարությանը՝ ստեղծելու ջրային պետական կադաստրի տեղեկատվական համակարգ (ՋՊԿՏՀ)՝ համաձայն ջրային օրենսգրքի և դրա վերաբերյալ կառավարության թիվ 1060-Ն որոշման դրույթների: ՋՊԿՏՀ նպատակներն են՝ ապահովել.

- ինտերակտիվ գործիք, որը հնարավորություն կտա մշակելու ջրային ռեսուրսների տարածական տվյալներն աշխարհագրական տեղեկատվական համակարգերի (ԱՏՀ) ֆորմատով, ինչպես նաև տվյալների բազայի բարելավման համակարգ շահագրգիռ հաստատությունների միջոցով տրամադրված ամփոփ տեղեկատվության համար,
- տարբեր մասշտաբի քարտեզներ, որոնք ներկայացնում են կառավարման տարբեր մակարդակներ՝ ազգային, գետավազանային և տեղանքային, և որոնք առկա և մատչելի են լազերային սկավառակների վրա փոփոխության և վերլուծության համար,
- յուրաքանչյուր շահագրգիռ հաստատության ջրային ռեսուրսների տվյալների բազայի թվային շտեմարան, շահագրգիռ հաստատություններում մի շարք վերապատրաստված մասնագետներ, ովքեր ակտիվորեն ներգրավված են տվյալների բազաների կառավարման և ԱՏՀ գործունեությունում:


ՋՊԿՏՀ-ն բաղկացած է տվյալների կենտրոնացված շտեմարանից, որը շահագործվում և պահպանվում է ՋՌԿԳ-ի կողմից, և որը կուտակում է ջրային ռեսուրսների ազգային մակարդակով աղյուսակային և տարածական տվյալներ, ինչպես նաև շահագրգիռ հաստատություններում երեք բազայից, որոնք հնարավորություն ունեն տվյալներն արտահանելու տվյալների շտեմարան:

ՋՊԿՏՀ-ի հիմնական գաղափարներն ամփոփվում են ստորև.

- ՋՊԿՏՀ-ն ներառում է ինչպես տարածական, այնպես էլ աղյուսակային տվյալներ և օգտագործում է տվյալների հարաբերական բազայի մոդելը և պատվիրատու-սերվեր ճարտարագիտությունը,
- տվյալների շտեմարանն օգտագործում է ջրային օբյեկտների կոդավորման ընդհանուր համակարգ (ERICA©)՝ շահագրգիռ հաստատությունների տվյալները միմյանց կապելու և տեղեկատվական համակարգի ջրային օբյեկտների աշխարհագրական հղումներն ապահովելու նպատակով (աղյուսակ 27-ը),

- ՋՊԿՏՀ-ն հեշտացնում է տվյալների/տեղեկատվության պարբերական փոխանակումը շահագրգիռ հաստատությունների միջև,
- շահագրգիռ կազմակերպությունները համաձայնեցնում են միմյանց միջև փոխանակվող տվյալների բազմությունը, ինչպես նաև տվյալների շտեմարանին ներկայացվող ամփոփ տեղեկատվության շրջանակը:

ՋՊԿՏՀ ճարտարապետության համակարգը ներկայացվում է ստորև տրվող դիագրամում:



Նկար 3 – Ջրային պետական կադաստրի տեղեկատվական համակարգի սխեմատիկ կառուցվածքը¹⁸

Աղյուսակ 27.– ՋՊԿՏՀ-ում ներգրավված առանցքային շահագրգիռ հաստատությունները

| Շահագրգիռ գերատեսչություն | Առկա տվյալներ |
|---|---|
| Ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն, ՀՀ բնապահպանության նախարարություն | Ջրառի և ջրահեռացման տվյալներ, ջրօգտագործման թույլտվությունների տվյալներ |
| Հայաստանի հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայություն, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն | Մակերևութային ջրի քանակի տվյալներ |
| Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն, ՀՀ բնապահպանության նախարարություն | Մակերևութային ջրի որակի տվյալներ |

¹⁸ ՀՀ բնապահպանության նախարարություն 2012. Ջրերի կառավարման ոլորտի բարեփոխումների տասնամյան փորձը դեպի ԵՄ Ջրի շրջանակային դիրեկտիվ

Այդուհանդերձ, ՋՊԿՏՀ-ն Հայաստանում տվյալների կառավարման և փոխանակման նոր մոտեցում է: Հաստատություններից շատերն ամբողջովին չեն ընդունում «բաց» մատչելիության գաղափարը: Չնայած ջրային ռեսուրսների տվյալները ներկայումս առկա են ՋՊԿ տվյալների շտեմարանի միջոցով, սակայն տվյալների փոխանակումը բոլոր հաստատությունների և հանրության միջև դեռևս չի իրականացվում: Ավելին, յուրաքանչյուր հաստատություն ինքն է որոշում փոխանակել տվյալներ, թե ոչ: Օրինակ, ՀՀ բնապահպանության նախարարությունը վերջերս որոշել է, որ ՋՊԿ-ի տվյալներն առցանց ռեժիմով տրամադրելու անհրաժեշտություն չկա: Արդյունքում, ՋՌԿԳ-ի նախկին կայքէջը (www.wrma.am) ներկայումս չի գործում:

Կա շտապ անհրաժեշտություն ընդունելու և ՋՊԿ շահագրգիռ հաստատությունների միջև իրականացնելու տվյալների հոսքի և տեղեկատվության փոխանակման նոր ընթացակարգեր: Տվյալների փոխանակման հաճախականությունը անհրաժեշտ է տարեկանից դարձնել եռամսյակային այնպես, որ ՋՌԿԳ-ն ի վիճակի լինի ավելի հաճախակի թարմացնելու ՋՊԿ-ն:

Անհրաժեշտ «Երկրորդ սերնդի» բարեփոխումներ

Չնայած Հայաստանում ջրային ոլորտի օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումների էական առաջընթացին, դեռևս շատ մարտահրավերներ կան, որոնց պետք է անդրադարձ կատարվի: Այդ մարտահրավերներն առնչվում են օրենսդրական դաշտին, ջրային հաստատություններին, ինչպես նաև ջրային պետական կադաստրի միջոցով ժամանակակից տեղեկատվության վարմանը: Հիմնականում վերոնշյալ թերությունների պատճառով «Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի փուլային միջոցառումների ծրագրում ներառված կարճաժամկետ միջոցառումներից շատերը (որոնք պետք է իրականացվեին մինչև 2010թ.) դեռևս չեն իրականացվել, ինչպես ցույց է տրվում հավելված 5-ում:

Վերոնշյալ հավելվածից երևում է, որ անհրաժեշտություն կա իրականացնելու ջրերի կառավարման ոլորտի «երկրորդ սերնդի» բարեփոխումներ, որպեսզի հնարավորություն տրվի արդեն ստեղծված ջրավազանային տարածքային կառավարման բաժիններին (ՋՏԿԲ) դառնալու լիազոր մարմին, որն ամբողջովին ի վիճակի կլինի իրականացնելու ազգային մակարդակով մշակված գետավազանային կառավարման պլանները և հետագայում լրամշակելու դրանք: ՋՏԿԲ-ների դերերը և պարտականություններն ավելի հստակ սահմանելու համար հարկ կլինի իրականացնել օրենսդրական փոփոխություններ, ինչպես նաև ցուցաբերել համապատասխան աջակցություն ինստիտուցիոնալ և տեխնիկական

հզորությունների զարգացման համար՝ օգտագործելով ինչպես երկրում առկա
ռեսուրսները, այնպես էլ միջազգային տեխնիկական աջակցությունը:

Թիրախային ոլորտ XX
Հոդված 6, 2 (ծ)

Մատակարարվող խմելու ջրի և այլ ջրերի որակի վերաբերյալ տեղեկատվության հրապարակման հաճախականությունը

Երկրները պետք է սահմանեն մատակարարվող խմելու ջրի և սահմանված թիրախներին համապատասխան այլ ջրերի որակի վերաբերյալ տեղեկատվության հրապարակման հաճախականությունը՝ տեղեկատվության հավաքագրման, նպատակային ցուցանիշներին հասնելու առաջընթացի գնահատման և ժամկետների վերաբերյալ: Նման հրապարակումը պետք է տեղի ունենա յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ, ինչպես որոշվում է արձանագրության կողմերի խորհրդակցությամբ:

I. ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Ա. Ռազմավարություններ, իրավական / կարգավորիչ դաշտ և միջազգային պարտավորություններ

Ոլորտը կարգավորող հիմնական օրենքներից են՝

- Հայաստանի Հանրապետության սահմանադրությունը
- ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքը
- Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգիրքը:

- Գլխավոր կիրառելի միջազգային պարտավորությունները (բացառությամբ ՄԱԿ-ի ԵՏՀ-ի կոնվենցիաներով և արձանագրություններով սահմանված պարտավորությունների)

Հայաստանի Հանրապետությունը <<Շրջակա միջավայրի հարցերի առընչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին>> 1998թ.-ի Օրհուսի կոնվենցիան վավերացրել է 2001թ.-ի մայիսի 14-ին:

Հայաստանի Հանրապետությունը 1992թ. ընդունված ՄԱԿ-ի ԵՏՀ-ի <<Անդրսահմանային ջրային հոսքերի և միջազգային լճերի պաշտպանության և օգտագործման մասին կոնվենցիային>> (Ջրային կոնվենցիա) կից <<Ջուր և առողջություն>> արձանագրությունը ստորագրել է 1999թ. հունիսի 17-ին, Լոնդոնում, Բայց դեռ չի վավերացրել:

Բ. Ինստիտուցիոնալ շրջանակները

- Կիրարկման և իրականացման համար պատասխանատու մարմինները (ներառյալ՝ պարտականությունները, իր ֆինանսական և մարդկային ռեսուրսների կարողությունների գնահատումը, համակարգման միջոցառումների գնահատումը և մյուս իրավաբանական անձանց հետ համագործակցության մակարդակը)

«Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 13-րդ հոդվածի կետ 1-ում սահմանված է <<1. Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձը կարող է լինել տեղեկատվություն տնօրինողի նշանակած պաշտոնատար անձը կամ տեղեկատվություն տնօրինողի ղեկավարը>>:

Սույն օրենքի 9-րդ հոդվածով սահմանվում է նաև տեղեկատվության տրամադրման ժամկետները:

II. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ/ ԿԱՍ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ. ՆԵՐԿԱՅԻՍ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Ա. Մոնիտորինգային ծրագրեր և ցուցանիշներ

ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեն իր էլեկտրոնային կայքի վրա ներկայացնում է տեղեկատվություն՝ ոլորտում կատարված աշխատանքների վերաբերյալ (www.scws.am):

ՀՀ տարածքում կենտրոնացված կարգով խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ոլորտներում գործում է 5 խոշոր ջրամատակարարման և ջրահեռացման ծառայուհներ մատուցող կազմակերպություն:

- <<Հայջրմուղկոյուղի>> ՓԲԸ-ն սպասարկում է 305 քաղաքային և գյուղական համայնքներ. հրապարակում է տարեկան և եռամսյակային հաշվետվություններ, որտեղ ներառված են տվյալներ նաև ջրի հետազոտությունների և որակի վերաբերյալ: Հաշվետվությունները տեղադրվում են կազմակերպության էլեկտրոնային կայքի վրա (www.armwater.am):
- <<Երևան Ջուր>> ՓԲԸ-ն սպասարկում է Երևան քաղաքի և շրջակա մի քանի գյուղերի ջրային համակարգերը. կազմակերպությունը հրապարակում է տարեկան հաշվետվություններ: Հաշվետվությունները տեղադրվում են կազմակերպության էլեկտրոնային կայքի վրա (www.veoliadjur.am): Հաշվետվության մեջ,

սակայն, խիստ սահմանափակ տեղեկատվություն կա ջրի որակի վերաբերյալ:

- <<Լորի-ջրմուղկոյուղի>> ՓԲԸ-ն սպասարկում է Վանաձոր քաղաքը և հարակից գյուղական համայնքները (www.loriwater.am):
- <<Շիրակ-ջրմուղկոյուղի>> ՓԲԸ-ն սպասարկում է Գյումրի և Մարալիկ քաղաքները, ինչպես նաև հարակից գյուղական համայնքները: Ներկայացված է ամսեկան հաշվետվություն խմելու ջրի որակի վերաբերյալ, աղյուսակի տեսքով, կազմակերպության կայքի վրա (www.shirakjk.am):
- <<Նոր Ակունք>> ՓԲԸ-ն սպասարկում է Արմավիր և Մեծամոր քաղաքները, ինչպես նաև հարակից գյուղական համայնքները (www.norakunq.am):

ՀՀ բնապահպանության նախարարության <<Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն>> ՊՈԱԿ-ը ջրային ավազանի աղտոտվածության վերաբերյալ մանրամասն տվյալները ներկայացնում է ամսեկան և տարեկան կտրվածքով՝ իր էլեկտրոնային կայքի վրա (www.armmonitoring.am): Ըստ ծրագրի կատարվում է հանրապետության մակերևութային ջրերի՝ մեծ և միջին մեծության 39 գետի, 6 ջրամբարի և Սևանա լճի ջրաքիմիական ռեժիմային դիտարկումներ 131 դիտակետում՝ տարվա ընթացքում 7-12 անգամ հաճախականությամբ: Մակերևութային ջրերի աղտոտվածության որոշման և գնահատման համար վերցված փորձանմուշներում որոշվում է մինչև 65 ցուցանիշ (ջրաքիմիական հիմնական բաղադրիչներ, ծանր մետաղներ, քլորօրգանական պեստիցիդներ և այլն): Նույն տեղեկատվությունը մշակված տարբերակով ներկայացնում է նաև բնապահպանության նախարարությունը (www.mnp.am):

<<Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն>> ՊՈԱԿ-ի ջրային ավազանի աղտոտվածության վերաբերյալ տվյալները տարեկան կտրվածքով իր էլեկտրոնային կայքի վրա է ներկայացնում նաև ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը (www.armstat.am):

Խմելու ջրի վերաբերյալ տեղեկատվությունն այն 560 համայնքի մասին, որոնք չեն սպասարկվում ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող կազմակերպությունների կողմից, հասանելի չէ:

Մարդկանց առողջության վերաբերյալ ցուցանիշները հասանելի են առողջապահության նախարարության (www.moh.am) և առողջապահության տեղեկատվական-վերլուծական հանրապետական կենտրոնի (<http://www.healthinfo.am>) ինտերնետային կայքերում:

Որպես լողափեր ծառայում են Սևանա լճի ափերը, և ջրի որակական հետազոտությունների արդյունքները հասանելի են ՇՄՎՄԿ էլեկտրոնային կայքում:

Տեղեկատվությունը շրջակա միջավայրի վիճակը բնութագրող բոլոր ոլորտների և առողջության վերաբերյալ տրամադրվում է նաև **ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության** կողմից՝ տարբեր հրապարակումների տեսքով և ինտերնետային կայքում (www.armstat.am): Այսպես օրինակ, տարափոխիկ հիվանդությունների վերաբերյալ ամսեկան հաշվետվությունը հրապարակվում է Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը ներկայացնող հրապարակման մեջ:

Հասարակական և միջազգային կազմակերպությունները նույնպես իրենց կայքերում տեղադրում են տեղեկատվություն՝ իրականացված ծրագրերի վերաբերյալ: Օրինակ, Օրիուս կենտրոնների ցանցը շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրում է իր կայքի միջոցով (www.aarhus.am):

<<Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի>> ՀԿ-ն 2012թ.-ի նոյեմբերի 9-ին, Հայաստանի և Վրաստանի մասնակցությամբ կազմակերպեց տարածաշրջանային աշխատանքային հանդիպում՝ Ջրային կոնվենցիայի և <<Ջրի և առողջության մասին>> արձանագրության թեմայով: Հանդիպումն անց է կացվել ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի (ԵՏՀ) ֆինանսավորմամբ՝ <<Եվրոպայի կանայք հանուն ընդհանուր ապագայի>> կազմակերպության հետ համատեղ իրականացվող <<Իրազեկության բարձրացում ՄԱԿ-ի ԵՏՀ <<Միջազգային լճերի և անդրսահմանային ջրահոսքերի պահպանության և օգտագործման մասին>> կոնվենցիայի և <<Ջրի և առողջության մասին>> արձանագրության և դրանց խթանման ու իրագործման գործընթացում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների դերի ամրապնդման մասին>> ծրագրի շրջանակում (www.awhhe.am):

Բ. Առարկայական ոլորտին վերաբերող հիմնական խնդիրները

- Առանձին տեղեկատվություն/հրապարակում մարդու առողջության վերաբերյալ՝ կապված աղտոտված խմելու կամ լողալու ջրերի և/կամ կեղտաջրերի հետ, բացակայում է:
- Խմելու ջրի որակի վերաբերյալ տեղեկատվությունն ամբողջական չէ և քիչ հասանելի:
- Ջրահեռացման և կեղտաջրերի մշակման տեղեկատվությունը հասանելի չէ:

III. ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԸՆԹԱՑԻԿ ԵՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

IV. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

- Բարելավել տեղեկատվության մատչելիությունը մարդու առողջության վերաբերյալ՝ կապված աղտոտված խմելու կամ լողալու ջրերի և/կամ կեղտաջրերի հետ:
- Բարելավել տեղեկատվության մատչելիությունը՝ խմելու ջրի որակի վերաբերյալ:
- Բարելավել տեղեկատվության մատչելիությունը՝ ջրահեռացման և կեղտաջրերի մշակման վերաբերյալ
- Ստեղծել տեղեկատվական կենտրոն, որտեղ կկենտրոնանան ստորերկրյա և մակերևութային ջրերի, խմելու ջրի և ջրահեռացման, ջրի հետ կապված հիվանդությունների վերաբերյալ տվյալները:

Հավելվածներ

Հավելված 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻՆ

| NN | Անվանում, ընդունման վայր և տարեթիվ | Վավերացվել է ՀՀ-ի կողմից | Ուժի մեջ է ՀՀ համար |
|----|---|--|------------------------|
| | ԳԼՈՒԲԱԼ ԿՈՆՎԵՆՑԻԱՆԵՐ | | |
| 1. | «Միջազգային կարևորության խոնավ տարածքների մասին, հատկապես որպես ջրաթոշունների բնակավայր» կոնվենցիա (Ռամսար1971թ.) | 1993թ. ՀՀ-ն միացել է որպես իրավահաջորդ | 1993թ. |
| 2. | «Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին» կոնվենցիա (Փարիզ, 1972թ.) | 1993 թ. ՀՀ-ն միացել է որպես իրավահաջորդ | 1993 թ. |
| 3. | ՄԱԿ-ի «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա (Ռիո դե Ժանեյրո, 1992թ.) | 31.03.1993թ. | 14.05.1993 թ. |
| | Կարթագենյան արձանագրություն (Մոնրեալ, 2001թ.) | 16.03.2004 թ. | 29.07.2004 թ. |
| 4. | ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա (Նյու Յորք, 1992թ.) | 29.03.1993թ. | 21.03.1994 թ. |
| | Կիոտոյի արձանագրություն (Կիոտո, 1997թ.) | 26.12.2002 թ. | 16.02.2005 թ. |
| 5. | ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» կոնվենցիա (Փարիզ, 1994թ.) | 23.06.1997 թ. | 30.09. 1997 թ. |
| 6. | «Օզոնային շերտի պահպանության մասին» կոնվենցիա (Վիեննա, 1985թ.) | 28.04. 1999 թ. | 01.10.1999 թ. |
| | «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» արձանագրություն (Մոնրեալ 1987թ.) | 28.04. 1999 թ. | 01.10.1999 թ. |

| | | | |
|-----|---|-------------------------|----------------|
| | Մոնրեալի արձանագրության Լոնդոնյան ուղղում | 22.10.2003 թ. | 26.11.2003թ. |
| | Մոնրեալի արձանագրության Կոպենհագենի ուղղում | 22.10.2003 թ. | 26.11.2003թ. |
| | Մոնրեալի արձանագրության Պեկինյան ուղղում | 29.09.2008 թ. | 18.03.2009թ. |
| | Մոնրեալի արձանագրության Մոնրեալի ուղղում | 29.09.2008 թ. | 18.03.2009թ. |
| 7. | ՄԱԿ-ի «Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» կոնվենցիա (Բազել, 1989թ.) | 26.03. 1999 թ. | 01.10.1999 թ. |
| 8. | «Միջազգային առևտրում առանձին վտանգավոր քիմիական նյութերի և պեստիցիդների վերաբերյալ նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգի կիրառման մասին» կոնվենցիա (Ռոտերդամ, 1998թ.) | 22.10.2003թ. | 26.11.2003 թ. |
| 9. | «Կայուն օրգանական ադոտոիչների մասին» կոնվենցիա (Ստոկհոլմ, 2001թ.) | 22.10.2003 թ. | 17.05.2004 թ. |
| 10. | «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիա (CITES) (Վաշինգտոն 1979թ.) | 10.04.2008 թ. | 21.01.2009 թ. |
| 11. | «Միգրացվող վայրի կենդանիների տեսակների պահպանության մասին» կոնվենցիա (Բոնն, 1979թ.) | 27.10.2010 թ. | 01.03.2011 թ. |
| | ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՆԵՐ | | |
| 12. | ՄԱԿ-ի ԵՏՀ «Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային ադոտոլվածության մասին» կոնվենցիա (ժնն, 1979թ.) | 14.05.1996 թ. | 21.02. 1997 թ. |
| | - «Եվրոպայում մեծ հեռավորությունների վրա օդի ադոտոիչների տարածման դիտարկան և գնահատման համատեղ ծրագրի (EMEP) | Վավերացման փուլում է | |

| | | | |
|-----|---|----------------------|----------------|
| | երկարաժամկետ ֆինանսավորման մասին» արձանագրություն | | |
| 13. | ՄԱԿ-ի ԵՏՀ «Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիա (Էսպո, 1991թ.) | 14.05.1996 թ. | 10.09. 1997 թ. |
| | «Ռազմավարական էկոլոգիական գնահատման մասին» արձանագրություն (Կիև, 2003թ.) | 25.10.2010 թ. | 24.04.2011 թ. |
| 14. | ՄԱԿ-ի ԵՏՀ «Արդյունաբերական վթարների անդրսահմանային ազդեցության մասին» կոնվենցիա (Յեյթս, 1992թ.) | 14.05.1996 թ. | 21.02. 1997 թ. |
| 15. | ՄԱԿ-ի ԵՏՀ «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա (Օրհուս, 1998թ.) | 14.05.2001 թ. | 01.08.2001 թ. |
| 16. | ՄԱԿ-ի ԵՏՀ «Միջազգային լճերի և անդրսահմանային ջրհոսքերի պահպանության և օգտագործման մասին» կոնվենցիա (Յեյթս, 1992թ.) | | |
| | «Ջրի և առողջության մասին» արձանագրություն (Լոնդոն, 1999թ.) | Վավերացման փուլում է | |
| 17. | «Շրջակա իջավայրի փոխակերպման տեխնիկական միջոցների ռազմական կամ այլ կարգի թշնամական օգտագործումը արգելելու մասին» կոնվենցիա (Ժնև, 1976թ.) | 04.12.2001 թ. | 15.05.2002 թ. |
| 18. | Լանդշաֆտների եվրոպական կոնվենցիա (Ֆլորենցիա, 2000թ.) | 23.03.2004 թ. | 01.07.2004 թ. |
| 19. | «Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» կոնվենցիա (Բեռն, 1979թ.) | 26.02.2008 թ. | 01.08.2008 թ. |

Աղբյուր. Բնապահպանության նախարարություն, 2013թ., <http://www.mnp.am/?p=201>

ՀՀ Հազարամյակի զարգացման նպատակները
 ՀԶՆ 7. Ապահովել շրջակա միջավայրի կայունությունը

| Թիրախները | Ցուցանիշները | 1996 | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 |
|--|--|------|------|------|------|------|------|------|------|------|------|------|------|------|------|
| Թիրախ 10. Մինչև 2015 թ. կրկնակի նվազեցնել անվտանգ խմելու ջրին և կոյուղուն մշտապես հասանելիություն չունեցողների մասնաբաժինը | 30. Անվտանգ խմելու ջրին մշտապես հասանելիություն ունեցող բնակչության մասնաբաժինը, % կենտրոնացված ջրամատակարարում ունեցող տնային տնտեսությունների, % տնային տնտեսությունների ընդհանուր թվաքանակի նկատմամբ | | | | | | | | | | | | | | |
| | - <i>ընդամենը</i> | 88.1 | 87.6 | 84.7 | 84.1 | 87.3 | 88.9 | 89.4 | 91.3 | 94.1 | 97.0 | 97.6 | 97.0 | 97.5 | 96.6 |
| | - <i>քաղաքային բնակավայրերում</i> | 96.1 | 95.4 | 94.2 | 96.7 | 97.7 | 96.5 | 97.9 | 98.1 | 98.8 | 99.4 | 99.6 | 99.5 | 99.5 | 99.6 |
| | - <i>գյուղական բնակավայրերում</i> | 64.6 | 64.4 | 64.7 | 64.7 | 71.3 | 74.0 | 72.8 | 78.0 | 84.8 | 92.4 | 93.6 | 93.5 | 93.7 | 90.8 |
| | 31. Կոյուղուն հասանելիություն ունեցող բնակչության | | | | | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | | |
|--|------|------|------|------|------|------|------|------|------|------|------|------|------|------|--|
| մասնաբաժինը, % հոսող ջրով զուգարան ունեցող տնային տնտեսություններ, % տնային տնտեսությունների ընդհանուր թվաքանակի նկատմամբ | | | | | | | | | | | | | | | |
| - <i>ընդամենը</i> | 64.1 | 63.3 | 62.8 | 58.8 | 60.2 | 61.6 | 65.1 | 66.1 | 67.0 | 66.7 | 69.1 | 69.2 | 69.6 | 68 | |
| - <i>քաղաքային բնակավայրերում</i> | 83.1 | 82.2 | 80.8 | 82.2 | 84.9 | 79.0 | 83.3 | 90.1 | 90.4 | 91.1 | 63.5 | 96.1 | 96.4 | 95.9 | |
| - <i>գյուղական բնակավայրերում</i> | 12.8 | 17.7 | 24.6 | 22.5 | 22.3 | 12.8 | 17.7 | 19.1 | 21.1 | 19.0 | 21.4 | 16.4 | 17.0 | 13.0 | |

Հավելված 3

ՀՀ մակերևութային ջրերի՝ ջրօգտագործման նպատակային նշանակության կամ որակի կարգերի փոխադարձ կապերի առաջարկվող համակարգ

| Նշանակություն/ ֆունկցիա | Կարգը, ըստ որակի նշանակության | I կարգ, գերազանց | II կարգ, լավ | III կարգ, միջակ | IV կարգ, անբավարար | V կարգ, վատ |
|---|-------------------------------------|---------------------|--------------------|-----------------------|-----------------------|-------------------|
| Ազգային ջրային պաշար | | ✓ | ✓ | ✓ | ✓ | ✓ |
| Ջրահոսքերի պահպանություն | | ✓ | ✓ | - | - | - |
| Էկոհամակարգերի գործունեություն, ձկների բուծում/ պահպանում | Սաղմոնազգի ձկներ | ✓ | ✓ | - | - | - |
| | Ծածանազգի ձկներ | ✓ | ✓ | ✓ | - | - |
| Ոռոգում* | | ✓ | ✓ | ✓ | ✓ | - |
| Արդյունաբերական ջրօգտագործում | | ✓ | ✓ | ✓ | ✓ | ✓ |
| Էներգիայի արտադրություն | | ✓ | ✓ | ✓ | ✓ | ✓ |
| <p>✓ կիրառվում է, - չի կիրառվում, * ոռոգման նպատակով կիրառվում է, եթե pH-ի արժեքը չի գերազանցում 8.5, իսկ Էլեկտրահաղորդականության արժեքը փոքր է 1000 մկՍիմ/սմ:</p> | | | | | | |

Հավելված 4

Խեցգետնի գոյության համար պիտանի ջրային էկոհամակարգերի բերված
ցուցանիշներ

| Ցուցանիշներ | Խեցգետնի գոյության համար անհրաժեշտ ցուցանիշների օպտիմալ արժեքները (Федотов, 1993) | Խեցգետնի գոյության արդի պայմանները Սևանա լճում* |
|--|---|---|
| Ջրի թափանցելիություն | 1-1.5 մ | 5-12 մ |
| Թթվածնի քանակը խոշոր կենդանիների համար | 5.4-9.1 մգ/լ | 5.0-10.7 մգ/լ |
| pH | 6-10 | 7.1-9.6 |
| Ջրի կոշտություն | 5-8 ° | 5-6.5 ° |
| Ածխաթթու գազը | Մինչև 10 մգ/լ | |
| Ծմբաջրածին | 0 | 0 |
| NH ₄ ⁺ | ամռանը 1.0 մգ/լ ձմռանը 0.5 մգ/լ | 0.2-0.4 մգ/լ |
| NO ₃ ⁻ | < 40 մգ/լ | 0.02-0.17 մգ/լ |
| NO ₂ ⁻ | < 0.01 մգ/լ | 0.02-0.03 մգ/լ |
| Երկաթ ընդհանուր | 0.36-1.0 մգ/լ | 0.02-0.09 մգ/լ |
| Քլոր | Մը to 5.0 մգ/լ | |
| Կալցիումի ընդհանուր քանակը | 10-60 մգ/լ | 21-27 մգ/լ |
| Աղիությունը | Հարավային լճերի համար մինչև 3 | 0.5-0.7 գ/լ |
| Խորություն | 4-5 մ-ից ավել 10-15 մ-ից պակաս | 0.5-35 մ |
| Գրունտ | Կավ, ավազ, տորֆ, կրաքար | ավազ, տղմավազ, տիղմ |

Ջրի ազգային ծրագրի կարճաժամկետ միջոցառումների իրականացման կարգավիճակը

| Հիմնախնդիր | Կարճաժամկետ միջոցառում | Իրականացման կարգավիճակը |
|--|--|---|
| Իրավական պահանջներ | | |
| Օրենսդրական հիմքերի ներդաշնակեցում , համալրում և բարելավում | <p>1. Առկա օրենսդրական դաշտի միջբնագավառային ներդաշնակեցում և կատարելագործում՝ ներառյալ Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 121-րդ հոդվածի պահանջների իրականացման վերլուծությունը և դրանով նախատեսված գործառնությունների իրականացումը (կատարման համար պատասխանատու մարմինները)</p> <p>2. Իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու գործընթաց, ջրի ազգային խորհրդի կազմում դրանց քննարկումներն ապահովող մշտական գործող միջգերատեսչական հանձնաժողովի ստեղծում</p> | <p>ՀՀ ջրային օրենսգրքի 121-րդ հոդվածի պահանջները հիմնականում իրականացված են, դրան զուգահեռ, պարբերաբար իրականացվում է օրենսդրության միջբնագավառային ներդաշնակեցում:</p> <p>Չի ավարտվել:</p> |
| Ինստիտուցիոնալ զարգացում | | |
| Ջրային ոլորտի գերատեսչությունների դերերի և պատասխանատվությունների հստակեցում | 3. Ինստիտուցիոնալ և իրավական գնահատումների արդյունքում բացահայտված կրկնվող և բացակայող իրավասությունների և պատասխանատվությունների վերաբերյալ մշակված առաջարկությունների վերանայում և իրականացում | Չի ավարտվել: |
| Գերատեսչությունների միջև համագործակցության և համակարգման բարելավում | 4. Ջրի ազգային խորհրդի կողմից միջգերատեսչական համագործակցության և համակարգման մեխանիզմների հստակեցում և բարելավում | Ընթացքում է: |
| Ջրավազանային | 5. Ջրավազանային կառավարման մարմինների | Ընթացքում է: |

| Հիմնախնդիր | Կարճաժամկետ միջոցառում | Իրականացման կարգավիճակը |
|--|--|---|
| կառավարման մարմինների զարգացում | ինստիտուցիոնալ բարեփոխումների ծրագրի մշակում | |
| Ջրային ռեսուրսների կառավարման կարիքներ | | |
| Մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների մոնիտորինգի նոր ծրագրերի մշակում | 6. Մեկ ավազանային կառավարման տարածքի համար մոնիտորինգի համակարգի պիլոտային ծրագրի մշակում և փորձարկում | Միջնաժամկետ ծախսերի ծրագրի շրջանակում 2009թ. պետական բյուջեով իրականացվել է ծրագրային ֆինանսավորում, որը պետք է որպես մոդելային տարբերակ ծառայի այլ ավազաններում կրկնօրինակելու համար: ԵՄ «Քուռ գետի II փուլ» ծրագրի աջակցությամբ Հայաստանի Աղստև և Դեբեդ գետավազաններում առաջարկվել է ԵՄ ՁՇԴ սկզբունքներին համահունչ մոնիտորինգի ծրագիր, որը ներառում է կենսաբանական, հիդրոմորֆոլոգիական և ֆիզիկաքիմիական մոնիտորինգը: Մոնիտորինգի առաջարկվող համակարգը ներկայումս իրականացվում և փորձարկվում է Դեբեդի գետավազանում՝ ԵՄ «Քուռ գետի III փուլ» ծրագրի աջակցությամբ: |
| | 7. Մոնիտորինգի ռազմավարության և ազգային ծրագրի մշակում, մոնիտորինգի ծառայությունների տարածքային ստորաբաժանումների տեխնիկական հզորացում, կարիքների գնահատում, կառուցվածքային բարեփոխումների և տեխնիկական վերազինում, տվյալների էլեկտրոնային փոխանակման տարբերակի ստեղծում | Միջնաժամկետ ծախսերի ծրագրի շրջանակում ներկայացված ծրագրային հայտը չի իրականացվել ֆինանսավորման բացակայության պատճառով: |
| | 8. Հայաստանում ստորերկրյա ջրային ռեսուրսների մոնիտորինգի համակարգի վերականգնում | Համաձայն ՀՀ կառավարության 2005թ. սեպտեմբերի 8-ի թիվ 1616-Ն որոշման՝ ՀՀ |

| Հիմնախնդիր | Կարճաժամկետ միջոցառում | Իրականացման կարգավիճակը |
|---------------|--|---|
| | | <p>բնապահպանության կազմում ստեղծվել է «Հիդրոէրկրաբանական մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը, որը նպատակ ունի գնահատելու Հայաստանի տարածքում քաղցրահամ ջրերի ձևավորման հիմնական միտումները, դրանց քանակական և որակական հատկանիշները, ինչպես նաև տարածաշրջանային փոփոխությունները: Այդ տեղեկատվությունը պետք է ծառայի երկրի ստորերկրյա ջրային ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործմանը և պահպանությանը, ինչպես նաև ստորերկրյա ջրերի վրա բացասական ազդեցության դեմ պայքարելու միջոցառումների մշակմանը: Անբավարար ֆինանսավորման պատճառով 2006-2008թթ. ՀՄԿ-ի կողմից ստորերկրյա ջրերի մոնիտորինգն իրականացվում էր մասնակիորեն, սակայն սկսած 2009թ.-ից՝ այն իրականացվում է ամբողջությամբ: Հիդրոէրկրաբանական մոնիտորինգն իրականացվում է ջրադեբիտների, ծախսի, մակարդակի (ճնշման) և ջերմաստիճանի չափումների միջոցով: Չափումներն իրականացվում են 6 ջրավազանային տարածքի հիմնական ցանցի 70 դիտահորերից և ջրադեբիտներից:</p> |
| Ջրօգտագործման | 9. Ջրօգտագործման թույլտվությունների առկա | Ծրագիրն իրականացվել է 2009թ. պետական |

| Հիմնախնդիր | Կարճաժամկետ միջոցառում | Իրականացման կարգավիճակը |
|--|--|---|
| <p>իրավունքի ինստիտուտի կատարելագործում:</p> | <p>կանոնակարգերի կատարելագործում, ինչպես նաև ջրօգտագործման թույլտվությունների հայտերի գերակայությունների գնահատման չափորոշիչների սահմանում</p> | <p>բյուջեի շրջանակներում: Դրան զուգահեռ մշակվել և ՀՀ կառավարության կողմից հաստատվել է «Ջրօգտագործման թույլտվության օրինակելի ձևաթուղթը և ջրօգտագործման թույլտվության ձևերը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2003թ. մարտի 7-ի թիվ 218-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2011թ. մայիսի 12-ի թիվ 677-Ն որոշումը, որի կիրարկումը նպաստում է թափանցիկ և տեղեկատվության վրա հիմնված որոշումների կայացմանը, ինչպես նաև ապահովում է ջրօգտագործման թույլտվությունների արդյունավետ ու դյուրին կիրառվող համակարգի ստեղծմանը:</p> |
| | <p>10. Շրջակա միջավայրի վրա հնարավոր զգալի ազդեցություն ունեցող ջրօգտագործման թույլտվությունների հայտերի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման չափանիշների և ուղեցույցների մշակում</p> | <p>Օրագիրն իրականացվել է 2009թ. պետական բյուջեի շրջանակում: Դրան զուգահեռ մշակվել և ՀՀ կառավարության կողմից հաստատվել է. 1. «Ըստ Հայաստանի Հանրապետության ջրավազանային տարածքների՝ խմելու-կենցաղային, գյուղատնտեսական նպատակներով ջրի պահանջարկի, ինչպես նաև բնապահպանական թողքերի գնահատումների սահմանելու մասին» ՀՀ կառավարության 30.06.2011թ. թիվ 927-Ն որոշումը,</p> |

| Հիմնախնդիր | Կարճաժամկետ միջոցառում | Իրականացման կարգավիճակը |
|---|---|---|
| | | <p>2. «Արդիական տեխնոլոգիական կիրառման, ջրային ռեսուրսների մոնիտորինգի բարելավման և աղտոտման նվազեցման ու կանխման միջոցառումները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 14.01.2010թ. թիվ 118-Ն որոշումը:</p> <p>Որոշումներով կարգավորվում են ոլորտների ջրօգտագործման ազդեցության (քանակ, որակ) գնահատման անցկացումը և սահմանվում է ջրային ռեսուրսների անվտանգ էկոլոգիական վիճակի պահպանման բնապահպանական թողքերի մեծությունների գնահատման մեթոդաբանությունը:</p> |
| Պետական ջրային կադաստրի վարման ինստիտուտի կատարելագործում | 11. Ջրային պետական կադաստրի կարճաժամկետ ծրագրի մշակում և իրականացում՝ ներառյալ ջրային ռեսուրսների կողավորման համակարգի մշակում և ներդրում, պետական ջրային կադաստրի վարման արդի մեխանիզմների ստեղծում և ներդրում, ինչպես նաև ջրային ռեսուրսների կողավորման համակարգերի մշակում և ջրային ռեսուրսների կողավորում | <p>ՀՀ Ջրի ազգային ծրագրի պահանջներին համապատասխան 2007-2010թթ. բյուջետային ծրագրային ֆինանսավորման շրջանակում իրականացվել են ջրային պետական կադաստրի վարման կարճաժամկետ ծրագրեր՝ ջրային պետական կադաստրի վրա հիմնված ԱՏՀ ստեղծմամբ, որը ներկայումս օգտագործվում է որպես տվյալների պահպանման և տրամադրման, ինչպես նաև ջրային ռեսուրսների իրականացված կողավորմամբ գետավազանների բնութագրմամբ տեղեկատվական գործիք:</p> <p>Կադաստրի տեղեկատվական համակարգի ստեղծմանն օժանդակելու համար,</p> |

| Հիմնախնդիր | Կարճաժամկետ միջոցառում | Իրականացման կարգավիճակը |
|---|---|--|
| | | <p>աշխատանքներ են նախաձեռնվել նաև ԱՄՆ ՄՁԳ-ի կողմից ֆինանսավորվող «Հայաստանի ջրային ոլորտի ինստիտուցիոնալ և օրենսդրական հզորացում» ծրագրի շրջանակում: Նախաձեռնությունն ուղղված էր Հայաստանում ջրային հարաբերություններում ներգրավված հիմնական գերատեսչությունների մասնակցությանը՝ ՋՊԿ-ի տվյալների բազայի ստեղծման, դրանց տրամադրման ու փոխանակման հարցերին:</p> |
| <p>Ջրային ոլորտի կառավարման գործընթացում հասարակության իրազեկման և մասնակցության բարելավում</p> | <p>12. Հանրապետական և ջրավազանային կառավարման տարածքների մակարդակներում ջրային ռեսուրսների պլանավորման և կառավարման վերաբերյալ հասարակության տեղեկատվության և մասնակցության ապահովում</p> | <p>Չի ավարտվել:</p> |
| | <p>13. Ավազանային հասարակական խորհուրդների զարգացման ռազմավարության մշակում և իրականացում, ավազանային հասարակական խորհուրդների տեխնիկական հզորացում</p> | <p>Չի ավարտվել:</p> |
| <p>Ջրի ազգային ծրագրի իրականացում – վերահսկողություն</p> | <p>14. ՀՀ ջրի ազգային ծրագրի իրականացման և թարմացման շարունակական մոնիտորինգի և գնահատման իրականացում</p> | <p>Չի ավարտվել:</p> |
| | <p>15. Ծրագրի իրականացման վերահսկողության համակարգի ստեղծում</p> | <p>Չի ավարտվել:</p> |

| Հիմնախնդիր | Կարճաժամկետ միջոցառում | Իրականացման կարգավիճակը |
|--|--|--|
| <p>Ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման պլանների մշակում</p> | <p>16. Ջրային ռեսուրսների կառավարման գործակալությունում և ջրավազանային կառավարման մարմիններում հզորությունների ստեղծում ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման համար</p> | <p>Եվրոպական հաճնաժողովի, Գլոբալ էկոլոգիական ֆոնդի և այլ դոնորների կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակում մի շարք ուսումնական ճամփորդություններ են կազմակերպվել եվրոպական երկրներ, ինչպես նաև վերապատրաստման դասընթացներ են անցկացվել:</p> |
| | <p>17. Մեկ ավազանային կառավարման տարածքի համար պիլոտային ջրավազանային կառավարման պլանի մշակում և տեղեկատվական կարիքների բացահայտում</p> | <p>ԱՄՆ ՄՁԳ-ի, ԵՄ-ի, ԳԷՖ-ի և այլ դոնորների աջակցությամբ 2008-2012թթ. Մարմարիկի, Մեդրիգետի, Դեբեդի, Ադսոնի գետավազանների համար մշակվել են գետավազանային կառավարման պլաններ: Իսկ Արփա Որոտան Ախուրյան և Մեծամոր գետավազանների կառավարման պլանների մշակումը ընթացքում է և կավարտվի 2013-2015թթ.: Դրանց մեծ մասը նաև բացահայտել է տվյալներ և տեղեկատվության էական բացեր, որոնք անհրաժեշտ են ԵՄ ՁՇԴ սկզբունքներին համահունչ ԳԿՊ մշակելու համար:</p> <p>ԵՄ ջրային նախաձեռնության շրջանակում Մարմարիկի գետավազանի օրինակով մշակվել է «Ջրավազանային կառավարման մոդելային պլանի բովանդակությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության արձանագրային նիստի որոշման նախագիծը, որը հաստատվել է 2011թ. փետրվարի 3-ի թիվ 4</p> |

| Հիմնախնդիր | Կարճաժամկետ միջոցառում | Իրականացման կարգավիճակը |
|--|---|---|
| | | որոշմամբ: Այն հիմք կհանդիսանա վեց ջրավազանային կառավարման պլանների տեխնիկական բնութագրերի կազմման և պլանների մշակման համար: |
| Մևանա լճի գործողությունների պլանի իրականացում | 18. «Մևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների» տարեկան և համալիր ծրագրի վերանայում և բարելավում | Ընթացքում է: |
| Ջրային ռեսուրսների և ջրային պաշարների բաղադրիչների գնահատում | 19. Ջրային ռեսուրսների և ջրային պաշարի բաղադրիչների արդիական բնութագրերի ճշգրտում | |
| | <i>ա) մակերևութային բնական վերականգնվող հոսքի քանակական և որակական տարածաժամանակային բնութագրերի ճշգրտում՝ հաշվի առնելով վերջին չորս տասնամյակի ընթացքում կուտակված քանակական և որակական մոնիտորինգի տվյալները, հոսքի վրա կլիմայի փոփոխության և մարդածին ազդեցությունները</i> | Միջնաժամկետ ծախսային ծրագրի շրջանակում իրականացվել է ծրագրային ֆինանսավորում 2009թ. պետական բյուջեով: |
| | <i>բ) մակերևութային և ստորերկրյա ջրային պաշարների տարանջատված գնահատման հստակեցում, խորքային հոսքի ճշգրտում</i> | Զի ավարտվել: |
| <i>գ) հիմնական գետերի նվազագույն էկոլոգիական թողքի որոշման մեթոդների մշակում և հաշվարկ</i> | ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 30-ին «Ըստ Հայաստանի Հանրապետության ջրավազանային տարածքների՝ խմելու-կենցաղային, գյուղատնտեսական նպատակներով ջրի պահանջարկի, ինչպես նաև բնապահպանական թողքերի գնահատումների սահմանման մասին» 927-Ն որոշումը ներառում է | |

| Հիմնախնդիր | Կարճաժամկետ միջոցառում | Իրականացման կարգավիճակը |
|---|--|---|
| | | <p>թողքի որոշման և հաշվարկի մեթոդ, սակայն իրականում դա էկոլոգիական թողք չէ, այլ սանիտարական կամ հիդրոլոգիական, և որևէ պահանջ չի ներկայացնում ջրի որակին:</p> <p>Չի ավարտվել:</p> |
| <p>Ջրի որակի ապահովման նորմերի սահմանում և իրականացում</p> | <p>20. Ջրային ռեսուրսների վրա ազդեցությունը սահմանափակող նորմերի ու ջրի որակի ապահովման նորմերի սահմանման միջազգայնորեն ընդունված մեթոդաբանության համապատասխանեցում և ներդրում՝ հաշվի առնելով միջազգայնորեն ընդունված մոտեցումները</p> | <p>ՀՀ կառավարությունը 2011թ. հունվարի 27-ին ընդունեց «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» թիվ 75-Ն որոշումը, որը հիմնվում է միջազգայնորեն ընդունված մեթոդաբանության վրա և գնահատվում է որպես բավականին առաջադեմ փաստաթուղթ:</p> |
| <p>Ջրաէկոհամակարգերի պահպանման գոտիների սահմանում և պահպանում</p> | <p>21. Ջրաէկոհամակարգերի պահպանման գոտիների սահմանման մեթոդաբանության մշակում՝ ներառյալ հոսքի ձևավորման գոտիները, ստորերկրյա ջրերի պահպանման գոտիները, ջրապահպան գոտիները, էկոտոնը, ջրային ավազանում արտակարգ էկոլոգիական իրավիճակի և էկոլոգիական աղետի գոտիները, անօտարելի գոտիները</p> | <p>Մշակվել և ՀՀ կառավարության կողմից 2005թ.-ի հունվարի 20-ին հաստատվել է «Ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների մասին» ՀՀ կառավարության թիվ 64-Ն որոշումը:</p> |
| <p>Արարատյան</p> | <p>22. Արարատյան դաշտի նախկինում չորացվող</p> | <p>Չի ավարտվել:</p> |

| Հիմնախնդիր | Կարճաժամկետ միջոցառում | Իրականացման կարգավիճակը |
|---|--|--|
| <p>դաշտի նախկինում չորացվող գյուղատնտեսական հողերի կարգավիճակի ուսումնասիրություն</p> | <p>գյուղատնտեսական հողերի օգտագործման ծրագրերի մշակում և իրականացում</p> | |
| <p>Ջրերի ռազմավարական պաշարների ավելացում և գետային հոսքի կարգավորում</p> | <p>23. Ջրամբարաշինարարության հեռանկարային հայեցակարգով նախատեսված աշխատանքների իրականացում</p> | <p>Չի ավարտվել:</p> |
| <p>Ջրերի որակի կառավարման իրականացում</p> | <p>24. Ջրերի որակի կառավարման ռազմավարության մշակում</p> | <p>Մշակվել և ՀՀ կառավարության կողմից 2011թ.-ի հունվարի 27-ին հաստատվել է «Կախված տեղանքի առանձնահատկություններից յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության թիվ 75 որոշումը:</p> <p>Սահմանվել են վեց ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրային ռեսուրսների ջրի որակը վատթարացնող բոլոր հավանական աղտոտող նյութերի թույլատրելի սահմանները՝ կախված տեղանքի առանձնահատկություններից:</p> |

| Հիմնախնդիր | Կարճաժամկետ միջոցառում | Իրականացման կարգավիճակը |
|--|---|---|
| | | <p>Ջրի որակի ապահովման նորմերը մշակված են բոլոր գետավազանների համար՝ հաշվի առնելով ԵՄ Ջրի շրջանակային դիրեկտիվի պահանջները և հանրապետության հիդրոմորֆոլոգիական, հիդրոաշխարհագրական, հիդրոֆիզիկական, բնապահպանական և այլ առանձնահատկություններ:</p> <p>Միաժամանակ, Ազգային քաղաքականության երկխոսության շրջանակում 2011թ.-ին մշակվել է Հրագրանի գետավազանում էկոհամակարգային ծառայությունների վճարների (ԷԾՎ) ներդրման սխեմա, ինչը Հայաստանում իրականացվում է առաջին անգամ: Ըստ այդ սխեմայի, ԷԾՎ կիրառման համար առաջարկվում է միավոր աղտոտվածության համար սահմանել դրույքաչափ՝ ելնելով «աղտոտողն է վճարում» սկզբունքից:</p> |
| Տարածքային պլանավորման չափանիշների և ուղեցույցների սահմանում | 25. Տարածքային պլանավորման ներկա մոտեցումների վերանայում և բարելավում | Չի ավարտվել: |
| Անդրսահմանային ջրային | 26. Անդրսահմանային ջրային ռեսուրսների կառավարման ծրագրերի մշակում | Որևէ ծրագիր դեռևս չի մշակվել, սակայն Հայաստանն ակտիվորեն մասնակցում է |

| Հիմնախնդիր | Կարճաժամկետ միջոցառում | Իրականացման կարգավիճակը |
|---|---|--|
| Ռեսուրսների կառավարում | | տարածաշրջանում ջրին առնչվող բոլոր անդրսահմանային ծրագրերին և նախաձեռնություններին: Ի լրումն ծրագրային նախաձեռնությունների, տեղի է ունենում մակերևութային ջրերի որակի մշտական մոնիտորինգ Իրանի հետ: |
| Ջրային համակարգերի կառավարման կարիքներ | | |
| Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների բարելավում | 27. Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների (խմելու-կենցաղային ջրամատակարարում, ոռոգում, հիդրոէներգետիկա և այլն) իրականացման ուսումնասիրություն և դրանց մատուցման բարելավմանն ուղղված ծրագրերի մշակում և իրականացում | Մի շարք հետազոտություններ են իրականացվել միջազգային դոնոր կազմակերպությունների և ֆինանսական հաստատությունների կողմից՝ ներառյալ Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալությունը, Համաշխարհային բանկը, Ասիական զարգացման բանկը, ՏՀԶԿ-ն, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը և այլ կազմակերպություններ, որոնք համակարգվել են ջրային տնտեսության պետական կոմիտեի կողմից: Նման հետազոտությունների արդյունքներն օգտագործվել են ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող օպերատորների կողմից: |
| Հիդրոտեխնիկական կառուցվածքների | 28. Հիդրոտեխնիկական կառուցվածքների անվտանգության ապահովման և շահագործման հուսալիության միջոցառումների իրականացման արդյունավետության | Չի ավարտվել: |

| Հիմնախնդիր | Կարճաժամկետ միջոցառում | Իրականացման կարգավիճակը |
|-------------------------|--|---|
| անվտանգության ապահովում | բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակում | |
| | 29. Պետական նշանակության հիդրոտեխնիկական կառուցվածքների շահագործման և պահպանության համար պատասխանատուների հստակեցում | Համատեղ միջոցառումներ են իրականացվում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության և ՋՏՊԿ-ի կողմից: |